



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

(S. 23)

7



9(91.542)  
ԱՏ-76

Հ Ա Յ

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը  
Ռ Ո Ւ Ս Ի Ա Յ Ո Ւ Մ



Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Վ Ա Բ Ե Ր Ա Թ Ղ Թ Ե Ր Ո Վ

Է — Ժ Ը Դ Ա Բ



Գ Բ Ե Յ

Հ Ա Յ Կ Տ Է Ր Ա Ս Տ Ո Ւ Ա Ճ Ս Տ Ր Ե Ա Ն Յ



Պ Ա Ր Ի Ս

Բ ա զ մ ա շ Ե զ ու շ ա ն Տ Գ յ ա ռ ա ն Բ ա ա ճ ա շ Ե ա ն ի  
Յ . Ս Ի Մ Ա Ր Փ Ո Ղ Ո Ց

1906

06 APR 2010

38(47.925)

S-37

4

ՀԱՅ

# ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

## ՌՈՒՍԻԱՅՈՒՄ



ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԱԻԵՐԱԹՂԹԵՐՈՎ

Է - ԺԸ ԴՈՐ



Գ Ր Ե Յ

ՀԱՅԿ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆՑ



Պ Ա Ր Ի Ս

Բազմապատկերված Տպարան Բարակցականի

3, ՍԻՄԱՐ ՓՈՂՈՑ

1906

21337

1005 974 AUG 2013

21. 185

ՀԱՅ ԳԱԺԱՌԱԿԱՆՈՐԹՐԵՆԸ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ



ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ

ՀԱՅ ԳԱԺԱՌԱԿԱՆՈՐԹՐԵՆԸ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ



ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ



ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ

ՀԱՅ ԳԱԺԱՌԱԿԱՆՈՐԹՐԵՆԸ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ

ՀԱՅ ԳԱԺԱՌԱԿԱՆՈՐԹՐԵՆԸ


ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԻՄ

Այս վերջին մի քանի դարերի պատմութեամբ զբաղուողն անշուշտ նկատել է, որ Հայերը քաղաքական ինքնուրոյնութիւնը կորցնելով հանդերձ դարձեալ պատմական մի ազգ են կազմել եւ թէ՛ եւրոպական եւ թէ՛ ասիական պետութիւններում որոշ, յարզի եւ աչքի ընկնող գերխաղացել: Հայկական ազգի բնիկը՝ այս պատմական եւ գործնական կեանքի մասին մեզ շատ քիչ բան են տալիս, բայց կան ազբիւրներ ուսելուով, որոնք շատ հարուստ են եւ թանկագին մեր ազգի նոր պատմութեան համար:

Անցեալ դարու «կղերց մինչեւ կէսը, մինչեւ 50-ական թուականները, լոյս տեսան մեր պատմութեան վերաբերեալ բազմաստիակ վաւերագրեր, որոնց հեղինակները ուսւ եւ կամ այլ ազգից էին, իսկ միւս կէսում այդ ուղղութիւնը՝ կարելի է ասել՝ հետզհետէ հանդաւ, եթէ հաշուի չտանենք կովկասեան Հնագրական Ընկերութեան նախագահ Բերժէի խմբագրութեամբ կազմուած բազմահատոր «Արձանագրութիւնները» (Ակսի առիւթով, Կոնստանդուպոլիս), որի մէջ գրուած են ժԹ-րդ դարու Հայոց պատմութեան վերաբերեալ վաւերագրութիւնները: Ես մտադրուել եմ ժամանակի ընթացքում հայերէնի փոխել բոլոր այդ ուղղութեան յօդուածները, թղթերը, առանձին ժողովածու կազմելու համար, որպիսիք են մեր մէջ արժ. Տէր Գրեա Ա. քահանայի թանկագին «Դիւանները», եւ լրացնել հայկական դիւանի պակասը:

Հ. Տ. Ա.



ՔԼՈՒԽ Ա.

Գաղթականութիւնն եւ գաղթականութիւնն, ահա այն կործանիչ տարրը. որ իր անխիղճ ճիրաններում քամել ոչնչացրել է հայ ժողովրդի տունը, տեղը, սիրտը, արիւնը եւ դեռ ոչնչացնում է շքնշուած, նեղուած չորս կողմից Հայոց երկիր թափուող վայրենարար թշնամիներից, հայ ժողովուրդն իր ազգային ինքնութիւնը կորցրնելուց յետոյ՝ ստիպուած էր թողնել ինչ որ իրն է, սեփականն է, ազգայինն է եւ գնալ ընկնել օտարի գերի, այնտեղ միայն որոնելով հանգիստը: Հայն մինակ չէր դնում, նա վերցնում էր իր հետ իր բնտանիքը եւ պապական դաւադանը ձեռքին արագ արագ փախչում՝ հեռանում հայրենիքից ճիշտ այնպէս ինչպէս Առաջին Սոցիալ-Դեմոկրատիկ Մարտի կամենաք ասացէք, միեւնոյնն է, հայ գաղթականին կը գանձք վանցի չոլախը Չինաստանն է հասել, կարծեմ փաստեր աւելորդ են:

Հիւրընկալող երկիրը միշտ բարի չէր դէպի այդ խեղճերը, եւ մի կրակից փախչողը շատ անգամ ընկնում էր աւելի թեժացած կրակի մէջ, այրում, ոչնչանում, մոխիր դառնում եւ դարերից յետոյ հասած անշունչ յիշատակարանը միայն վկայում էր, որ Հայկեան ազգից մի խեղճ էլ այդ տեղ է ընակուել:

Մենք ունենք մեր ազգի ցաւալի գաղթականութեանց պատմութիւնը: Կլանող երկիրը Լեհաստանն է, ուր Տէր Պողոսեանը Տէրպոլովսկու փոխուեցաւ, Յովհաննիսեանն էլ Եանովսկու, Վանովսկու եւ Իվանովսկու: Էլ չենք խօսում Տէրմիկելովիչների եւ Տէր Մկրտիչովիչների մասին...

Հարեւանցի կերպով ասենք, որ հայ գաղթականները մեծ մասամբ դիմեցին Լեհաստան եւ այնտեղ էլ ոչնչացան: 1350 թ. երբ Կազիմիր երրորդ Լեհաց թագաւորը տիրապետեց Լեմբերգ կամ Իլվով քաղաքին, գովելով հայ վաճառականների առեւտուրը՝ կրօնի ազատութիւն չնորհեց նրանց, սակայն Հայն Հայի տակը փորեց եւ Նիկոլ եպիսկոպոսը, որ աւելի յետագայ ժամանակներումն էր ապրում, կարողացաւ ոչնչա-

ցընել իր հաւատակից ազգակիցներին: Այս մասին թող խօսէ «Բանի միութեան» հեղինակը. սակայն ես յիշեցի այս, որպէս զի գիտնեանք, որ Լեհաստանը Հային վրասեց, ուրեմն եւ անհիւրընկալ չը գանուելով հանգերձ, իր միջնորդութեամբ խեղդեց Հայութեան հաւատոյ ուղին ու ծուծը եւ ստեղծեց աւելի ջերմեանց մի լեհահայ համայնք:

Սակայն այդքան անխիղճ չէր Ռուսիան: Իօան Ասատուրոյի երկիրն աւելի բարեխիղճ գանուեցաւ:

Ե՞րբ մասն Հայերը Ռուսաց երկիր, — մենք չը գիտենք, միայն այսքան ասենք, որ ՓԱ. գարու մասնագիր Արիտասկէս Լաստիվերացին ճանաչում է «Բուրգ» ազգին:

Հայն եղել է միշտ ճարտար վաճառական եւ կը լինի, քանի որ նա գոյութիւն ունի. ահա՛ գաղթականներն իրենց կեանքն անց են կացրել այդ ստպարիզում եւ շատ երկիրներում արածուելութիւններ ստացել, այդ երկիրներից մէկն էլ Ռուսիանն է, որտեղ մեր պապերը մեծ դեր են խաղացել: Տեսնենք ի՞նչ ճանապարհներով:

Մեր մասնագիրներն յաճախ ասում են ազգ եւ երկիրն Բուրգարաց: Այս երկիրը գտնուում էր հին Հայաստանի հիւսիսային կողմ, եւ գիտնական աշխարհն արդէն որոշել է այդ երկրի տեղը. դա այն երկիրն է, որ մի ժամանակ կոչւում էր Վոյգար եւ բնակիչներն էլ Վոյգարներ, որոնք բնակւում էին Վոյգա գետի ափերի մօտ այժմեան Աստրախան եւ Կազան քաղաքների միջեւ: 370 թ. այդ երկիրն ենթարկուեցաւ Գոթաց յարձակման, իսկ 390 թ. Հոններն ողողեցին այդ երկիրը եւ երկար մնացին այդտեղ իբրեւ տիրապետող տարր: Հայերը երկար ժամանակ գործ ունեցան այդ ազգի հետ եւ երեսի հէնց հնամեն գաղթիցին: Այս դէպքում պէտք է կարծել, որ Հայերը Ալանաց երկրով շօրայ պահելով դուրս են գնացել գէպի Բուրգարիա կամ Վոյգարաց երկիր եւ այնտեղ մնացել: Ռուս պատմարան Կարամզինն ասում է, որ Վոյգայի Բուրգարների հին մայրաքաղաքի տեղակայութեամբ բազմաթիւ հայ արձանագրութիւն կրող գերեզմաններ են գտնուած, որոնցից մի քանիսը Չ. եւ Թ. գարուն են վերարձուած. մի եւ նոյն տեղ գտնուած են նաեւ հայկական գրամներ: Եոյն պատմարանի ասելով «90 վերտա կազան քաղաքից հետո, Վոյգայից 9 վերտա՛ն վրայ գտնուեցան Թ. գարու հայկական արձանագրութիւններ, հաւանականաբար Հայերը, որոնք վաղուց հեռէ հոչակուած են վաճառականութեամբ, պայտական եւ այլ տեսակ ապրանքներ փոխանակում էին սուսական մորթու եւ այլ կաշիներէ հետ: Այս արձանագրութիւնները 1722 թ. կազանցի հայ Յովհաննէս Բարսեղեանը թարգմանեց Պետրոս Ա. արքայի համար:»

1062 թ. Մեծ իշխանների հրովարակներով կանչուած էին Հայեր, որոնք կոչւում էին «Նամեխսքի», որպէս զի օգնեն կիււի երկրին Լեհերին դուրս քշելու: Սրանք կանչուած էին այն պայմանով, որ երեք

տարուց յետոյ արձակուրդ պիտի ստանային եւ ազատ իրաւունք ունե-  
նային Ռուսաց երկրում բնակուելու. ըստ իրենց ցանկութեան: Ռուս  
հայագէտ պատմաբան Ս. Ն. Գլինկին իր երկհատոր « Հայոց Պատմու-  
թեան ակտուսթիւն » գրքումն (այս Մոսկուա 1833 թ.) ասում է, որ ժա-  
մանակն ոչնչացրել է այս կոչական եւ արտօնատուր հրովարակի իս-  
կականը եւ մնացել է միմիայն հայերէն թարգմանութիւնն (°):

Կարմիր ասելով « Վարդմիր Մոնոմախի (1113-1125 թ. էր իշ-  
խում) ժամանակ Կիւեւում իրենց հմտութեամբ նշանաւոր էին հայ բը-  
ժիշկները »:

Մի ուրիշ անգ. « Նովգորոդեան իշխանութեան պետ Ալէքսանդր Ա-  
բակումովիչը (1367 թ.) կտորեց բազմաթիւ թաթարներ, Հայեր... »

Ս. Ս. Բոգուչը իր « Տարիոյ պատմութեան » մէջ (այս Ս. Պետերբուրգ  
1806 թ. հատոր Բ. էջ 176-177) մի յիշատակութիւն է անում. — Երբ  
թաթարները օրհեցին 1262 թ. Հայաստանին, զաղթեցրին բազմաթիւ  
բնակիչներին Ասորասանի եւ Կազանի միջեւ ընկած երկիրներ. այս-  
անգ սրանք երկար տանջուելով սկսեցին դիմումներ անել Քաֆֆայի  
գաղթականներին խնդրելով թոյլտուութիւն, որ իրենք էլ նրանց մօտ  
բնակութիւն հաստատեն: Նրանց տեղափոխելին Ղարասու-Բազար եւ  
Սուգաղի միջեւ. տեսարաններն ու արհեստաւորներն տեղաւորուե-  
ցան Հին Ղրիմում, որը իրանց լեզուով Ղազարաթ անուանեցին. Քաֆ-  
ֆայումն էլ բնակութիւն հաստատեցին եւ այնտեղ իրենց բնակավայր  
թաղը ամուր պարիսպներով պատեցին, որպէս զի պատասպարուեն թա-  
թարաց արշաւանքներից: Մի ուրիշ անգ էլ ասում է (Բ. հատ. էջ 403).  
— Հայերը Արարատեան լեռան Հոգեւոր Վարչութեան իրաւասութեան  
ներքոյ էին. նրանք քրիստոնեաների մէջ ամենաբազմաթիւ տարր էին  
կազմում եւ ունէին երկու եպիսկոպոս առաջնորդ, որոնք նշանակուում  
էին Կ. Պօլսի Հայոց Պատրիարքի կողմից: Դրանցից մէկը կատարում  
էր Քաֆֆայի արեւելեան երկրում մինչեւ Չերքիցոյ Կէնի քաղաքը եւ  
ղած Հայերի եկեղեցիները, իսկ միւսը թեմը Բախչի-Սարայից մինչեւ  
Դնեսար դեպի վրայ եղած Կաւչան, այսինքն Ղրիմի ամբողջ արեւմը-  
եան մասը:

Մենք խկապէս առաջ ընկինք այստեղ այն յիշատակագրութիւններ,  
որոնք վերաբերում են այժմ Ռուսաց հովանաւորութեան տակ գտնուած  
երկիրներին: Այստեղից մենք այն եզրակացութեան ենք գալիս, որ  
Հայերը վաղուց արդէն յարաբերութիւն են ունեցել շրիստականների  
հետ, որին ապացոյց են նաեւ մեր մատենագիրները վկայութիւնները,  
862 թ., այն է թ. դարում արդէն երեւոյց ռուս ազգը եւ հետզհետէ տա-  
րածեց իր հզօր թեւերը դէպի հեռաւոր Սիբիրը, Կովկասը, Ասիայի  
խորքերը... եւ աւելի ու աւելի ծանօթացաւ Հայութեան հետ, մինչեւ  
որ 1827-ին « Հնչեց Ռուսաց զէնքը Արարատի քարձուներին վրայ եւ

Հայաստանի ողին ռուս զինուորիկներին օգնութեան հասաւ »: 1709 թ.,  
Հայերը գրում էին Պետրոս Մեծին. « Արիք զօրջուլ եւ մենք կապրու-  
տամբուենք, ռաի կեղնենք »: Հայերը կատարեցին իրենց խօսքը, մի-  
այն Ռուսաց զօրքը ուչ եկաւ — հազիւ 100 տարուց յետոյ:

ԳԼՈՒԽ Բ.

Մենք խօսեցինք Բուլղարների մասին, եւ պէտք է դրանց երկրում  
որոնենք մեր ուղածը, որովհետեւ այդ երկիրն է միջնորդի դեր խա-  
ղացել:

Երբ Բագրատունեաց հարստութիւնը կորցրեց իր թագը, երկիրն  
աւերուեցաւ, եւ նենք Յոյներից ստակոխ եղած երկիրն Ալփ-Ասլանի  
արշաւանքով վերջնականապէս թշուառացաւ եւ Հայն զարձեւալ ստիպ-  
ուած եղաւ զաղթելու, նա ինքն էլ չը գիտեր ո՛ւր գնար: Բազդի ձեռ-  
քին խաղալիկ եղած Հայերը դէպի հիւսիս եւ հարաւ-արեւմուտք դի-  
մեցին:

Անիի վերջին կործանման համար Ղազար Զսկեցին ասում է, որ  
նա կործանուեցաւ չարմից, որովհետեւ այդպէս էր անիձեղ Յովհաննէս  
Երզնկացին, բնակիչները փախան Ջուղայ, Կասպից ծովկղզեայ քաղաք-  
ներ, Վան, Սիս, Աղ-Սէրայ, որ Աժտէրխանի մօտ է. Բէֆէ եւ այլն:  
Աբրահամ Կրետացի պատմաբան կաթողիկոսն իր « Պատմութիւն Անի քա-  
ղաքին » յօդուածում ասում է Յովհաննէս վարդապետի համար. « Ել ՚ի  
վերայ բարձր բլրի միոյ՝ եւ անէժ զքաղաքն, եւ կրկնեաց ծուեր ան-  
լով եւ ասէ. Տէ՛ր, այլ ոչ լինիմ երաշխաւոր, այսու հետեւ զոր ինչ  
կամիս՝ այնպէս արա »: յանկարծ, ասում է, « Էջ սաստիկ բարկութիւնն  
Աստուծոյ եւ սկսաւ քաղաքն չարմիլ՝ եւ տապալել պարիսպքն, եւ զայն  
տեսեալ՝ հազճեաց ամենայն ոք ընթացմամբ՝ փոյթ ընդ փոյթ բուռն  
հարեալ ամենայն ոք ՚ի ձեռաց ընտանեաց եւ զաւակաց ի բնանց, եւ  
տարաղէպ կեալ վտարեցան, թողլով զքաղաքն եւ զհիկեղեցիսն եւ զու-  
կեղօժ պալատն եւ զճաղկաւէտ զաչաս իւրեանց, գնացին որպէս փա-  
խըստական, ձեղքեալ կէտքն ՚ի ձուղայ, եւ կէտքն առ եզերս Կասպից  
ծովուն, եւ ոմանք ՚ի Վան եւ այլքն ՚ի Սիս, իսկ այնք՝ որ անցին ընդ  
ծովն Կասպից՝ գնացեալ յարեցան յազգն Նիտողաց, որ է Մսգուց, զոր  
թաթար ասին, եւ առեալ հրաման ՚ի թաթար խանէն, բնակեցան ի Աղ-  
աւրայ կոչեցեալ վայրի, որ մերձ է Աժտէրխանու... » (Տես Աբրահամ  
Կրետացի, սպ. էջմ. 1870 թ. էջ 108-109): Այս կործանումը սովորա-



բար ընդունում են 1319-1320 թուականին, ուրեմն եւ այդ թուականներին Հայերն անցել են Ասորախան: Ասորախանում այրուած « Բերականութիւն Հայկայ լեղութիւն » գրքի յիշատակարանում (այս. Ասոր. 1798 թ.) ասուած է. « Բազմութիւն Հայ ազգի բնակչաց Անուոյ, զիրուցան եղեալ յերկրէն իսրեանց 'ի սար աշխարհ, բազումք ի նոցանէ եկեալ նստան 'ի կողմանս երկրին Ափղերխանու եւ գտեալ անդ զայլ եւս Հայս 'ի բազմաց հետէ եկեալս, բնակեցան աստ եւ յայսմիկ աշխարհի »: Համարեա՛ մի եւ նոյն խօսքերն են գրուած եւ Տփլսում 1846 թ. հրատարակուող « Կովկաս » կաղէթայի N<sup>o</sup> 46ում. էջ 178:

Այսակերպ երեւում է, որ վերջին գաղթականութիւնները կեղծորեն Ասորախանն էր: Այս նահանգը հնումը մերթ այս եւ մերթ այն վայրերն ու կիսավայրերն ազգերի ձեռքին է եղել եւ սարքերաբար այս ու այն ազգի յարձակման եւ ասպատակման է ենթարկուել: Այդ նահանգի գլխաւոր քաղաքն կոչուած էր Ասէլ (տես սուս. Ջիւնուրական Հանրագիտական հատոր Ա. էջ 619. այս. Պէտերբուրգ 1852 թ.): Թ. դարու վերջումը այժմեան Ասորախանի նահանգը երեք ազգերի մէջ էր բաժանուած. Վօլգայի աջ ափը մինչեւ Մանըիչա գետը Սաղարներին էր պատկանում. այս գետի ձախ ափի երկիրը եւ Կասպից ծովից մինչեւ Ուրալ եղած երկիրը պատկանում էր Սվալիսաններին, իսկ աւելի հիսսիս Վօլգայի ափերը՝ Պէչէնէգներին: Թաթարաց կամ Մոնղոլաց արշաւանքների ժամանակ Ասորախանը մի տեսակ արշաւախմբերի կիցքի գերը կատարեց եւ վերջ ի վերջոյ Թաթարները բնակութիւն հաստատեցին Վօլգայի ափերի վրայ եւ հիմնեցին Կազան քաղաքը, նորոգեցին Ասէլ քաղաքն եւ կոչեցին Աստորականի:

Հայերը հետզհետէ գալով այդ երկրումը բնակուելու նպատակով շատ մեծ արգելքների հանդիպեցան, որովհետեւ իշխող Թաթարները շատ էին նեղում նրանց եւ վերջապէս գլխաւորն այն էր, որ վաճառականութեան համար յարմարութիւններ չըկային, իսկ Հայերի միակ պարագմունքն այդ էր, ուստի եւ այդ անտանելի լծին չը գիմանալով 1331 թուականին չուեցին Ասորախանից գէպի Ղրիմ, ուր իրենց եղբայրներն համեմատաբար աւելի լաւ դրութեան մէջ էին: Նրանց գրխաւոր գաղթատեղին էր Բաֆա կամ Բէֆէ քաղաքը (տես Ա.բ. Կրետ. էջ. 109): Չնայած այս գաղթին, այնուամենայնիւ սակաւաթիւ Հայեր մնացին Աստորականում, որոնց մասին մենք քիչ յետոյ կը խօսենք:

Ռուսաց պետութիւնը վաղուց արդէն ծրագրել էր զուրս քշել իր հարեւան Թաթարներին իրենց սահմաններից, ոչնչացնել Տաւաթարականների իշխանութիւնը, բայց հարկաւոր էր հզօր կամքի աէր առաջնորդ եւ զա եղաւ Իօան Դ. Սպառաբարոյ ցարը եւ ամբողջ Ռուսիինքնակալ մեծ իշխանը: Նրա ժամանակը Ռուսաստանի համար մի նոր գարեչրջան էր եւ Իօան Սպառաբարոն, որի առաջ դողում էին ժամա-

նակակից ոուս բարձրաստիճան պաշտօնեայք, որի հրամանի անկատար թողնողը կախազանի բաժին էր լինելու, վերջնականապէս որոշեց քըչել Վօլգայի՝ Ռուսիոյ մայր գետի ափերից յանդուզն Թաթարներին: 1547-ին Իօանի գորքը շարժուեցաւ դէպի Կազան, իսկ 1549 թ. ինքը բաղմամարդ զօրքով շարժուեցաւ դէպի Վօլգայի երկիրները: Առաջին անգամ գնացած զօրքն մեծ աւեր ու կոտորած գործեց, սակայն երբ ինքը գնաց, քաղաքը պաշարած ժամանակ մեծ անձրեւներից ու տարափից սախուռուած եղաւ յետ նահանջելու: Սակայն պատերազմներն չընդհատուեցան. 1552-ին Կազանն արդէն Ռուսաց ձեռքին էր եւ այժմ հերթն հասաւ Աստորականին. 1557 թ. այդ քաղաքն էլ վերջնականապէս Ռուսաց ձեռքն անցաւ, ու այն օրուանից կոչուեցաւ Ասորախան, իսկ մեր տարեգրութեանց մէջ Հայտարխան, Ափղերխան եւ Հաժգարխան:

Ռուսաց Ասորախանին արիւելու լուրն հասաւ Իլւով, Բէֆէ եւ Ղրիմու այլ հայաբնակ տեղեր եւ կամաց կամաց այն Հայերը, սրոնք մի ժամանակ այդ երկրում էին բնակուել եւ գիտէին երկրի վաճառաչան լինելը, գիմեցին նորից գէպի Ասորախան եւ այլ եւ այլ տեղերում բնակութիւն հաստատեցին:

1635 թ. Ասորախանում հինգ տուն Հայ կտր, իսկ շատ Հայեր էին գալիս առեւտրական գործերով Ասորախան, որոնք զրանց մասին լուր հասցրին Էջմիածին, նկարագրելով նրանց թշուառ վիճակը եւ որ զըլխաւորն է առանց հոգեւոր մխիթարութեան լինելը: Ս. Էջմիածնի համար այդ տարիներն աւելի բազդաւոր էին քան մի որ եւ է ուրիշ ժամանակ: 1633 թ. յունուար 13-ին ազգի եւ հոգեւորականների հաճութեամբ կաթողիկոս օծուեցաւ Փիլիպպոսը, որին հարկաւ Շիւնոյ մականունն պէտք է տալ: 1635 թուականին եղած Տաճկա-պարսկական պատերազմներից նիւթապէս քայքայուած Էջմիածնին մի գործոն ձեռք էր հարկաւոր, որովհետեւ վաճառումն եղած վայտեայ շինութիւնները բոլորովին խարխուղ դրութեան մէջ մնալով, ոչ միայն նորոգութեան այլ եւ վերաշինութեան կարօտ էին եւ Փիլիպպոսը վերանորոգեց, վերաշինեց, Փիլիպպոսը առ հասարակ եկեղեցաչէն հայրապետներիցն էր եւ արթուն աչքով հսկում էր իր հօտին: Կսելով Ասորախանի հայերի վիճակը նա անմիջապէս նրանց հետ յարաբերութեան մէջ մտաւ եւ յորդորեց եկեղեցի շինելու. սակայն ի՞նչ կարող էին անել հինգ տուն աղքատ հայ վաճառականները. 'ի հարկէ ոչինչ, Փիլիպպոս հայրապետը սախուռած էր այլ միջոցների գիմելու: Նա դղում էր, որ ասաջին մխիթարութիւնը պէտք է Էջմիածնից ուղարկել. հարկաւոր էր մի քարոզիչ, որ յրջէր Ասորախանի ու Կազանի նահանգում ցրուած Հայերի մէջ, ժողովարարութիւն անէր եւ Վեհի այդ գեղեցիկ միտքն 'ի կատար անել: Եւ ահա Հայրապետն երեք կոնդակ արձակեց, մէկը յանուն Ասորախանի հայ բնակիչների, « զի յուսացեալ յԱստուած ձեռն արկեցն շինել զեկե-

դեցի » , միւսը առ թագաւորն Ռուսաց Միխայէլ Գեօրգիւիչն : որի մէջ աղերսում է , որ Աստրախանի Հայերին հրաման տայ եկեղեցի շինելու . իսկ երրօրգր . երրորդը յանուն նոր նշանակուած նսւիրակի . այդ նուիրակը նշանաւ որ Ռսկան վարդապետն էր . ( Կովկաս , 1846 թ . N<sup>o</sup> 47 ) :

Ռսկան վարդապետը մեծ գեր է խաղացել մեր տղադրութեան դործում : նա թէպէտ երեւանցի էր կոչուում , սակայն ծն . Ագաճան քաղաքում 1615 թ . , ուրանդ նա աշակերտեցաւ Սաչաթուր վ . Կեսարացուն եւ Մովսէս կաթողիկոսի հետ էջմիածին եկաւ , ու կուսակրօն քան . ձեռնադրուելով նորից Սպանան անցաւ : Յետոյ Փիլիպպոս կաթողիկոսը թէեւ նրան եպիսկոպոս ձեռնադրեց , սակայն Ռսկանը Մեծ վարդապետ . աից օրինակ առնելով իրեն ընդ միշտ « վարդապետ » կոչեց :

Ռսկանը էջմիածնում եղած ժամանակ ծանօթացաւ Պաւլո Պիրոմալի Դոմինիկեան կրօնաւորի հետ եւ նրանից լատիներէն սովորեց ( \* ) :

Ահա այս Ռսկան վ . ճանապարհ ընկաւ դէպի Աստրախան վեհի պատուէրը ճշտութեամբ կատարելու : Սա Ռուսաստանի առաջին նուիրակն էր եւ այդ ժամանակից սովորութիւն եղաւ նուիրակ ուղարկելու Ռուսաստան . միայն յետագայ նուիրակներն յաճախ կոչուում էին Ռուսաստանի եւ Հնդկաստանի :

Ռուսաց ինքնակալն եւ Բոմանովի Հարստութեան հիմնադիր Միխայէլ Գեօրգիւիչ թագաւորն սիրով կատարեց Հայոց կաթողիկոսի խընդիրը , եւ բարձրագոյն հրովարտելով հրամայեց Աստրախանի վեհօգոյսին ( Զօրպետ , որ մի տեսակ շրջանի կառավարիչի դեր էր խաղում ) յայտնել տեղւոյն Հայերին բարձրագոյն հաճութիւնը եկեղեցի շինելու մասին : Ռսկանն էլ կատարեց իր պաշտօնը եւ ինչքան ժողովում էր նուէրներ , անմիջապէս ուղարկում էր Աստրախանցոց : Այդ մի եւ նոյն ժամանակներ մի ինչ որ եպիսկոպոս դնաց Աստրախան . թէ ո՞վ էր , նա մեզ յայտնի չէ , բայց հաւանականորոք Տաճկաստանի եպիսկոպոսներից պէտք է լինէր . որովհետեւ Ղրիմում այդ ժամանակներ Տաճկահայ եպիսկոպոս առաջնորդներ կային եւ Ղրիմն էլ երկու թեմի էր բաժանուած : Սրանք հաւանականաբար այցելում էին նաեւ այլ քաղաքների Հայերին , որովհետեւ Գէֆէից արեւելեան կողմ բաւական մեծ թեմ կար : Այս եպիսկոպոսն էլ նպաստեց գործին , եւ 1640 թ . շինեցին մի փայտեայ

( \* ) Ռսկան վ . յետոյ իր եղբոր Աւետիս վաճառականի հրաւիրմամբ Ամստերդամ անցաւ եւ տեղ հասաւ 1662 թ . , որ մի շարք բազմաձախ գրքեր տղադրեց , ի թիւս այլոց Աստուածաշունչ , Առաքել Գաւրիթեցու պատմագրութիւնը , Խորենացու աշխարհագրութիւնն ու Աղուեսաղիք եւ այլն : Մանրամասն տեղեկութիւններ տես « Բառ . Երեւելի արանց » հատ . Բ . — Ռսկան վ .

եկեղեցի յանուն ս . Աստուածածնի : Ծնորհիւ այս եպիսկոպոսի շուտով քահանայ եւ սարկաւազ էլ ունեցան Աստրախանցիք : Փիլիպպոս եւ յաջորդ Յակոբ կաթողիկոսների Աստրախանցիներին տուած զանազան բարիքներն ու շնորհները այնքան մեծ էին , որ եկեղեցում սրբոց անուններն յիշելիս երկար ժամանակ ասում էին եւ կարծեմ գեռ այժմ էլ այդ սովորութիւնն չի վերացել . « եւ սրբոց Գրիգորիոսեանց եւ Ներսիսեանց , եւ Փիլիպպոսի եւ Յակոբայ , հովուաց եւ հովուապետաց Հայաստանեայց , եղիցի յիշատակ ՚ի սուրբ պատարագս , աղաչեմք » :

Հայոց Հայրապետի այս ուշադրութիւնն մի տեսակ սերմ էր , որ ընկաւ այդ հողի մէջ , շուտով ծրիւր արձակեց եւ ճիւղաւորուեցաւ : Այն օրուանից , երբ եկեղեցի շինուեցաւ , մասրախանը դարձաւ մի տեսակ հայութեան կեդրոն եւ հայ վաճառականներն սկսեցին կապուել այդ քաղաքի հետ : Ինչպէս Պարսկաստանից , այնպէս էլ Պարսից ձեռքը գտնուած միւս երկիրներից կրօնաւոր այցելուներ երեւացին , եպիսկոպոսներ , վարդապետներ , քահանաներ էջմիածնից , Գանձասարից եւ այլ տեղերից : Պարսկաստանի հայ վաճառականները տեսնելով , որ Աստրախանի Հայերն արդէն կանոնաւոր առեւտուր են բացել , սկսեցին յարաբերութիւն եւ այս անգամ Աստրախանն արդէն փոխանակ մոնղոլական յարձակումների , դարձաւ հայ վաճառականական առեւտրական արդերի կեդրոնատեղի :

Անցնենք մենք այդ վաճառականութեան :

ԳԼՈՒԽ Գ .

Ինչպէս յիշեցինք , Աստրախանը վաճառականութեան կեդրոն դարձաւ եւ Պարսկահայերն էլ կապուեցան այդ քաղաքի հետ : Այժմ հարեանցի կերպով ծանօթանանք թէ ինչպէս ծագեց հայ վաճառականութիւնը Պարսկաստանում :

1585 թ . Պարսկաստանում թագաւորեց Շահ-Աբուս Ա . Մեծը , որ նըշանաւոր է Աէֆէլիդեան հարստութեան մէջ իրրեւ վերածնիչ , իր երկրի սահմաններն ընդարձակող եւ որ գլխաւորն է իր երկիրն քարեկարգող եւ Հայաստանն աւերող , 1602-1617 թուականների ընթացքում նա նորից ձեռք բերեց այն երկիրները , որոնք մի ժամանակ Պարսկաստանին էին պատկանում ( տես Պետրոս Մեծի յարար . Հայ ժողովրդի հետ , էջ Գ . ուս . տպ . Պետերբուրգ 1898 ) : Նրա արշաւանքի ճանապարհն էլ դժբաղդ Հայաստանն էր . եւ որովհետեւ մեծ մասն արդէն Տաճկաց ձեռ-

քին էր, ուստի և հարկաւոր էր վերստին արեւ աչք երկրին :

Մի զարհուրելի միտք ծագեցաւ այդ մարդու մէջ, որի նման զկալքերն չառ քիչ կան պատմութեան էջերում : —

Հարկաւոր էր իր պետութեան ազանովութիւնը, և Շահ-Աբասն մտածեց ամառանցնել Հայոց երկիրն, որպէս զի Տաճիկներն նախ քան իր երկիր մանելը ստիպուած լինեն անապաներով անցնելու : Շահին ըզձակատար եղաւ Վրացի հաւատուրաց Ամիրզոնայ խանը, և մինչդեռ Ջալալօղլու Սինան փաշան գալիս էր Վրացի, Շահը հրամայեց Աբարատեան երկրի բոլոր բնակիչներին ժողովել Նրասի գետի ափին, կանչուած էին Ջուղայի հայ իշխանները, որոնք ահագին հարստութեան աէր մարդիկ էին և նոյն իսկ Նրոպայի հետ առեւարական յարաբերութեան մէջ էին : Առաքել Դաւրիթեցին նկարագրում է թէ ինչպիսի պատիւներով ընդունեց Շահ-Աբասին իջալիկը, որը զարմանք պատճառեց նոյն իսկ Շահին : Բնական է, որ Շահին պիտի գրաւէր հայի ընդունակութիւնը, և նա հաւատացած էր չնորհիւ նրանց՝ բարեկաւել իր երկրի վաճառականութիւնն : Հայ իշխանները որոնք կանչուած էին, իրենց զլուխն ունէին Տէր Յովհաննէսին : Շահն ստում էր, որ պէտք է նրանց տեղափոխել, իսկ պատերազմից յետոյ նրանք կրկին կը վերադառնան իրենց երկիրը : Հայերը խորհուրդ տուին չ'անելու, ասելով որ աշուն է և ժողովրդի համար դժուար է, հարկաւոր է ձմեռել : Ասկայն նա անողոք գանուեցաւ և իր իշխաններին հրամայեց անմիջապէս կատարել : Հայոց ՌԾԻ (1603) թուականին էր կատարուած այս ազգային մեծ և կորստարեւր գաղթը : Առաքել Դաւրիթեցին ստում է, « Զոմանս մահու հարուածով գանելով, և զոմանց զունչն և զսկանջս հատանելով և զոմանց զլուխն կտրեալ ՚ի ձող ցցէին, որպէս զեղբայր Առաքել կաթողիկոսին, որում անունն էր Յօճանջան, զորա և զայլոյ ուրեմն ան զլուխս կտրեցին և ՚ի ձող ցցեցին յեզր գետոյն Նրասիայ : » (Առաք. 1896, էջ 42) : Ժողովրդին ձեռում էին, նեղում և ստիպում անցնել գետով : Շատ քիչ նաւեր կային, ուստի և ժողովուրդը վայնասուն՝ լաց ու կոծ բարձրացնելով թափուեցան Նրասիի մէջ : Խեղդուողներուն զոյրը, կսկծանքն, մորմոռումն, ճիչերն, վայերն ու հառաչանքներն զղբոցանում էին երկիրն և խեղդում կորչում անհետ : Ժողովրդին քշում էին խորա ու բորա ձանադարձներով, որպէս զի Օսմանեան զօրքն չը գտնէ նրանց և ետ չը խլէ : Ահա այս նեղութիւններով գնացին նրանք դէպի Խորասան : Մէջ բերեց այստեղ ժամանակակից Ստեփան վարդապետի ողբն այս հրէշային գաղթականութեան մասին :

Ափսոս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,  
Յիրուցան ելաք անմեղ անխորհուրդ,  
Գերի գնամանաք դէպ ՚ի Խորասան  
Քաղցած ու ծարաւ, աղլոր թշուառական :

Խարիւր ու խաղար ցաւի դիմացաք,  
Զեր քաղցրիկ երկրէն ոտ դուրս չը դըրաք,  
Խիմի ձեր խօր մօր գերեզման թողաք,  
Տըներն ու ժամը ուրիշին սուաք :

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,  
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն,  
Ռ՛ւմն աք թողման դուք որ գնամանաք,  
Էսպէ՞ս կը լընի որ մոռանում աք :

Վախում ամ էնպէս մաքերնուց ընկնի,  
Ինչքան որ ողջ աք՝ մաքերնուդ չընկնի,  
Բարի ձեր որդուց թոսանց պատմեցէք,  
Էսպէս խայրենիքն քանդած թողեցիք :

Մասիս անունն, Նոյայ տապանի,  
Աբարատ դաշտի, սուրբ Էջմիածնի,  
Մեր Խոր Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,  
Զմոռանան մինչ ՚ի օրն դատաստանի :

Աչքս կուրանար, չիւնքս կտարուէր,  
Խեղճ Հայաստան, քեզ էսպէս չը տեսներ,  
Թէ մեռած էի, ինձ երանի էր,  
Քան թէ կենդանի՝ աչքս բաց տեսնէր :

(Բագրևադիկ, 1847, էջ 95) :

Այս թշուառութեան ենթարկուեցաւ նաև բազմաթողովուրդ և հարուստ Ջուղայ քաղաքն, որ, ինչպէս ասացի, ժամանակին Հայոց ախարհումը միակն էր : Ջուղայեցիք գնալով Պարսկաստան, Շահ-Աբասից առանձին արտօնութիւններ ստացան և հիմնեցին Ապտահան մայրաքաղաքի մօտ Խոր Ջուղան, որը փոքր ժամանակում համարեա նոյնպիսի հուշակ ստացաւ, որպիսին էր Հին Ջուղան : Նոր Ջուղան կարճ ժամանակում վաճառականութեան կեդրոն դարձաւ, բնակիչներն անցան Հնդկաստան, ուր մինչև անգամ սեպհական մարգարտի որսաբաններ ձեռք բերին, հիմնեցին ընկերութիւններ, առեւարական տներ և կատարուեցաւ Շահ-Աբասի ցանկութիւնը : Ահա սրանք էին, որ առաջին անգամ պարսկական ապրանքներով զիմեցին զէպի Ռուսիա :

Ջուղայի եւ Սպահանի հայ վաճառականները աբաահանած վաճառ-  
ներն էին մետաքս, անպատրաստ մետաքս (ղած), մետաքսէ գործ-  
ուածքներ, բամբակ, իսկ Ռուսաստանից դուրս էին աանում մորթեր  
սամոյրի, աղուէսի, բէշկի (բորբ), կշնաքիսի եւ այլ մանր մունր ի-  
րեզէններ: Առեւտուրը կատարուում էր շատ սակաւ դէպքում գրամա-  
կան հաշիւներով, այլ ուղղակի փոխում էին միմեանց հետ:

ԳԼՈՒԽ Դ.

Դարձեալ մեզ տնայտ է մնում Ռուսաստանում առաջին անգամ Հա-  
յերի վաճառականութիւն սկսելն, միայն մի աղբիւր, որ մեզ կարո-  
ղանում է տալ այդ մասին անդեկու թիւն՝ դա Ռուսաց արխիւն է: Այն-  
տեղ էլ այսքան յայտնի է, որ գոնէ հայ վաճառականութիւնն պաշ-  
տօնական է ճանաչուած 1626 թ. մարտ 26-ին: Այն ժամանակ, ինչ-  
պէս յայտնի է, գոյութիւն ունէր Ռուսաստանում Պօսոյսիկ Պրիկազ  
— « Դեսպանական Ատեան », որի հիմնադիրն էր Իօան Գ. Ռուսաց թա-  
գաւորը: Այս Ատեանի պարտականութիւնը նոյն էր, ինչ որ այժմ ար-  
տաքին գործոց նախարարութեանը — յարարերութիւն ունենալ օտար  
պետութիւններին հետ, կարգադրել այլ եւ այլ քաղաքական հարցերն  
եւ այլ: Հայերն եկած լինելով օտար պետութիւնից — Պարսկաստա-  
նից, յարարերութիւն ունէին այդ հաստատութեան հետ: Ահա այդ Ա-  
տեանի գործերը մէջ կայ հետեւեալ անդեկու թիւնը. « Մաքսական ատե-  
նից Դեսպանական ատեան ուղարկուած ցուցակ այն ապրանքների, ք-  
րոնք բերուած են Մոսկուա հայ վաճառականների ձեռքով »:

Այսպիսով 1626 թ. մարտից սկսեցին վաճառականներ գալ Մոսկուա,  
բերելով ապրանք: Թէ ո՞վ էր կամ ո՞վքեր էին այդ վաճառականները,  
մեզ յայտնի չէ, սակայն պաշտօնական սկիզբն այդ է:

1647 թ. մարտին Աստրախանի հայ վաճառական թաւաքաւեանը,  
որի սերունդներն դեռ այս օր էլ կան Ղզլարում, խնդիր ներկայացրեց  
Դեսպանական Ատեանին խնդրելով որ իրեն թոյլ տրուի գնալ Ռուսիոյ  
այլ եւ այլ քաղաքներ եւ ապրանք տանել վաճառելու համար: Ատեանն  
իրաւունք տուեց:

Պարսկաստանից հայ վաճառականները լսելով այդ արտօնութիւնների  
մասին, ուրախացան եւ նրանց Բնկերութիւնն, որ մասնաւոր յարա-  
բերութեան մէջ էր Աստրախանի հետ, որոշեց մի մնայուն պայման

կնքել Ռուսաց պետութեան հետ եւ թագաւորին էլ ներկայացնել մի ուր  
եւ է հազուադիւրս եւ թանկագին նուէր, որպէս զի ցոյց տուած լինեն  
իրենց արտադրելի ապրանքների նախագաղափարը:

Ջուղայի Հայերի մէջ կային այնպիսի մաքուր գործ հանող ականա-  
գործ, արծաթագործներ ու ոսկերիչներ, որ նրանց ձեռագործն դեռ  
այսօր էլ զարմացնում է տեսողներին: Ահա այդ արհեստաւորների ձե-  
ռակերտ գահաւորակն ուղարկուեցաւ Ռուսիա:

Սպահանի Հայ Վաճառականական Բնկերութիւնն արդէն վաղուց գո-  
յութիւն ունէր եւ առեւտրական կապերով կապուած էր Հնդկաստանի  
հետ, նոյն իսկ Հնդկական քաղաքներում բաժանմունքներ ունէր: Գըլ-  
խաւոր վաճառելիքներն էին մետաքս, մետաքսէ ու բամբակէ գործ-  
ուածքներ, թանկագին ակնքիսի եւ այլն: Նրանց քարաւաններն գնում  
էին մինչեւ հնդկական ու տաճկական ձովեղրեայ քաղաքներ, Բուխա-  
րայի կողմեր, Տիսիս, ուր վաղուց արդէն պարսիկ վաճառականներն  
սեպհական քարվաստարայներ ունէին: Վրացերէն մի վէպիկի մէջ, որ  
կոչուում է « Կորած երեխայ », նկարագրուած է պարսիկ վաճառականների  
առեւտրն: Բնական է որ մեր կրկիր, որ առանձին առեւտրական  
գիւրութիւններ էր ստեղծում, աւելի ցանկալի պէտք է լինէր Հայ Վա-  
ճառականական Բնկերութեան:

1641 թ. Պարսից Շահի մօտ արհեստական մասի կառավարիչ էր Յա-  
կու Յովհաննէս Ջուղայեցին, ( արան Պ. Լէօն իր « Հայկական տպագ-  
րութեան » մէջ չգիթել է Յովհաննէս վարդապետի հետ ): Սա Եւրոպա  
ճանապարհորդելով զբաղուեցաւ մեքենայական արհեստով եւ Պարսկաս-  
տան մի քանի գիւրութիւններ ու նոր մեքենաներ մուծեց, որոնցով  
օգտուում էր Հայ Վաճառականական Բնկերութիւնն: Սպահանում առա-  
ջին անգամ տպագրութիւն մուծողն էլ սա էր եւ առաջին անգամ իր շի-  
նած տառերով տպեց ս. Պօղոսի թղթերը, եօթը գրուիս Սաղմօս, սա-  
կայն տպագրական թանաք չունենալու պատճառով թողեց Աստուածա-  
չունչ տպելու միտքը: Այս մասին բաւական անդեկու թիւն է տալիս Պե-  
տերբուրգի հայ տպագրութեան ժրջան մշակ Յովհաննիսեան Յովսէփ  
սարկաւազն իր ուս լեզուով « Հայկական յիշատակարաններ » ( Արմենա-  
կիայ Պամեանսիկի, Ս. Պետերբուրգ 1807 թ. ) գրքուժը: Երեւի այդտե-  
ղից է վերջերի այդ Յակոբ Յովհաննէս Ջուղայեցու մասին նաեւ Ս. Ն.  
Դիլիկին ( եռանասոր « Ժողովածու Արձանագրութեանց », որոնք վերա-  
բերում են հայ ժողովրդի պատմութեան, Մոսկուա 1833-1838 ):

Հայ վաճառականներն իրենց գիտական ընտրեցին իրենց աւագագոյն  
վաճառականներից մէկի որդուն Խօջա Չաքար Սարճատեանին, եւ նա  
իր հետ վերցնելով էլի ինը հոգի՝ 1659 թ. ակտնի ամսուր ձովով զիմեց  
Աստրախան: Օգոստոս 7-ին նա արդէն Աստրախանում մն էր, ուր նա ծա-  
նօթադաւ տեղական հայ վաճառականների հետ եւ ապա ներկայացաւ

տեղւոյն իշխողներին՝ իշխան Լվովին եւ Բեկլեմիշլուին, (այս մասին տես ժողովածու արձանագրութեանց, էջ 63-67, հատոր Բ.), որոնց յայտնեց իր գալու պատճառն եւ զհասպանութեան մասին: Իշխաններն նրան ապահովեցին՝ եւ նա սեպտեմբեր 19-ին ճանապարհ ընկաւ դէպի Մոսկուա: Յաջորդ տարւոյ մարտ ամսին նա արդէն Մոսկուայումն էր, ուր նոյնպէս ներկայացաւ Դեսպանական Ատենին եւ յայտնեց իր գալու պատճառն: 1660 թ. ապրիլ 12-ին նա բազմ ունեցաւ ներկայանալու Ալէքսէյ Միխայլովիչ թագաւորին եւ ներկայացրեց այն նուէրները, որ ուղարկել էր Ապահանի Հայ Վաճառականների Ընկերութիւնը: Դրանք էին.

Գահաւորակ կամ գահ, ոսկով ու արծաթով սրտամտ, սպամոնղնաբով, մարգարիտներով ու յանկինժներով զարդարած Գահի վրայ միայն 876 հատ այլ եւ այլ մեծութեան ազամանոց կտր, մէկ լայ, 1223 հատ յակինթ, գահը պատած էր մախմուրով, որի վրայ դարձնալ էրեք թևը մարգարիտ էր անցկացրած, երկու կողմից երկու հրեշտակ, որոնք նոյնպէս մարգարիտներով էին զարդարուած: Գահի վրայ հետեւեալ լատին արձանագրութիւնը կար.

Potentissimo et Invictissimo Moscovitorum  
Imperatori Alexio, in terris feliciter regnanti,  
hic tronus, summa arte et industria  
fabrefactus, sit futuri in coelis et perennis  
faustum felixque omen. Anno Domini 1659.

(Հօրագոյն եւ ամենաանյողթ Մոսկուայի ինչնակալ Ալէքսէյին, երկրիս վրայ բազմաւորապէս թագաւորողին, այս մեծարհեստ բազմաջան աշխատանքով կերտուած գահը թող լինի (նու՞՞ր) բազմաւոր նախատեսութեամբ երկնայեաց անվերջ սրանչելեաց: Յամի տետոն 1659:)

Բացի այս գահը ներկայացրեց նաև հետեւեալ նուէրները: Խորհրդաւոր ընթրիքը պղնձէ սախաակի վրայ նկարած, ոսկէ մատանի տգամանքով, խորովելով տապակելու արծաթէ տետն, պարսկական տափակ արծաթեայ հեղուկամանով, հոտուէտ իրեր, 15 շիշ Շահի գործածած շարափ, երեք շիշ վարդաօղի, 4 շիշ անուշահոտ օղի, մի շիշ նարնջի օղի, 6 մսխալ արեւելեան շուշանոտութիւն, 12 ուսի աստ, ոսկէ բարձունքով սազ կամ տախիզ զարդարուած թանկագին քարերով, որի մէջ կայ շինուած մի թանաքաման, գարձնալ երկու ազամանազարդ ոսկէ մատանի, արծաթազործ արկղիկ կողպէքով թանկագին իրեր պահելու համար, 1 1/2 փութ հնդկական իմիր:

Թագաւորն այս ընծաները ընդունելով, հրամայեց արքունիքից հագալ Խոջայ Զարարի բոլոր կենսական ծախսերն, իսկ Խոջային էլ հրամայեց հետեւեալ օրը իրեն ներկայանալ Դեսպանական Ատենում: Թագաւորը պատուիրեց իր մօտ հաւաքել ուս նշանաւոր արհեստագէտներին եւ գնահատել տուեց գահը. նրանք գին գրին 22,589 ռ. 60 կոպէկ: Սա այնպիսի հրէշային մեծ գումար էր այն ժամանակ եւ այնպիսի արժողութիւն ունէր, որ այժմեան մի միլիոն ռուբլուն հաւասար պէտք է համարել: Ինչո՞ւ ենք հետու գնում, գեռ 50 ական թուականներին Տփխսուս 2-3 հազար երկրաչի մսնէթանոց արծաթ ունեցողն համարուում էր մեծ հարստութեան տէր:

Խոջայ Զարար Սարճատեանն թագաւորի պատուէրի համաձայն հետեւեալ օր ներկայացաւ Դեսպանական Ատենին: Այնտեղ նրան հարց արուեցաւ, թէ արդեօք կարո՞ղ է Ռուսաստան բերել հնդկական ու պարսկական թանկագին ակներ, թուլակներ եւ այլ թաշտաններ, գազաններ եւ թէ ինչ կը յանակով կարելի է Պարսկաստանից Ռուսաստան հրուիրել զեղարուեստագէտներ, ոսկերիչ-արծաթագործներ, ակնագործներ եւ այլ տեսակ արհեստագէտներ:

Խոջան յայտնեց, որ իր հայրը նշանաւոր վաճառական է, Հնդկաստանից ամեն տեսակ քարեր է արտահանում, եւ որ բռնի Ընկերութիւն, այլ եւ այլ պետութեանց մէջ գործակալներ եւ մեծ ստեատուր: Յայտնեց նաև, որ գահը շինուած է Իսպահանում արքունի արհեստագէտներ ձեռքով եւ եթէ հարկ լինի, գեռ գրանցից էլ աւելի բաւեր կարելի է շինել: Թոշուներ բերելու համար խօսք տուեց, իսկ գազաններ բերելու գործը մի քիչ դժուար թուաց: Յայտնեց նաև, որ շատ արհեստաւորներ կան եւ կաշխատէ Ռուսաստան ուղարկելու: Այն էլ յայտնեց, որ եթէ 50 հազար ռուբլու տապճակ (չափբախ, ձիու փոս) պատուէր տան, այն էլ կարող է շինել եւ այդ բոլորը նա կանէ՝ ի սէր այն բանի, որ Ռուսաց թագաւորը քրիստոնեաների պաշտպանն է: Թագաւորը հրամայեց յայտնելու իրեն բոլոր նուէրների գինը, սակայն Խոջայ Զարարը հրաժարուեցաւ խնդրելով թագաւորին, որ նա այդ բոլորն էլ ընդունի իբրև նուէր: Սակայն թագաւորն այդ պատասխանով չը բաւականացաւ եւ, ինչպէս տեսանք, Մոսկուայի վաճառականներից իմացաւ գահի գինն, ուստի եւ խնդրեց Խոջային, որ նա յայտնէ գոնէ իրենց ի՞նչ է նստել գահը, այն ժամանակ միայն Խոջան ասաց, որ 24,443 ռ. 50 կոպէկ է նստել: Ի արիտուր այս մեծարժէք նուէրների թագաւորն հրամայեց սալ նրան 4000 ռուբլի արծաթ, 12,500 ռուբլի պղղընձէ, եւ մի եւ նոյն ժամանակ իրատնք տուեց Սիրիական Ատենից 18 հազար ռուբլու սամոյրներ գնելու պետական գնելով, նոյնպիսի իրաւունք տուեց նաև այլ ապրանքների վերաբերեալ:

1660 թ. օգոստոսին արձակուրդի հրաման ընդունելով եւ անցալիտով

ստանալով, ուրախացած՝ նոյն ամսի 20-ին ճանապարհ ընկաւ (\*) զէպի Աստրախան, աչնտեղով Իսպահան գնալու համար:

ԳԼՈՒԽ Ե.

Այն ժամանակ երբ Խոջայ Զաքար Սարհատեանցը Ռուսիա գնաց եւ արդէն վերադարձաւ, Իրանի թագաւոր Շահ-Աբրաամ Բ. որը Հայերին այն աչքովը չէր նայում ինչպէս իր նախահայր Շահ-Աբրաամ Մեծը, լսելով որ իր հոգատակ Հայերը Ռուսաց պետութեան հետ բանակցութիւն են սկսել, բարկացաւ եւ այդ գործին մասնակից եղողներին բոլորին էլ այլ եւ այլ պատիժներ ինքնաբերեց: Այսպիսի անյաջողութիւնը միանգամայն ոչնչացնում էր այն բոլոր արտօնութիւնները, որոնք զեռ նոր էին ստացուած, հետեւապէս եւ գործի սաղմը խեղդման՝ ոչնչացման էր դատապարտուած:

1665 թ. վերածնութեան դարազուլուն էր հայ վաճառականութեան համար: Պատճառը Շահի մահն էր:

Այս վերածնութիւնն այն չէր, ինչ որ կար Շահ-Աբրաամ Մեծի ժամանակ:

Շահ-Աբրաամ Մեծը Իրանի գահի վրայ բազմելու օրից իր երկրի բարեկարգութեանց ետեւ է եղաւ: Նախ եւ առաջ նա անդղիացի Ռուբրա Շիրլէյի օգնութեամբ զինուորական բարեկարգութիւն մտցրեց իր դարձի մէջ եւ ապա հաստատ համոզուած լինելով, որ պետութեան ոյժն երկրի հարստութեան մէջ է, վաճառականութեան ծաղկման ձեռնամուխ եղաւ: Այս գործին նպատակաշարժար դտաւ Զուղայեցի Հայերին, որովհետեւ արդէն Հին Զուղայում տեսել էր նրանց առասպելական հարստութիւնը: Երկրի ամենաարդիւնաբեր մասը մետաքսավաճառութիւնն էր, որի մեծ նավաճառութիւնն իրեն էր վերապահել, ուստի եւ այդ մեծահարուստ որոշ գումարով նա Զուղայեցի Հայերին կապալով տուեց, որով եւ պետութիւնն առատապէս օգտուում էր եւ որ զխաւորն է, այդ օրուանից

(\*) Մենք այստեղ հարեանցի կերպով հարկաւոր ենք համարում յիշելու, որ ուստ « Պատմական տետրութիւն հին Ռուսաց թանգարանի » գրքում էլ մի յիշատակութիւն կայ, որ 1554 թ. Շաքու ու Շամախու իշխողներն զեօպաններ ուղարկեցին Ռուսիա առեարի հարցի վերաբերեալ, նոյնպէս Աստրախանի վրայով: Նրանք շատ թանկագին իրեր դարձրին եւ տարել Ռուսիա եւ հրովարտակներ ստացել, սակայն չէ յիշուած թէ ովքեր են եղել:

Զուղայեցիք սկսեցին հետզհետէ հարստանալ, թէ ի՛նչպէս, — այդ մենք կը տեսնենք:

Մետաքսի մեծավաճառը Պարսկաստանում թաղնել անկարելի էր, ուստի եւ սկսեցին առեւտուր Տաճկաստանի եւ արեւմտեան Եւրոպայի հետ: Նրանց ճանապարհն էր Թաւրիզ, Վան, Էրզրում, Տրապիզոն եւ այլ ծովեզրեայ քաղաքներով Զմիւռնիա, Կ. Պօլիս, Վենետիկ, Ճենովա, Մարսէյլ եւ նոյն իսկ Ամստերդամ, ուր մինչեւ անգամ առեւտրական տներ ունէին: Ռուսաց հետ ունեցած յարաբերութիւններն ուրիշ ճանապարհներ բաց արին Աստրախան - Մոսկուա - Արխանգելսկ - (Նովոբորո-Սմոլենսկ) - Շվեդիոյ քաղաքներ եւ Ամստերդամ:

Եւրոպայից նրանք տանում էին Պարսկաստան մանուկ, ոսկի, արծաթ, ժամացոյցներ, արհեստական մորգարիտ, բուստ, հայելիներ եւ այլն, որոնք լաւ էին ծախուում պարսկական եւ հնդկական քաղաքներում: Մենք մի ուրիշ աշխատութեան մէջ կը խօսենք Հնդկահայ վաճառականութեան մասին, միայն այսքան ասենք առ այժմ, որ Հայերը Հնդկաստանի հետ վաճառականութիւն սկսեցին Շահ-Աբրաամ Մեծի ժամանակ եւ այնտեղ էլ գործը կանոնաւոր կերպով էր առաջ գնում: Հայ վաճառականները Շահ-Աբրաամի համար քաղաքական դեր էլ էին կատարում: Շահից նամակներ էլ ստանում եւրոպական թագաւորներ Մօս եւ պատասխան բերում, նոյնպէս եւ եւրոպական երկիրներ Մօսին տեղեկութիւններ հաղորդում Շահին:

Ժէ. դարու առաջին քաւորգում Զուղայում մօտ 30000 բնակիչ կար եւ 20-ից աւելի եկեղեցի: Այս դարը Զուղայի եւ Սպահանի ծաղկման դարն է եւ այդ ժամանակ Անդղիացի, Հոլանդացի եւ Ֆրանսիացի վաճառականներ էին գալիս Սպահան եւ Զուղայ եւ բազմաթիւ եւրոպայի արհեստաւորներ կային Շահի ծառայութեան մէջ: Շահ-Աբրաամ Մեծը մինչեւ անգամ աշխատում էր եւրոպական պետութեանց հետ քաղաքական յարաբերութիւն եւ բարեկամութիւն պահպանել եւ այլն (տես Պետրոս Մեծի յարաբ. Հայ Ժողովրդի հետ, էջ Ե. - 2.), սակայն նրա յաջորդները դաւաճանեցին՝ այդ քաղաքականութեան եւ կարգերը տեղի տուին հներին: Շահ-Աբրաամ Մեծը իր հետ գերեզման տարաւ այն բուրբ, ինչ որ ինքն էր մտցրել Պարսից երկրում եւ հնութեան՝ փթած բարձրի դրօշակը սկսեց ծածանել Սասանեանց փայփայած երկրումը:

Շահ-Աբրաամ Բ. փոքրի մահը Հայերին հօգի ստուեց նրանք վճուեցին վերանորոգել իրենց յարաբերութիւնները Ռուսիայի հետ, իրագործել այն ծրագիրները, որից նրանք սպասում էին անտեսական բարեօրոյնի եւ այն էլ կարճ եւ ձեռնուած ճանապարհներով: Իրանի նոր վեհապետը՝ Սիւլէյման Շահը՝ կարծես աւելի խելօք մտրդ էր եւ անհա՛ հայ վաճառականներին շնորհեց առեւտրական գործի ազատութիւն: Այսինպէս էր միայն Հայ վաճառականական Բնկերութեան յիշատակութիւնը:

1005  
21337



Այդ ընկերութիւնը հետագայ գանուեցաւ այդ գործումը եւ 1666 թ. փետրուար 21-ին Աստրախան ուղարկեց երկուսին՝ Սաւիթան Մովսիսի որդի Ռոմաքամիանին եւ Գրիգոր Մասթլոսի որդի Լուսիկեանցին (Ռուսական վաւերագրութեամբ վերջինս մի երկու անգ անուանուած է Լուսիկով, իսկ մնացած տեղերում Գուսիկով, թէպէտ հայերէն կոմպլուտով Յուսիկեան է գրուած, սակայն մենք աւելի ճիշտ համարելով Լուսիկեան, այսպէս էլ կը գործածենք)։ Սրանք 1667-ին Մոսկուա հասան եւ ժամանակի օրէնքի համաձայն Գեոպոնական Ասեանի հետ յարաբերութիւն սկսեցին։ Այն ժամանակ Ռուսաստանում Գեոպոնական Ասեանը նոյն գեր էր կատարում, ինչ որ այժմ Արասիին գործոց նախարարութիւնը։ Այլեքսէյ Միխայլովի թագաւորը սիրով բնորոշեց Հայ վաճառականական Բոսիբուրեան ներկայացուցիչներին եւ համաձայնուեցաւ Հրովարտականքով որոշել ամենայն տեսակ իրաւունքներ ու արտօնութիւններ։ 1667 ապրիլ 22-ին արդէն հրատարակուել էին առեւտրի վերաբերեալ օրէնքներն, որոնց 77-րդ յօդուածում ասուած էր. « Այն օտար երկրացիները, որոնք գալիս են Անգրծովեան երկիրները, ինչպէս Ղզըլրաշները, Հնդկները, Բուխարացիները, Հայերը, Ղալմուխները, Չերքէզները, Աստրախանի բնակիչները եւ այլն երկրացիներն իրաւունք են ստանում իրենց ապրանքները բերել Մոսկուա եւ այլ քաղաքներ, այս օտարների ծախած ապրանքից բոլորից մէկ գրիվեա (10 կոպէկ) մաքս վերցնել, իսկ եթէ ապրանքը կը ծախեն Աստրախանում, այն ժամանակ բուրլուց 10 գենդա » (որքան ստուգեցինք, զենգան այն ժամանակ հաշոււմ էր 1/2 կոպէկ, ուրեմն 5 կ.)։ Մի եւ նոյն օրէնքագրութեան 99-րդ յօդուածումն ասուած էր. « Երբ Ղզըլրաշները, Հայերը, Յոյները մեր սահմանակից քաղաքներ կը գան, իսկոյն ապրանքը խուզարկել՝ զննել բոլոր արկղերը, հակերը, կապոցները, զըննել մարգարիաներն ու այլ տեսակ ակները, տեսնել որպէս զի ոչ մի բան թափարած չը լինեն, իսկ ոտուսաց ապրանքն էլ նրանց հետ խոխուրի՝ զգոյշ լինել » (Արձանագր. հատ. Ա. էջ 3)։

Ուրեմն օրէնքի գոյութիւնն արդէն Հայերին իրաւունք էր տալիս ազատ վաճառականութիւն անելու, սակայն Հայերն աւելի զգոյշ գանրուեցան եւ որոշեցին վաւերագրութիւն ձեռք բերել, որպէս զի ամեն կերպ ապահովուած լինէին։ Ռուսիոյ հետ մշտապէս յարաբերութիւն ունենալու համար նրանց հարկաւոր էր իրենց ընկերութեան կողմից ներկայացուցիչ ունենալ Մոսկուայում եւ այդ պատճառով իբրեւ գործակալ (պէնտ) վարձեցին Մոսկուական պետութեան յայտնի՝ Անգրիացի Ռոմա Ռոմասի որդի Բրէյն-ին եւ բուրլուց 2 կոպէկ որոշեցին ի արտաւոր այդ պաշտօնի։ 1667 մայիս 31-ին կնքուեցաւ պայմանն, որը ազատ փոխադրութեամբ մէջ ենք բերում։

« Ծանօթ երկրի եւ Ուլտան քաղաքի հայ վաճառականներն, ինձ՝

Սաւիթան Մովսիսի որդի Ռոմաքամիանին եւ ինձ՝ Գրիգոր Մասթլի որդի Լուսիկեանին ներկայ 7175 (= 1667) թուականին համայն Ռուսիոյ Մեծ Արքայն՝ Մեծ, Փոքր եւ Սպիտակ Ռուսիոյ թագաւոր եւ Մեծ իշխան Ալեքսէյ Միխայլովիչ Ինքնակալը շնորհի արժանացրեց, թոյլ տալով մեզ Հայ վաճառականական Ընկերութեան եւ մեր գործակատարներին գալ Անգրծովեան երկիրները, բերել մետաքս, արդաշ եւ այլ պարսկական ապրանքներ եւ առեւտր անել Մեծ Արքայի Մոսկուա, Աստրախան, Արխանգել եւ այլ սահմանաքաղաքներում։ Մեծ Թագաւորը հրամայեց, որ մեր ապրանքները ում եւ ծախենք՝ սուսաց թէ գերմանացուց եւ փոխարէն ինչ որ վերցնենք՝ սուսական թէ գերմանական ապրանք, ոսկի թէ եֆիմկա (հոլանդական գրամ), պարսաւորում ենք իր երկրի միջով մեր երկիր վերագասնալ։

Մի եւ նոյն ժամանակ Մեծ Արքայն մեր խնդրի համաձայն իրաւունք տուեց մեզ, որ մեր ընկերութեան կողմից Մոսկուայում գործակալ լինի Մոսկովաքանակ Ռոմա Ռոմասի որդի Բրէյն անգրիացին։ Այս իրաւունքի համաձայն մենք՝ Սաւիթան եւ Գրիգոր՝ մեր ամբողջ ընկերութեան կողմից ներկայ 7175 թ. մայիս 31 ին արքայանիստ Մոսկուա քաղաքում պայմանաւորուեցանք թ. Բրէյնի հետ, որ մինչեւ Մեծ Արքայի կամք կը լինի՝ նա Մոսկուայում մեր գործակալ լինի, իսկ մենք՝ Սաւիթան եւ Գրիգոր վաճառականներս՝ վերագասնալով Իսպանիան, պէտք է յայտնենք մեր թագաւորին այդ պայմանի մասին եւ ինչքանք նորին Արքայական Մեծ ծովութիւնիցը, որ խնդրուական թուղթ ուղարկէ Ն. Ա. Մեծ, Ռուսաց թագաւորին, որպէս զի վերջինս իր սղորմածութեան արժանացնէ Ռոմասին, երբ Ռոմասը մեր կողմից որ եւ է խնդրի կ'ունենայ։ Պէտք է աշխատինք, որ այս թուղթը, որքան կարելի է շուտ, հասցնենք Մոսկուա Ռոմասին։ Ռոմասը հարկ եղած դէպքում մեր բոլոր գործերի համար պէտք է իրեն հաւատարիմ մարդկանց ուղարկէ Աստրախան, Նովգորոդ, Արխանգել եւ այլ քաղաքներ եւ մեր առեւտրական-արդիւնաբերական բոլոր գործերի ու խնդրներին համար անխարգախաբար եւ հաւատարմութեամբ կարգադրու թիւններ անել եւ հոգ տանէ ինչպէս Մեծ Արքայի ատաջ, այնպէս էլ եւ Արք. Մեծ. Բոյարինի (իշխան), Ստրճըրգարանի եւ այլ պաշտօնէից մօտ, Հարկ եղած պէպքումը նա, մեր գործերի գրութեան մասին, պէտք է տեղեկութիւն տայ մեզ եւ ինչ կարգադրութիւն էլ մենք կանենք լինի զա մեր ներկայութեամբ թէ առանց մեզ, պէտք է ի կատար ածէ։ Եթէ պատահի, որ կարելի չգացուի մեզ նամակ գրելու, այն ժամանակ Ռոմասը պէտք է ուղարկէ նամակը մեզ հէնց որ ճանապարհորդ կը պատահի։ Համաձայն այս պայմանաթղթի, մենք եւ մեր Ընկերութեան բոլոր գործակատարները, որոնք ապրանք կը բերեն, պարսաւորում ենք տեղական մաքսագներին համաձայն Աստրախանում վճարելի Ռոմասին բուրլուց մի գենդա, եթէ ապ-

բանքը կը ծախենք Աստրախանում, պարտաւորում ենք ծախուած աստրախանքի ընդհանուր գումարիցը վճարել զարձեայ բուրլուց մի գենդա: Եւ թէ մետաքս ծախենք Մոսկուայում Աստրախանի մաքսագինից թանկ, այս գէպքումն էլ ընդհանուր վաճառման գումարիցը վճարենք Թոմասին գարձեայ մի սենդա: Իսկ եթէ Մոսկուայումն էլ չը ծախենք մետաքս եւ այլ սպրանքներ եւ ամանինք նովգորոգ, Արխանգել եւ կամ այլ սահմանաքաղաքներ եւ այնտեղ ծախենք, պարտաւորում ենք բուրլուց մի գենդա վճարել: Եթէ այնպէս պատահի, որ մետաքսն ու միւս սպրանքներն ուղարկենք ծովից միւս կողմ եղած երկիրներու՝ վաճառելու, գարձեայ պարտաւոր ենք բուրլուց մի գենդա վճարել տեղական մաքսագներին համաձայն: Այսպիսով Թոմասին 'ի վարձաարու թիւն գործակալութեան մենք պարտաւոր չենք բուրլուց 1 գենդայից աւելի վճարելու: Եթէ մենք Թոմասին մետաքս եւ կամ այլ սպրանք զրկենք Մոսկովեան պետութեան քաղաքներում վաճառելու, այդ գէպքում վաճառումից գոյացած գումարից բուրլուց մի գրոշ (2 կոպէկ) իրեն: Եթէ Թոմասը մեր սպրանքը ծախէ եւ ստացած գումարով մեզ համար սուսական կամ գերմանական սպրանք գնէ, եւ կամ թէ մեր սպրանքը նրանց սպրանքի հետ փոխէ, այս գէպքում մենք պարտաւոր ենք բուրլուց մի ուրիշ գրոշ էլ ստալ: Իսկ ինչ որ Թոմասը ծախս կունենայ, կամ խնդրագրիներին համար տուրքեր կը վճարէ, կամ թէ մեր որ եւ է գործի համար Մեծ արքայից հրովարտակ ստանալու հոգ կը աանէ, այս բոլորը՝ ինի մեր ներկայութեամբ թէ առանց մեզ միայն մեր գրութեան համաձայն, մեր սպրանքն է վճարել Թոմասի ներկայացրած հաշուի համաձայն: Եթէ այնպէս պատահեց, որ Թոմասին վճարելի գումարը չ'ունենանք, այն ժամանակ գրամի փոխարէն պէտք է սպրանք տանք՝ մետաքս, արդաչ եւ այլն: Այս վճարումը, նայած թէ որտեղ կը լինի, Աստրախանում, Մոսկուայում, Նովգորոգում, Արխանգելում եւ կամ այլ քաղաքում, պէտք է հաշուենք տեղական գներով եւ բացի այս, պէտք է մաքսատան գներին համաձայն բուրլուց մի գենդա իրեն վճարենք: Իսկ եթէ պատահի, որ Մեծ Արքայի Ռուսական պետութեան մէջ, բացի Թոմասի եւ նրա գործակատարներին, ուրիշ մէկը գործակալութեան վարձ պահանջէ, Թոմասը պարտաւորում է մեզ գրանից ազատ կացուցանել: Այս բոլորին վկայենք. Իվան Բոժենով, Ուլեան Բորիսով, Ֆիլիպ Կրքիով, Իվան Պրոկիլեւ, Մեղենտի իվանով, Պայմանագիրը գրեց Իվանովսկայա հրապարակի գատարական պաշտօնեայ Զօսկա Յեկանով»: (Արձանագր. հատ. Ա. էջ 142-145):

Նոյն օրը, այն է 1667 (=7175) մայիս 31-ին, Ալէքսէյ Միխայլովից թագաւորը այդ առեւարական դաշնագրի հրովարտակը շնորհեց, որ հետեւեալն է.

« Աստուծոյ Ամենակալ որարչութեամբ, նրա հանձարեղ Աջով պսակ-

ուած ու պահպանող եւ նրա կենարար եւ կենսատու Հօգով կատարարող ամենազորմած եւ ամենաերջանիկ Մեծ Արքայ եւ թագաւոր եւ ամրող Մեծ, Փոքր եւ Սպիտակ Ռուսիոյ Մեծ իշխան Ալէքսէյ Միխայլովից Ինքնակալից՝ Նորին Լուսափայլ Արքայական Մեծութեան եւ Բարձր Արքունի ու Պետական Դեսպանական գործոց իշխան եւ տեղակալ Շատակոյ Աֆօնասի Լավրենտեից Օրդին-նաչոյին եւ Մորհրդարանի ասենապարներ Գերասիմ Սիմէօնով՝ սրբի Գոխուրովի, Լուկիան Տիմօֆեւ՝ սրբի Գոխուրովի եւ ասենապար Նիքիմ Բօրիսնով՝ սրբի Իւրկեի. Համաձայն (տիպոս Պարսից Շահի՝) Նորին Շահ Արքայական Մեծութեան Պարսից հպատակ Հայերի՝ Ստեփան Բամագամեանի, Գրիգոր Լուսիկեանի եւ ընկերների խնդրի, նրանց հետ հետեւեալ պայման կնքեցինք, որ նրանք Ռուսներին եւ Դերմանագիրներին վաճառելու համար Մեծ Ռուսիա մետաքս եւ այլ սպրանքներ բերեն, իսկ ինչ որ մինչեւ այժմ՝ բերել են զանազան վնասաբեր ճանապարհներով՝ իրաւունք ենք տալիս ուրիշ պետութեանց մէջ ծախելու, սակայն այսուհետեւ արգելում ենք մի եւ նոյն ճանապարհներով սպրանք բերելու: Այսուհետեւ նրանք իրաւունք չունեն այլ պետութեան վաճառականների հետ որ եւ է վաճառականական գաշն կապելու, այլ տարւայ ընթացքում ինչպան որ Պարսից երկրում բոլոր արգելեալներովներին մօտ մետաքս կը սաացուի պէտք է լըիւ տարէց տարի բերեն Մեծ Ռուսիոյ սահմանաքաղաքները կամ ցամաքով Թերեքի ամերով Աստրախան եւ կամ ծովով մի եւ նոյն քաղաք, մետաքսի եւ այլ սպրանքների արտահանման համար պէտք է ղեկավարուել հետեւեալ օրենքներով:

Ակխարհի ստեղծագործութեան 7175 թ., աայ ստուած եւ այսուհետեւ, որքան կարելի է վերոյիշեալ բազմաթիւ սպրանքներով Պարսից երկրից պէտք է Աստրախան գան եւ ներկայանան նոյն ժամանակ Աստրախանում գանուող Նորին Արքայական Մեծութեան Բոյեարինին եւ Վոնլօզաների: Հէնց որ սպրանքաբեր գործակատարը կը ներկայանայ, հրամայում ենք անմիջապէս ընդունել եւ զննել մետաքսն ու միւս սպրանք, իմանալ բերած սպրանքի որքանութիւնը, ցուցակագրել, հաշուել անել եւ այս պայմանագրի համաձայն հետեւեալ մաքս վերցնել. հում մետաքսից 20 բուրլուց իսկ արդաչից 16 բուրլուց բուրլու վրայ 10 գենդա: Իսկ եթէ Աստրախանում թանկ գնով կը ծախեն ինչպէս իրենց կամքն է, ամբողջ արժողութիւնից բուրլուն 10 գենդա վերցնել իրրել մաքս, իսկ միւս սպրանքից էլ տեղական արժէքի կամ փոխելու գնի համաձայն բուրլուց զարձեայ 10 գենդա, իսկ ինչ որ Աստրախանում չեն ծախի եւ սայլերով Մոսկուա կը աանեն, փութից մի բուրլի ճանապարհածախս վերցնել, միայն ինչ որ մանր մունր ճանապարհորդական բաներ կունենան, ինչպէս կարած շորեր եւ ուտեստ, որը որսչում ենք 100 փութից միայն 10 փութ, առանց ճանապարհածախսի ու առանց մաքս



վերցնելու ամենի մինչև Մոսկուա : Այս հաշուով շատ ծխախոտ չը պէտք է լինի , այլ մարդպուլս 20 ֆունտ եւ այն էլ իրեն համար եւ ոչ թէ ծախելու : Յայտարարութեան եւ ցուցակագրի համաձայն պէտք է բոլոր ապրանքը յայտնի լինի եւ ոչ մի բան անգամ չը լինի թաղցրած , որովհետեւ միայն ճշմարտասէր եւ անխարդախ մարդիկ պէտք է զբաղուին սուստուրով , եթէ պատահի , որ նրանք ճանապարհածախս ու մաքս վճարելու համար Աստրախանում փող չունենան , այդ դէպքում վերցնել ամբողջ ապրանքի 25-ից մի մաս իսկ իբրև ճանապարհածախս անգական արժէքի համաձայն մեծաքս եւ այլ ապրանք վերցնել : Երբոր նրանք կը հասնին արքայանիտա Մոսկուա քաղաք , պէտք է ներկայանան Բարձր Արքունի գործոց Գեղարանական Ատենի , եւ այն ժամանակ կը հրամայուի գործակալին Աստրախանի նման զննել , ցուցակներով հաշուել , որպէս զի ամեն բանը աչքի առաջ լինի եւ ոչ թէ թաղանթով եւ վերցնել Մեծ Արքայի գանձարանի օգտին որչեալ տուրք ապրանքի արժէքի համաձայն : Իսկ եթէ Մոսկուայում չեն ծախի բերած ապրանքը , այդ դէպքում հում մետաքսը 30 բուբլի հաշուելով իսկ արդաշը փութը 26 բուբլի , բուբլուց 10 դենգա վերցնել , իսկ միւս ապրանքից զարձեալ բուբլու հաշուով անգական արժէքի համաձայն , որովհետեւ իրենց ապրանքը Մոսկուայի արժէքից թանկ գնով կը ծախեն , եւ այդ ապրանքից ճանապարհածախս վերցնել Մոսկուայի արժէքի համաձայն բուբլուց 10 դենգա : Իսկ ինչ որ Մոսկուայում չեն ծախի եւ կը տանեն սահմանակից քաղաքները՝ Մեծ Նովգորոդ , Սմոլենսկ , Արխանգելեան քաղաք , այդ հում մետաքսից եւ այլ ապրանքից , որոնք օրիշ երկիրներում էլ պէտքական են , պէտք է Մոսկուայում փութին 9 ալաին ( ալաին = 3 կ . ) ճանապարհածախս վճարեն , եթէ փող չունենան , այն ժամանակ նրանք պարտաւորուում են վճարել մաքս ապրանքի 20-րդ մասը , իսկ ճանապարհածախս էլ մետաքսով եւ այլ ապրանքով Մոսկուայի արժէքի համաձայն : Եթէ վերոյիշեալ սահմանամերձ քաղաքներումն էլ չեն ծախի իրենց բերած ապրանքը եւ կ'ուզեն տանել անգործովեան երկիրներ , իրաւունք ենք տալիս ամենիւր , միայն մաքս պէտք է ամեն մետաքսը 40 բուբլի իսկ արդաշի փութը 36 բուբլի հաշուելով , բուբլուց 10 դենգա , եթէ փող չեն ունենայ — ապրանքի 20-րդ մասը : Անգործովեան երկրներում ծախելով ապրանքը եւ գնելով այնտեղի ապրանք , այդ ապրանքով ոսկով եւ եֆիմկաներով պէտք է վերագտնան Մեծ Արքայի սահմանաքաղաքներ եւ ուրիշ պետութեան միջով իրաւունք չունեն Պարսից երկիր վերագտնալու , որպէս զի ապրանքի մաքսը նրանց չը վճարեն : Այդ ապրանքից , որը կը թոյլատրուի Մոսկուայից գուրս տանել , վերցնել արժէքի համաձայն բուբլուց 10 դենգա : Իսկ ինչ վերաբերում է փոխուող ապրանքներին , սահմանամերձ քաղաքներից մինչև Մոսկուա եւ Մոսկուայից մինչև այդ քաղաքները ճանապարհածախս

վերցնել փութին մի պոլաինա ( 50 կ . ) . ուտելիքն էլ թոյլատրուում է ճրիաբար 100-ին 5 փութ : Այս 5 փութի հաշուում երբէք ուրիշ ապրանք չը տանել , այլ ամենայն խստութեամբ պարսկական եւ գերմանական ապրանքները փոխել անգականի հետ ըստ արժողութեան : Բացի մորթեղէնից եթէ օտարներից վերցրած կը լինեն նաեւ մաքուր՝ 14 հատ մի փունտ քաշող եփիմկա արծաթ եւ մաքուր ոսկեղրամ եւ անցնելիս այդ գրամներով ապրանք կը գնեն , այդպիսի ապրանքից մաքսը բաշխուում է Հայերին իրենց հոգացողութեան պատճառով , որովհետեւ Պարսկաստանից Մոսկովեան պետութիւն ապրանք են բերում եւ որ գլխաւորն է , հարկ է , որ իրենց ապրանքը այդ գրամի ծախեն , իսկ ձեռք բերած դրամով էլ սուսական ապրանք գնեն : Այն բոլոր ապրանքի համար , որ նրանք կը գնեն արտասահմանում եւ Մոսկովեան պետութեան միջով իրենց երկիրը կը տանեն , պէտք է մաքս վճարեն 2 ալաին եւ 2 դենգա բուբլուց եւ այդ էլ մի միայն Մոսկուայում եւ ոչ թէ ուրիշ քաղաքներում : Իսկ ինչ որ բացի գնած սուսական եւ գերմանական ապրանքից նրանց մօտ ոսկեղրամ եւ եֆիմկա կը լինի եւ նրանք կը տանեն Պարսկաստան , գրանից էլ բուբլի հաշուի մաքս վերցնել՝ ոսկեղրամը հաշուելով բուբլի , իսկ եֆիմկան պոլաինա , մաքսն էլ ամենաքիչը՝ բուբլուց ալաին , որ Պարսկաստանում այդ ոսկեղրամով եւ եֆիմկաներով մետաքս գնեն եւ անգական արձեստաւորներին մեծ պատուէրներ տան , գործը ընդլայնեն որպէս զի Մոսկովեան պետութիւն շատ եւ լաւագոյն ապրանք բերեն : Երբ Մոսկուայից Աստրախան կը գնան՝ ճանապարհածախս փութից 50 կ . վերցնել , իսկ ուտեստ էլ ճրիաբար 100-ին 10 փութ . եւ մի եւ նոյն հաշուում էլ Մոսկուայից մարդագլուխ վերցընել 5 ական վ . գրո գինի : Եւ երբոր արգէն Աստրախան կը հասնեն , այնտեղ էլ մաքսագետը դարձեալ կը նայէ կը գնեն բոլորը եւ նայած թէ իրենք Հայերն ինչպէս կ'ուզեն , իրենց ապրանքով , ցամաքով կամ ովով , ճանապարհ կրնան գէպի հայրենիք , այստեղ չը պէտք է ճանապարհածախս վերցնել : Ինչպէս նրանց գալուստը նոյնպէս եւ ծովով՝ լաստերով կամ ցամաքով՝ սալերով ապրանք բերելը Պարսկաստանից Աստրախան-Մոսկուա եւ սահմանաքաղաքները , կամ թէ սահմանաքաղաքներից Մոսկուա-Աստրախան , նորին Արքայական Մեծութեան հրամանով պէտք է ազատուած լինի սուղականներից եւ ամեն անտակ յարձակումներից , որի համար պէտք է վաճառականներին զինուած մարդիկ ուղեկցեն : Եթէ պատահի , որ կամ մեծ փոթորիկից եւ կամ ապրանքին ուղեկցող ծառայողների անհոգութիւնից ապրանքը ծովը թափուի , այդ դէպքումն էլ ճշմարտութեամբ քննելուց յետոյ ողորմաձարար վերաբերուել : Այս էլ յայտնի լինի , որ բերուելիք մետաքսի եւ այլ ապրանքի հետ , պէտք է նրանք բերեն Մոսկովեան եւ Գերմանական պետութեանց

մէջ ծախելու համար ուղտի բուրդը , որից նրանք իրենց երկրում  
այլ և այլ գործուածքներ են պատրաստում :

Պարսկական ապրանքները ընդունելու համար , ինչպէս նաեւ որպէս  
վերակացու եւ գործակալ նրանց ընկերութեան , որի պարագն է համա-  
ձայն Քրիստոսի ս . Աւետարանի արգարութեամբ հոգայ վաճառման դ-  
ները եւ սուսայ ու օտար երկրացոյց հետ ապրանքափոխութեան համար  
ըստ կնքուած պայմանագրի , հաստատում է Մոսկուայի բազմաժամա-  
նակեաց բնակիչ անդղիացի թումս թումասի բորի Բրէյնը , որը իր այդ  
ծառայութեան համար արժանանում է նորին Արքայական Մեծութեան  
ոգորմած հրովարտակին : Ի արիտուր այն բանի , որ նա պէտք է նրանց  
առեւտրական գործերով բնակուի Մոսկուայում եւ կամ թէ զնայ ուր որ  
հարկն է եւ Ատորխանումն էլ գործակատար ունենայ , նա պէտք է ըս-  
տանայ իրեն ծախսերի համար հարկատու վարձատրութիւն , որը որոշ-  
ուած է նրանց միջեւ եղած պայմանագրի մէջ : Որպէս զի Պարսկաստա-  
նից Մեծ Ռուսիա ապրանք թերելը տեւական լինի՝ սարկց տարի աւելի  
եւ աւելի ընդլայնուի եւ որպէս զի ոչ մի մամանակ որ եւ է արդէյր  
կամ վերաւորանք ու զրկողութիւն չը լինի , համաձայն Հայերի խնդրի  
յանուն նորին Արքայական Մեծութեան եղբայր Աբաս Շահեան Մեծու-  
թեան ամենասիրտիկ հրովարտակի մէջ մանրամասնօրէն գրուած է եւ  
Ստեփանի ու Գրիգորի հետ սղարկուած է : Այդ պատճառով էլ Ստեփա-  
նին եւ Գրիգորին եւ նրանց ժառանգներին արուած է այս հաստատուն  
եւ տեւողական հրովարտակը » : ( Արձ . Ա . 146-152 ) :

Այսպիսով առեւտրական գաշն արդէն կապուած էր , պայմաններն  
որոշուած եւ Հայ Ընկերութեան ներկայացուցիչները տանելով իրենց  
հետ Շահի անունով եւ իրենց արուած հրովարտակները պէտք է սկսէին  
Ռուսիա բերել հում մետաքս , արգաշ , ուղտի բուրդ եւ այլ ապրան-  
քեղէն եւ պէտք է առեւտուր անէին : 1667 օգոստոս 31 ին թումս Բրէյ  
նին արուեցաւ հաստատութեան հրովարտակ , բայց նախ քան այդ հը-  
րովարտակը , նա պետական օրէնքի համաձայն երդուեցաւ հաւատար-  
մութեամբ ծառայել ինչպէս պետութեան այնպէս էլ իրեն հաւատարմ  
ընկերութեան :

*[Faint, mostly illegible text at the top of the page, possibly bleed-through or very faded handwriting.]*

**ԳԼՈՒԽ Զ.**

1667 թ . յիբախի սկսուեցաւ կանոնաւոր վաճառութեան թիւն : Գոր-  
ծի սկիզբը զնելու համար Լուսիկեանի եւ Բոսողամանի հետ 40 վաճա-  
ռական էր եկած , որոնք տեղեկանալով իրենց իրմուռնքների մասին ,  
անմիջապէս սկսեցին առեւտուրը : Պարսից Սիբիլյանն Շահը ստանալով  
Ալէքսէյ Միխայլովչին հրովարտակը , համաձայնուեցաւ հայ վաճառական-  
ների հետ : Ինչպէս էլ իր կողմից պայմանագրերով հաստատուեց եւ 1669  
( 4080 ) թ . յանուն Հայ Առեւտրական Ընկերութեան՝ Եւրոպացուցիչ  
Լուսիկեան ու Բոսողաման հայերի եւ Ալէքսէյ Միխայլովչին զրկած  
հրովարտակներով որոշեց , որ նրանք արդէ աւտորանեն եւ ճանա-  
պարհին էլ ոչ մի արդիւք չը լինի :

Բայց այս էլ երկար չը տեւեց , որովհետեւ քաղաքական հարցերն  
այնպիսի լուրջ կերպարանք էին ստացել , որ Ուկրաինայում մեծ ապու-  
տամբութիւն բնկուեցաւ եւ « օյի մէջ եղած թնչուններին հրաման  
տուող » Ստեփան Մալին յայտնի ապաղապսեալ սկսեց իր հունձը :  
1667 թ . յունվար 30-ին Մոսկուայի նահանգի Անդրուսովա դիւղում Ռու-  
սիայի ներկայացուցիչ Օրդին-Նաչչակինը Լեհաստանի Գլխովիչ , Չավի-  
չա եւ Բրթոստովսկի ներկայացուցիչների հետ 13 ա . եւ 6 ամսուայ ժա-  
մանակամիջոցի դաշն կապեց , որի հիման վրոյց կիււ , Մոսկուայի եւ  
ամբողջ Ալվերսկայա երկիրը Ռուսաստանին մնաց , ( Չինուոնիկան հան-  
րազրտակ , Ա . էջ 412 ) , իսկ Լեհաստանին ՚ի միջի այլոց արուեցաւ եւ  
Ուկրաինոյ մի մասը , սակայն Մոլդովիայի հետեւադրքը չը կամեցաւ  
հնազանդուել Լեհաստանին եւ ծագեց ապստամբութիւն : Պետր Դորո-  
շենկօն , որ Անդր Դնեպրեան կաղախները էր եւ զնուման էր , միամտ-  
մանակ զնուեցաւ Ռուսիոյ եւ Լեհաստանի դէմ եւ Չապորոժցոց ու  
Ղրիմի թաթարներից կազմած զօրքով սկսեց յարձակուիլներ գործել եւ  
մի քանի ամբուլթիւնների տրեց : Բայց այս ոչինչ , մի աւելի սարսա-  
փեցուցիչ անձնաւորութիւն էլ երևեցաւ , որի անունը լսելիս սուս գիւ-  
ղացին թողնում էր իր աունը , տեղը եւ փախչում ինքն էլ չը գիտեա-  
լով թէ ուր , — դա Ստեփան Մալինն էր :

Ռազինը Չերկասկա քաղաքիցն էր եւ մի անվախ ու յոնդուզն կազակ : Տեսնելով որ իրեն չի յաջողում կազակներէ զօրադուռն գառնալը , նա իր յաւակնայեղ ընկերներէ հետ 1667-ին ամբողջա կամբռնեալով եւ Վոլգայի վրայ երթեւեկող , գլխաւորապէս Աստրախան ու կապան գնացող նաւերի վրայ սարսափ տարածեց : Երա յարձակումները մեծ վշահաս առեցին / ու Վաճստականներն , որոնց ճանապարհներից գլխաւորը Վոլգա գետն էր : Աստրախանի զօրագլուխը ( Վոեւոյա ) Իշխ . Ուրկովը նրա գէմ մի գունդ ուղարկեց , որոնց Ռազինը Եսայիկայի գետաբերանում սարսափելի ջարդ տուեց : 1668-ին նա իր գործողութիւնները կասպից ծովը փոխադրեց . տուրքի մասնեց Քեաչչ , Բարու , Աստրաբայ եւ ուրիշ ծովեզրեայ քաղաքները , կողոպտեց բազմաթիւ ուսու կան ու պարսկական տնտարանաւերը . բայց Պարսից նաւատորմիցի հետ ունեցած ընդհարման մամանակ՝ 1669-ին մեծ կորուստ ունեցաւ եւ վերապարձաւ Դոնի ափերում նոր գունդ կազմելու . որպէս զի նոր սլով գուրս գնաց ծովում եւ Վոլգայի վրայ ձկնորսութիւն անելու : Հայ վաճառականները ստիպուած եղան բողոքելու Դեսպանութեան Ատենին եւ յետոյ էլ Շահին . որը զիմեց Ալէքսէյ Միխայլովչին : Ալէքսէյ Միխայլովչիը վճռեց ամենայն խստութեամբ պատժել Դոնացիներին . սակայն ներեց որովհետեւ նրանք զղջացին եւ խոտաացան այլ եւս չտնել : Բայց Ռազինին հրաման ուղարկուեցաւ , որով յայտնուեցաւ նրան , որ եթէ չի գաղարեցնի աւարտութիւնն ու չի վերադառնայ Դոնի ափերը մահուան պատժի կ'ենթարկուի : Ռազինը ստիպուած եղաւ կատարելու այս հրամանը եւ կաշախնիցիք քաղաքում բնակութիւն հաստատելով մի պատգամաւորութիւնն ու զարկեց Մոսկուա եւ առաջարկեց իր ծառայութիւնները : Թագաւորը լսել անցում չը կտամեցաւ . ուր մնաց թէ պատգամաւորների միջոցով նրա հետ յարաբերութիւն սկսէր : Կատաղեց Ռազինը , հաւաքեց իր վաղեմի ընկերներին եւ 1670-ին յարձակուեցաւ Տարկի վերայ , կողոպտեց վրանաբնակ Թաթարներին եւ Ղայմուխներին , նուաճեց Ճարիցինը , Չկորնի-Ճարր եւ յունիսի 8-ին Աստրախանից 8 վերստ հեռու վրաններ խփեց եւ բանակեց եւ սկսեց գրաւել չրջակայքում եղած ամրոխին , որով կարողացաւ մեծացնել իր զօրքի թիւը : Քաղաքի Վոեւոյա Վոլգա իշխ . Պրոզորովսկին սկսեց հանգստացնել սարսափահար եղած բրնակիչներին , սակայն շատերը , մանաւանդ Պարսկաստանցի հայ եկ վաճառականները մասամբ կարողացան փախչել ծովով . մասամբ էլ բնական նրա թուրքիկ աւազակախմբերի ու ծովահնների ձեռքը : Քաղաքում մընացին բնիկները եւ 'ի միջի այլոց արեւն բազմացած պատկառելի հայ գաղութը : Սարսափելի էր յունիսի 21-ի գիշերն եղած յարձակումը : Իշխ . Պրոզորովսկին փոքրիկ գնդով սկսեց գիմարել , սակայն տեսնելով որ յաղթութիւնը Ռազինի կողմն է , եւ նահանջեց եւ մտաւ 600 հոգու հետ եկեղեցի , ուր ընկաւ ինքը իր զօրքի ու բնակիչներէ հետ :

Ռազինը իր մտ հաւաքել տուեց հայ , պարսիկ եւ գերմանացի վաճառականներին , իրեց ստացուածքը եւ հրամայեց սարսեցուցիչ անջանքներով սպանել : Բացի այս նա աւարի մասնեց լեկեզեցիները , կոչուպանց վաճառատները , գանձարանը , այրեց նաւահանգստում եղած նաւերը , որոնց մէջ էր եւ Հոլանտացի արհեստաւորների չինած Օրեօլ նաւը : Ով որ կարողացաւ ազատուել , սկսեցին փախչել եւ քաղաքը մնաց Ռազինի ձեռքին : Փախչողներէ մէջն էին նաեւ Զուլայեցի Աստուածատուր Սայթիւեան եւ Սաեփանոս Միչեսկեան վաճառականները , որոնք հասան Մոսկուա եւ բողոքեցին Դեսպանութեան Ատենին , եւ սկսեցին առեւարական հարցերը բոլորովին վերջացնել եւ խնդրեցին Ատենինց ազատութիւնն : Դեսպանական Ատենան լուծեան առեց այս բոլորը եւ հայ վաճառականն ընէ վերադառնալով իրենց հայրենիք , զազարեցին Ռուսաստանի հետ ունեցած յարաբերութիւնները : սակայն այդ գաղաքը երկար չը տևեց :

Ռազինը շարունակեց իր ճանապարհը գէպի Ռուսիա : Ամբոխը եւ գլխաւորապէս աղանդաւորները իրենց հարազատ թագաւորի գէմ ելան՝ զինուեցան : Այժմ սարսափը ընդհանուր էր : Ռազինի կուսակիցներէ թիւը 200,000-ի հասաւ եւ լուր տարածուեցաւ որ նա գնում է Մոսկուայի վրայ : Այս տղտամբութիւնն Մոսկուայի նահանգումն էլ արձագանք գտաւ : Թագաւորը սեռնելով , որ կոչը ամբոխը հեռու մէջ աւազակին , Միխայլուսկան մեծ զօրքով ուղարկեց նրա գէմ եւ Ռազինը Սիմբերսկ քաղաքի մտ մեծ պարսութիւն կրելով՝ փախաւ Սամարա : Մի քանի զօրապետներ գնցելով կարողացան խաղաղացնել ամբոխին , իսկ Միխայլուսկին սկսեց հարածել Ռազինին , որը իրեն վերջին պատասան բնաբեց Դոնի ափերը , սակայն այդ սեղ էլ մեծ ձեռ կերաւ եւ գերի բռնուելով 1671 ապրիլ 24-ին Մոսկուա դրկուեցաւ : որտեղ կիտայ-Դորոգի հրապարակում անուաման արին : ( Զինուոր , հանրագ . ԺԱ . էջ 62-64 ) : Միխայլուսկին յարձակուեցաւ Աստրախանի վրայ , գուրս քշեց Ռազինից նշանակուած ասաման Ուս Չերասթորովին եւ քաղաքը նորից խաղաղացաւ եւ չունչ տաւ :

Աստրախանի վերականգնման եւ Ռազինի պարսութեան լուրը հասաւ հայ վաճառականներին , սակայն այդքանով չբաւականացան նրանք , որովհետեւ նրանք կարծում էին , որ ծովահններից աղատուելը հեշտ բան չէր . մանաւանդ որ միայն Ռազինը չէր , որ կողոպտում էր , այլ նրան հետեւում էին բազմաթիւ խմբեր , ուստի եւ հարկ եղաւ նոր պայմաններ առաջարկելու եւ եթէ դրանք ընդունուէին , այն ժամանակ նըրանք պատրաստ էին նորոգելու իրենց թերի թողած գործը , իսկ եթէ չը յաջողուի , այն ժամանակ հինը կը շարունակուէր եւ Տաճկաստանի վրայով եւրոպա կ'անցնէին : Ռուսաց արքունիքն այդպէս չէր մտածում , նա հեշտութեամբ չէր կարող թողնել մեաքսի անուտուրը , խօ-

Ջայ Զաքար Սուրհասանը իր Փարնաուս անունով գործակառարին լուսիններէն նամակով Մոսկուա էր ուղարկել 1670 թ. և խնդրել ապահովութիւն : Մինչդեռ Փարնաուսը դեղերում էր Մոսկուայում, Դեսպանական Ատեանը մի հարց բարձրացրեց՝ իմանալու արդեօք հայ վաճառականները առեւտուրը չէ՞ խանգարում ռուսական արդիւնաբերութեան և վաճառականութեան : Պետական տուժարները զղայի եկամուտ ցոյց տուին, իսկ ռուս վաճառականները միաբերան վկայեցին, որ իրենց առեւտուրը աւելի յաջող է քան թէ նրանցից առաջ : Այս գոհացուցիչ պատասխանները արքային դրդեցին նորոգել այն մեծ գործը և մինչդեռ պատրաստում էր պատասխանել՝ նոր արտօնագիր տալ : Մոսկուա հասաւ Գրիգոր Լուսինեանը իբրև դեսպան Պարսից Սուլէյման Շահի :

Գ. Լուսինեանն իր հետ մի քանի յանձնարարական թղթեր էր բերել : Ա) Սուլէյման Շահի նամակը, որով վեհապետը վաճառականութեան ծաւալման հաւանութիւն էր տալիս և խնդրում, որ վաճառականներն ապահովուած լինէին ամեն տեսակ յարձակումներից և նրանց ջանքերը պսակուէին օգուտով : Բ) Հայ վաճառականական Ընկերութեան խնդիրը, որի մէջ յայտնում էին թէ ինչպէս են ստիպուել դադարեցնել ներքու տուրհաւեր և թէ պիտաւոր պտտածուր Ռազին աւազակայեան էր, ուստի խնդրում էին նորոգել նախկին յարաբերութիւնները և սրա համար էլ խնդրում էին ապահովութիւն : Գ) Աղուանից Պետրոս կաթողիկոսի կնիքակը, որի մէջ կաթողիկոսը յայտնելով իր ուրախութիւնը, որ այդպիսի առեւտրական յարաբերութիւն էր հաստատուել, մտղթում էր աջողութիւն և խնդրում միջոցներ ձեռք առնել, որ այդ գործը յարատեւ է : Դ) Սուլէյման Շահի հրովարտակը տուած 1669 (4080) թ. որ վերաբերում էր 1667 թ. պայմանագրի և որով Շահը համաձայն էր ամեն կերպ նպաստել գործի յաջողութեանը :

Մինչդեռ Լուսինեանը Դեսպանական Ատենի վարչապետ և աստիճանաւոր արտաքին գործոց Արտեմոն Մատվէնի հետ յարաբերութեան մէջ էր և աշխատում էր վերջացնել նոր արտօնագրի հարցը, Մոսկուա հասաւ Սահփան Բոմադամեանը, իր հետ բերելով թագաւորից ապսպրած հազուադէպ իրեղէնները, որոնք ՚ի միասին տուած 9062 ըուրլի էին գնահատուում : Թագաւորը մեծ հաճութեամբ ընդունեց ապսպրած իրերը և 1673 փետրուարի 7-ին շնորհեց նոր արտօնագիր Դեսպանական Ատենի միջոցով, որի մէջ գլխաւորապէս վնասների հարցն էր արձանուած : Մենք այդ արտօնագրից փոխադրութեամբ մէջ ենք բերում զլիսաւոր մասը :

... Ի լրումն նորին Արքայական Մեծութեան ձեզ շնորհած նախկին հրովարտակի, որ վերաբերում է մետաքսի առեւտրին, իր եղբոր նորին Արքայական Մեծութեան Սուլէյման Շահի հպատակ Հայերից համար որոշուեցաւ : Եթէ Վոլգայ գետի վրայ որ և է տեսակ աւազակութիւն

երևայ, որից Աստուած ազատ պահէ, և այդ ճանապարհը առեւտրականների համար վաճառաւոր լինի, դրա համար Մեծ Արքան հրամայեց, որ դուք ՚ի զուշութիւն Հայերից, Աստրախանից անմիջապէս գրէք նորին Շահու թեան Մեծութեան սահմանի ստաջին իշխանանիստ քաղաքի իր Բոյարներին և Վոեվոդաներին, հաղորդելով աւազակութեամբ ըզբաղուող մարդկանց (և տեղերի) մասին, որպէս զի այդպիսի ժամանակներ ձեր Ընկերութեան գործակաւորներն ու այլ վաճառականները մետաքսով ու այլ ապրանքով Պարսկաստանից Աստրախան չըզան և այդ ճանապարհին չը վնասուեն աւազակներէրից : Մեծ Արքան այդ բանի առաջըն առնելու համար հրամայեց՝ Բոյարներին և Վոեվոդաներին ուղարկել իր Արք. Մեծութեան հրովարտակները և խիստ հրաման, որպէս զի նոքա այն աւազակների մասին, որոնք Վոլգայի որ և է մասում երևան կըզգան, որից Աստուած ազատ պահէ, տեղեկութիւններ հաւաքեն և չուտազնաց սուրհանդակի ձեռքով նամակով յայտնեն նորին Արք. Մեծութեան իշխանութեան ներքոյ եղած Աստրախան քաղաքի Բոյարներին և Վոեվոդաներին : Այս բանի վերաբերելով Աստրախան և կամ ուրիշ քաղաքներ ուղարկուած Ն. Արք. Մեծ. հրովարտակների պատճէնները կը արուին ձեզ, իսկ այժմ, ինչպէս նաև տայ Աստուած և այսուհետև, Աստրախանից մինչև արքայանիստ Մոսկուա ճանապարհը ապահով է և ոչ մի տեսակ վախ չըկայ, այդ պատճառով էլ Պարսկաստանից Ն. Ա. Մեծ. կալուածք՝ Աստրախան եկող հայ վաճառականների համար Ն. Ա. Մ. Բոյարներին և Վոեվոդային հրամայուած է՝ պայմանագրի համաձայն վերցնել մետաքսից ու պարսկական այլ ապրանքից մաքս և Աստրախանից տալով ապահով լաստեր, ճանապարհ դնել ուղեկցող պահապաններով մինչև Մոսկուա, եթէ պտտահի, որ ձեր ազրանքը ջուրը թափուել, Մեծ Արքան հրամայեց այդպիսի ապրանքից ոչ մաքս և ոչ էլ ճանապարհածախս վերցնել, իսկ եթէ սպրանքատար մարդոց և կամ թէ ուղեկցողների անխուժութիւնից ցամաք և կամ ջրէ ճանապարհին ապրանք կը կորչի, այդ կորած ապրանքի համար Մեծ Արքան մեզ հետեւեալ հրամանը տուեց. խուզարկել այն մարդկանց, որոնք այդ ժամանակ այնտեղ են եղել և եթէ խուզարկութեամբ և կամ ապացոյցներով կը յայտնուի, թէ ով է եղել այդ կորստեան պատճառը, կորած ապրանքի գինը ստանալ նրանից և տալ ձեզ Հայերից, եթէ նոյն իսկ կիմանաք թէ ովքեր են գողերը (և որոնց վրայ էլ խնդիր կը ներկայացնէք), այնու ամենայնիւ կորած ապրանքից չի վերցնուի ոչ մաքս և ոչ էլ ճանապարհածախս, իսկ հէնց որ դուք Հայերից ձեր ընկերներով վերոյիշեալ ապրանքով Մոսկուա կը գաք, մեր Մեծ Արքան հրամայեց, որ դուք յիշեալ ապրանքով իր հպատակ ռուս մարդկանց հետ ազատ առեւտուր անէք, միայն եթէ հարեան պետութեանց և Ռուսաց արքունիքի միջև մի որ և է պառակտումն առաջանայ, այն ժամանակ զէպի

սահմանաքաղաքները եւ ծովի մի ս ափին եղած գերմանական պետութեան  
 երկիրները տանող ճանապարհները կը փակուին : Եթէ պատահի , որ ձեր  
 մետաքսն ու այլ պարսկական ապրանք մեր Մեծ Արքայի աստարական-  
 ները չը գնեն , այն ժամանակ թէ մետաքս եւ թէ մի ս տեսակ ապրանք  
 կը գնէ Ն . Արք . Մեծ . արքունի գանձարանը եւ ձեզ կը վճարէ սոկեղրամ-  
 եւ մի եւ նոյն մամանակ այնպիսի ապրանք , որը ձեզ ձեռնառու կը լինի .  
 մետաքսը կը հա . տի փո թը 35 բուրջի , իսկ արգաչը 30 բ . իսկ միւս  
 տեսակ վաճառելի ապրանքի փոխարէն ձեզ կը արուի սուսական ապրանք  
 ժամանակի արժողութեան համաձայն եւ ձեռնառու գնով : Իսկ ինչպէս որ  
 առաջ ձեր Հայոց Ընկերութիւնը թրքաց պետութեան եւ գերմանական  
 երկիրների միջով եւ այլ ճանապարհներով մետաքսով եւ ուրիշ ապրանք-  
 քով գերմանական պետութեան էր գալիս , ձեզ Շահի Մեծութեան հպա-  
 տակ հայ եւ այլ ազգի վաճառականների պատուիրում է այլ եւս այլ  
 ճանապարհներով չը գնալ : Եթէ այլ պետութիւններից հում մետաքս գը-  
 նելու համար Պարսկաստան օտարազգի ասեւորականներ կը գան , դուք ,  
 մետաքսը բացի Ռուսաստան տանել թերեւոյց , նրանց ծախելու իրաւ-  
 ւունք չունիք . իսկ մի ս տեսակ վաճառքը կարող էք ծախել , որովհե-  
 տեն նորին Մեծութիւն Շահը այդ բանի մասին բանաւոր յայտարարու-  
 թ իւն է արել , բացի այդ Գրիգորը խոստում տուեց ինչպէս իրեն հա-  
 մար . այնպէս էլ Հայոց Ընկերութեան կողմից , իսկ օտարականների  
 համար Շահի հրամանի համաձայն ատանձին պատուէրներ կը արուին ,  
 իսկ մաքուր , ինչպէս մինչեւ արքայանիստ Մոսկուա քաղաք եղած տեղե-  
 բում , նոյնպէս էլ արքայանիստ Մոսկուայում ծախած ապրանքից , կը  
 վերցնուի այնպէս . ինչպէս որ Ն . Արք . Մեծ . Իր ձեզ Հայ Ընկերու-  
 թեան տուած նախկին ողորմած հրովարակի մէջ որոշել էր : Մնացած  
 պայմաններն էլ ձեր խնդրի համաձայն Ն . Ա . Մեծութեան հրամանով  
 այժմ վերահաստատուած են եւ որոշուած եւ այս պայմանադրի վրայ  
 խփուած է Մեծ Արքայի պետական կնիքը , որպէս զի այսուհետեւ ան-  
 խախտ կերպով գործ դնուին բոլոր կէտերը (\*) ( Արձան . հատ . Ա . էջ  
 155-157 ) :

Այս հրովարտակը մեծ ուրախութիւն պատճառեց Գրիգոր Լուսինկա-  
 նին եւ Խօջայ Չաքար Սուրճատեանցի գործակալ Ստեփան Բոմպոմեա-  
 նին , եւ երկուսն էլ արձակման իրաւունք ստանալով՝ վերադարձան

(\*) Այստեղ հարկաւոր է նկատել , որ այս բարձրագոյն տուած հրովարտակն ը  
 գրուած են հին ռուսական սլավոնականի հետ խառն լեզուով եւ շատ տեղերը դժուար  
 հասկանալի են . մենք աշխատեցինք փոխադրել այնպէս , որպէս զի մտքի հարազատ  
 թիւնը մայ , իսկ թարգմանել ոչ միայն մեր ու ժից վեր է , այլ հարկաւոր է նախ սո-  
 վորել ժի գարու ռուս լեզուի քերականութիւնը :

Աստիճանով Պարսկաստան , Այնուհետեւ սկսուեցաւ համարձակ երթե-  
 ւեկութիւն եւ վաճառականական գործն հետզհետէ զարգացաւ : Հայ վա-  
 ճառականների Մոսկուայի ժողովատեղին Բելիյ զորոյ կոչուած քաղա-  
 քամասում եղած հիւրատունն էր , որտեղ առաջին անգամ Հայերը ա-  
 եւարական տներ բաց արին : Նրանցից շատերը հեազհետէ բոլորովին  
 Մոսկուա եւ Աստրախան տեղափոխուեցան , ու նեցան սեղհական հայ  
 գործակալներ (ագենտներ) , որոնց պաշտօնն այն էր , որ գնում էին այլ  
 եւ այլ քաղաքներ ապառիկներ ժողովելու համար , որի համար եւ ա-  
 ռաջուց Դեսպանական Ատենից Թոյլուութիւն եւ անցագիր էր արոււմ  
 նրանց :

Վերիւ յիշուած արտօնագրի ստանալուց յետոյ Պարսկաստանից ա-  
 ռաջին վաճառականը , որ Ռուսաստան եկաւ , զա Նաղաւի Գրիգորեանցն  
 էր , որ 1674 թ . յունուար 31-ին իր ընկերների հետ մետաքսով Մոս-  
 կուա հասաւ : Ե . Գրիգորեանցը մինչեւ նոյն տարւայ յուլիսի 8-ը Մոս-  
 կուայում մնաց եւ խնդրեց Դեսպանական Ատենից , որ իր բերած մե-  
 տաքսը արբունի գանձարանը գնէ , որ եւ կատարուեցաւ եւ նա ռուսա-  
 կան ապրանքով Պարսկաստան վերադարձաւ : Աչքի տառջ ունենալով որ  
 Ե . Գրիգորեանցը առաջին եկողն էր , ռուսի եւ նա երբ Պարսկաստանից  
 դուրս էր եկել՝ իր հետ Գրիգոր Լուսինկանից նամակ էր բերել Դեսպա-  
 նական Ատենին , իսկ յետոյ եկողներն այլ եւ կարիք չունէին յանձ-  
 նարարականներով գալու : 1675 թ . յունուար 4-ից հետզհետէ Մոսկուա  
 հասան ի միջի այլոց հետեւեալ վաճառականները - Մելքիսէթ Աստուա-  
 ծատրեան , Յակոբ Պողոսեան , որ տմբողջ մի տարի եւ մի ամիս Մոս-  
 կուայում մնաց , Յակոբ Աւետիքեան , Յակոբ Հախնազարեան , որը ա-  
 մենքից համարձակ գանուեցաւ եւ Աստուածատուր Մկրտչեանի հետ 1675  
 թ . յուլիս 19-ին Արքունի գրան ազերսպիք ներկայացրեց , որի մէջ  
 նա քննելով ասեւորական կարգերը , խնդրում էր Մոսկուայից Աստրա-  
 խան տանելիք ապրանքից մաքս չը վերցնել , որովհետեւ աւանց այն  
 էլ նա մաքս պէտք է վճարէր Պարսից պետութեան : Ռուսաց թաղաւորը  
 Վոլոգ-Դա եւ կարգողոյ քաղաքի Վոեմոզաներին գրել էր , որ նոքա  
 նոյն քաղաքների վաճառականներին առաջարկեն Աստրախանի եւ Պարս-  
 կաստանի հայ վաճառականների պէս ձեռնամուխ լինեն մետաքսի առեւ-  
 տրին . սակայն այն տեղերի վաճառականները բացէ ի բաց հրաժարուե-  
 ցան առարկելով որ նախ անտեղեակ են եւ երկրորդ էլ անսովոր : Այս  
 մերժումն ունեցաւ իր փառաւոր հետեւանքը . Ռուսաց արքունիքն ըզ-  
 դաց , որ հայ վաճառականները չատ աւելի պիտանի են , ռուսի եւ  
 երբ Հախնազարեանի ու Մկրտչեանի յարուցած մաքսախնդիրը մէջ ըն-  
 կաւ , թաղաւորը հրամայեց ազատել հայ ասեւորականներին այդ մաք-  
 սից :

Բացի սրանցից , հեազհետէ գնացին Մոսկուա՝ Յակոբ Նազարեանը ,

որը իր մեծաքսը վաճառելու սուս վաճառական կապիտալի հետ վերջին բանուկով եւ ձեռուկով, ստիպուած եղաւ բողոքելու Ս. Յովնանի հետեւեալ իր բնական եւ գաղթ Չաքարի Յակոբեան եւ Յովնանի Մակարեան, վերջինս 1676-ին գնաց Արխանգելսկ ասեւտուր անկառ եւ վերադառնալով հայրենիք 1678-ին կրկին երկու անգամ ապրանք ստորա Մոսկուա եւ Արխանգելսկ, Գրիգոր Յովնանիսեան, Դաթեան Յիսուսի, Յովնանիսեան Գովլաթ որոնք սուջին անգամ զեկտեմբեր 24-ին Մոսկուա հասան եւ այնտեղ անկարողան անու հաստատելին եւ Էրկար ժամանակ անեւտուր արին, երջն ստորայ զեկտեմբեր 31-ին Չաքարի Յակոբեանը մի մեծ խմբով եւ բաղձատեսակ ապրանքով Մոսկուա հասաւ :

Հոխնազարեանից արժարծուած խնդիրը, ինչպէս տեսանք, յաջող լուծուի ստացաւ, սակայն այդ էլ Էրկար չը տեսցայ որով ձեռու Աստրախանի մագրատունն հրամարուելով ամենայն սեւտակ կարգադրութիւններէից, պահանջեց, որ ըստ նախկին սովորութեանց մայր վըճարենու Եազուփ Պուղոսեանը, որ Մոսկուայում անկարողան անու ունէր 1676-ին անային քանակութեամբ սղործելով որ նա գնել էր Մոսկուայում եւ Արխանգելսկում, հասաւ Աստրախան, Այնտեղ նրանից մաքս պահանջեցին, սակայն նա չու վեց վճարել եւ անկարող եւ աւ Մոսկուա վերադառնալու, սրանց նա Աքրոնի քին բողոք ներկայացրեց եւ բաւարարութիւն խնդրեց, Ռուսաց արքային իրաւացի համարեց Ն. Պուղոսեանի բողոքն եւ խնայել հրամանադրեց Աստրախանի մաքսատան կատարելու արքայի հրամանը իսկ Պուղոսեանն էլ արտօնաթղթով յունիսին Աստրախան վերադարձաւ եւ ապրանքով անցաւ Պարսկաստան :

ԳԼՈՒԽ Է.

Ինչպէս էլ ընդարձակուէր ասեւտրական գործը, այնու ամենայնիւ Հայոց Բնկերութեան համար թիչ էր եւ ասեւտրական շրջանն էլ շատ քիչ, նրանք գրեթէ չէին, որ իրենց հայրենակից Հին Զուղայեցի, Հին Կախիջեւանցի եւ Նրեւանցի վաճառականները համարեա՝ ոչ մի յարաբերութիւն չունէին Ռուսաստանի հետ, այլ նրանք աւելի կապուած էին Ամստերդամ, Ճենովա, Մարսէյլ եւ այլ քաղաքների հետ :

Նշանաւոր զեր են խաղացել հայ վաճառականները Եւրոպայում հայոց ապագրութեան գործում. նշանաւոր եւ ստում, որովհետեւ ժեւրդ գարում հայ վաճառականը զգում էր գրգռի կարիքը, նա չէր խնայում իր լուծման եւ իր ծախսով գրքեր էր հրատարակում, վերցրէր մեր անցեալ ապագրութեան շրջանին վերաբերեալ գրքերի յիշատակարաններն եւ կը համոզուէք, որ գործի գլուխ են կանգնած մի տիրացու եւ մի վաճառական : Բայց որպիսի զոնոգութիւննե՞ր, զրկանքնե՞ր, այնուամենայնիւ գործի սէրը չի մետել նրանց մէջ եւ համարեա՝ մինչեւ անցեալ դարու կէսերը մնացել էր այդ զեղեցիկ սովորութիւնը, եւ վերջերս այդպիսի մեկենասներ երեւում են միայն Վենետիկ տպուած գրքերի վրայ, (մենք չենք հաշուում այլ տեղերում տպուած գրքերը, որոնցից գուցէ մի քանիսն են բաղդ ունեցել մեկենասներ ունենալու), եւ կարծես նրանց մի տեսակ մենաշնորհ է տուած : Ամստերդամում այդ ժամանակներ ասեւտուր էր անում Ռսկան վարդապետի եղբայր Աեւտիս վաճառականը, որ մի քանի անգամ եւրոպա է գնացած եղել, Պետրոս Ապրոն (որի մասին առանձին կը խօսենք) եւ այլք :

Հայ Բնկերութիւնն ու միւս վաճառականները համոզուած լինելով, որ իրենց համար մեծ օգուտ է, եւրոպայի հետ կապուած լինելը, գեւ 1673 թ. հարց զարթացրին Մոսկուան կեդրոն դարձնելու եւ այդ կեդրոնից անցնել նաեւ ողոսական այլ յաղագրներ, որոնք սահմաններին մօտ էին եւ մանաւանդ որ Ռուսաց պետութիւնն արդէն ինչոր մասնացոյց

էր արեւ քանի մը քաղսքներ . ինչպէս Արխանգել , Նովոգորոպ եւ Սիւ-  
 լինսկ , եւ որովհետեւ մետաքսի գինն որոշուած էր տարածութեան-քա-  
 ղաքի հետաւորութեան համաձայն , ուստի եւ փորձեցին անցնել Ռու-  
 սաստանից դուրս Շվեդիա Նարվայի միջով : 1673 փետրուար 7-ին ներ-  
 կայացրին մի խնդրագիր յանուան Գեոպանական Ատեանի , եւ խնդրեցին  
 թոյլտուութիւն , որ եւ չուտով ստացուեցաւ : Այս թոյլտուութեան  
 մասին չուտով յայտարարուեցաւ Հայ Ընկերութեան եւ 1676 թ. արդէն  
 Նազուփ Գրիգորեանն իր գործակատարներով անցաւ Արխանգել : Նա-  
 զուփ Գրիգորեանի օրինակին հետեւեցին նաեւ Յովհաննէս Մակարեան ,  
 Զաքարիա Կիրակոսեան եւ Հայրապետ Մատթէոսեան վաճառականները ,  
 որոնք մայրսի վերջերին արդէն Արխանգելումն էին : Յունիս 12-ին  
 Սարգիս Նաղարեան եւ Յակոբ Աւետիքեան վաճառականները զարձեւ  
 մեծ ապրանքով Արխանգել գնացին : Այս երթուելով իւրեն օրէ ցօր կա-  
 նոնաւոր ընթացք ստացաւ եւ որովհետեւ Արխանգելում տօնավաճառ էր  
 լինում , ուստի կարիք զգացուեցաւ մի մշտական մարդ ունենալու , ո-  
 բրը կարողանար նրանց առեւտուրն առաջ տանելու , ուստի եւ մի նը-  
 շանաւոր առեւտրականի հետ , որի ազգը Լուզին էր , պայմանաւորուե-  
 ցան եւ գործակալ նշանակեցին եւ Ռուսաց արքայինքին էլ զիմեցին  
 հաստատելու Լուզինին : 1676 թ. յուլիսի 13-ին Գեոպանական Ատեանն  
 հաստատեց Լուզինին իր պաշտօնում եւ հայ վաճառականներն էլ պայ-  
 մանաւորուեցան նրա հետ , որ նա ընդունէ նրանց ուղարկած մետաքսն  
 ու միւս ածաւակ ապրանք եւ եթէ իրենք բացակայ լինեն՝ օժտավաճա-  
 ուրն ի վաճառ հանէ : Սրանով ուրեմն երկու պաշտօնական գործակալու-  
 թիւն ունէին , բայց Աստրախանում ոչ միայն գործակալութիւններ կա-  
 յին , այլ եւ իրենց առեւտրական աների բաժանմունքներ էին հաստա-  
 տել եւ ինչքան մեծք խորն ենք թափանցում , աւելի ու աւելի համոզ-  
 ւում ենք , որ Պարսկահայ վաճառականները միանուպ ապրանք էին  
 բերում Աստրախան , իսկ այնտեղից մաս մաս արտահանում Մոսկուա  
 եւ ուրիշ տեղեր :

Չընայած այն հանգամանքին , որ Գեոպանական Ատեանն արդէն  
 հրամանագրել էր Աստրախանի Վոեվոդային Հայերին բախշելի մարտային  
 զինուորութիւնների մասին , այնուամենայնիւ մաքսատունն ու Վոեվո-  
 դան առհասարակ աշխատում էին ճնշել վաճառականներին եւ այլ եւ  
 այլ զրկանքներ տալիս , Մի խումբ հայ վաճառականներ , որոնցից  
 մեզ հասել են միայն չորս մարդու ազգանուն՝ Դու իթ Բողումեան , Յա-  
 կոբ Պողոսեան , Յակոբ Աղոթեան եւ Սիմէօն Աւդուլեան , մեծ ապրան-  
 քով Աստրախան հասան : Վոեվոդան հրամայեց մաքս վերցնել , սակայն  
 վաճառականներն բացէ 'ի բաց հրաժարեցան վճարելուց , ուստի եւ Վոե-  
 վոդայի հրամանով ապրանքն արքունի գանձարանին յանձնուեցաւ 'ի  
 պահպանութիւն եւ յայտարարուեցաւ նրանց , որ մինչեւ չը վճարեն ,

ապրանքն իրենց չը վերադարձուի : Հայերն , առանց ժամանակ կորցնե-  
 լու , անմիջապէս Մոսկուա գնացին եւ 1676 թ. 6-ին յունիսի Գեոպա-  
 նական Ատեանին բողոք ներկայացրին եւ խնդրեցին որ արքունի գան-  
 ձարանը վերցնէ հասանելի մաքսավճարը , իսկ մնացած ապրանքն զինն  
 լիովին վճարէ իրենց : Թագաւորն լսելով Վոեվոդայի օրէնքին հակա-  
 ոակ վարմունքի մասին , նոյն ամսի 25-ին բարձրագոյն հրովարտակ  
 տուեց յանուն Վոեվոդայի , որի մէջ պարզ կերպով որոշուած էր մաք-  
 սավճարի հարցը , եւ հայ վաճառականն Յովակիմ Մակարեանի ձեռքով  
 ուղարկուեցաւ Աստրախանի Վոեվոդային : Այս յաջողութիւնն աւելի ու-  
 գեւ որեց վաճառականներին եւ երեք տարի շարունակ իրար ետեւեց  
 բազմաթիւ վաճառականներ եկան , այնպէս որ այս գործն այն գիտի ըն-  
 թացք ստացաւ , որ ուստ առեւտրականների մէջ զարթեցրեց մի միաք  
 — արդ՞օք մի մրցումն չէ , որ քայքայում է նրանց գործը , թէպէտ  
 իրողութիւնն ամէն կերպ եւ ամէն կողմից հաստատում էր , որ հայ վա-  
 ճառականների երեւալու օրից առեւտուրն արտոյ կերպով դարձացել էր  
 բազմակողմանի օգուտներ առել թէ ժողովուրդին եւ թէ պետութեան :  
 Պետութիւնը զգում էր այս բոլորը եւ ամէն կերպ նպաստում գործին ,  
 սակայն ուստ վաճառականներն , չը նայած որ իրենց գործը բարելաւել  
 էր , գժգոճ էին պետութիւնից եւ այս դժգոհութիւնն ծածուկ չը մնաց :  
 Նրանք ասում էին , որ Հայերն էլ երկրորդ Անգղիայիք են գամնում ,  
 որոնք ողորդել էին ամբողջ եւրոպան եւ առեւտուրի սանձը ձեռքին՝ թա-  
 գաւորում էին : Գրան էլ գեղ գանուեցաւ , ուստ վաճառականներն 'ի  
 մի խմբուած մի խնդրագրով զիմեցին թագաւորին 1679 թ. յունուար  
 3-ին աւարկելով , որ թէպէտ պետութիւնն աշխատում է առեւտուրը  
 տարածել Հայերի ձեռքով , բայց այդ գլխով չէ կարող վաճառականները վը-  
 նաւում եւ եւ զրկանքներ կրում : Թարեխում թագաւորը գուցէ ու-  
 ըախ էր , որ իր ժողովուրդի մէջ վաճառականութեան նախանձ կայ եւ  
 առաջնութեան հարց , բայց նա չէր կարող մտածալ եւ այն , որ կար-  
 գուցի ու Վոեվոդա քաղաքի վաճառականները , որոնք նշանաւոր վա-  
 ճառականներ էին , հրաժարուել են իր հօր ժամանակ մետաքսի առեւ-  
 տրից , յայանելով , որ իրենց համար դժուար է այդ գիտի պատասխա-  
 նատու առեւտրով զբաղուելը եւ վերջապէս Գեոպանութեան Ատեանը ,  
 որի միջոցով ներկայացուել էր ուստ առեւտրականների բողոքը , մի-  
 անգամ ընդ միշտ հակառակ էր նրանց բողոքի մէջ եղած լինակներին  
 եւ համաձայն թագաւորի հրամանի . բողոքն աննստեւանք մնաց : Թա-  
 գաւորը միայն այն չէր մտածում , որ Հայերն գային եւ գնային , այլ  
 նա ուզում էր սիրով եւ քաղցրութեամբ գրաւել նրանց , որպէս զի նո-  
 քա ընդ միշտ փոխադրուէին Ռուսաստան եւ իրեն հպատակ գամնային :  
 Այդ ցանկութիւնը մասամբ կատարուած էր Աստրախանի վերաբերեալ ,  
 բայց նա ուզում էր նրանց իրեն մայրաքաղաքում կեդրոնացնել եւ հար-

կաւոր զէպօսում նա անմիջապէս հոգում էր նրանց խնդիրներն աւելի լայն չափով կատարելու : Հայոց մէջ արդէն արծարծուել էր ազգային եկեղեցի ունենալու հարցը , Ռուսոյ արքունիքը վաղուց արդէն կրօնի , լեզուի , եկեղեցու ազատութիւն էր շնորհել եւ գործն աշտպէս փայտաշէտուց յետոյ քննել՝ ոչնչացնելն անկարելի էր եւ հակառակ Ալէքսէյի Միխայլովչի ցանած սերմերին , որոնք նրա որդու Ֆեոդոր Ալէքսէյի վիչի ժամանակ արդէն ծրար էին արձակել : Թաղաւորը գեո պատանի էր եւ նրա սիրելիներն՝ նրա գահ բարձրանալու (1676) օրին արդէն թագաւորում էին եւ թագաւորի ընթացիկ գործերն ստաջ տանում : Ահա այդ մարդիկ , ինչպէս եւ զբանցից գլխաւորը՝ Բօյեարին Եւզըրիկովը վճռել էին աւելի մեծ արտօնութիւններ տալ Հայերին , որպէս զի պետական գանձարանն աւելի օգտուէ : Ներքին կեանքն աշխոյժանայ եւ ներթափանչ էր բարձրանայ :

1679 թուականը միայն այդ կողմից չուրախացրեց Հայերին , այլ մի նոր աւելի ուրախաւիթ զէպօ էլ տեղի ունեցաւ , որով հայ առեւտրականները ինչնամիներն աւելի ու աւելի կատարեցան , բայց ի՞նչ կարող էին անել , երբ թագաւորի հրամանը պէտք է ամէն ուս թէ օտարազգի նպատակի համար պաշտելի՝ սուրբ լինէր : 1679 թ. կարծես թէ մի նոր լուսափայլ արեղակ էր եւ բարեխնամ թագաւորը հրամայեց յայտարարել Աստրախանցի ու Պարսկաստանցի հայ վաճառականներին , որ Չատկին՝ ապրիլ 24-ին բոյորեքեան ի միասին գան իր մօտ Ա. Յասրուլինը շնորհաւորելու եւ թագաւորի աջը համբուրելու : Ուրախութեան չափ չը կար եւ Հայերը ներկայացան օղորմած թագաւորին : Այդ ժամանակից սկսած աջը համբուրելը սովորութիւն դարձաւ , իսկ 1686 թ. ապրիլ 8-ին Չատկին արքունիքում բոլոր Հայերը ճաշով հիւրասիրուեցան : 1688 ապրիլ 19-ին էլ ճաշի փոխանակ 110 բուբլի արծաթ դրամ ստացան : Պէտք է նկատել , որ Հայերն աւելի ու աւելի յարգանքի ու արտօնութեանց արժանացան Սոփիա իշխող-խնամակալուհու օրով :

Մաքսի ու ճանապարհածախսի գործն առ հասարակ գծուարութիւններէ էր տեղիք տալիս , որովհետեւ շատ անգամ պատահում էր , որ պետական պաշտօնականներն օգտուելով Հայերի միամտութիւնից եւ կամ նորեկների ուստական գրամի հաշիւը չը գիտենալուց՝ աւելի էին վերցվաճառականներ՝ Աղեքսանդր Բարակրաչեան , Յովակիմ Մակարեան , Մարտիրոս Մանուկեան եւ Սարգիս Սարգսեան : Աստրախանից ապրանք տանելիս ստիպուեցան աւելի վճարելու քան պէտք է վճարէին , ուստի եւ Մոսկուա հասնելով բողոքեցին Դեսպանական Ատեանին՝ եւ խնդրեցին աւելորդ վճարածն ետ տալ : Դեսպանական Ատեանն բաւարարութիւն տուեց նրանց եւ կրկին հրամանագրեց Աստրախանի Վոեվոյային անկանոնութեանց տեղիք չը տալու :

Հայերն առհասարակ օրէ ցօր նոր նոր հարցեր էին բարձրացնում , որպէս զի առեւտուրը կանոնաւորուի եւ աւելի ու աւելի լայն ծաւալ ստանայ : 1682 թ. 29-ին մայիսի Դաւիթ Բարզամեան հայ վաճառականը , որ վաղուց արդէն առեւտուր էր անում Աստրախանում եւ Մոսկուայում , խնդրեց պետութիւնից , որ իրեն իրաւունք տան Արխանգելսկի վրայով արտասահման անցնելու : Արքունի Դուսն թոյլ տուեց եւ դարձեալ առանձին օրէնքներ որոշեց , որի հիման վրայ էլ բազմաթիւ վաճառականներ եկան Մոսկուա արտասահման գնալու : մենք գրբանցից մի քանիսի անունները միայն կը յիշենք , ինչպէս՝ Եղիա Յովակիմեան , Աւետում Հայրապետեան (1) , Անուշ Վարդանեան , Սափար Բարսեղեան ( որի մասին յետոյ կը խօսենք ) , այլ բնիկներով ( որոնք Նով-գորոզով գնացին արտասահման 1686 նոյեմբեր 1-ին ) , այնուհետեւ 1687 ապրիլ 20-ին Արխանգելով արտասահման անցաւ Աղաջան Աւետիքեան , Բարսեղ Բարսեղեան , որը մի քանի անգամ արտասահման գնաց : Բարսեղեանը 1695 թ. Եւրոպայում գնած ապրանքով Աստրախան էր եւ Մօշնեցի զեղացիներից կողպատելով ու ձեռուկով բողոքեց Դեսպանութեան Ատեանին եւ պահանջեց իրեն բաւարարութիւն տալ , սակայն գործին ընթացք չը տալու պատճառով 1696-ին ընդ միշտ վերագարձաւ իր հայրենիք եւ հակառակ պայմանագրի՝ Տաճկաստանի վրայով Եւրոպա անցաւ առեւտուր անելու : Բացի այս՝ 1687-ին արտասահման անցան Ամաջան Արբաճամեան եւ Աւդուստ (°) Աւետիսեան , իսկ 1688 թ. յունիս 2-ին էլ Հայրապետ Մատթէոսեան , Չաքար Մատթէոսեան եւ Պօղոս Յովհաննէսեանց եւ այլն :

Այսպիսով ուրեմն հետեւեալ քաղաքների հետ գործ ունէին Հայերը՝ Աստրախան , Մոսկուա , Արխանգելսկ , Մոսկոնսկ , Եովգորոզ , Բայրայս՝ հետագայում երեւում են Նարվա , Ղազան , Օրէնբուրգ , Կամենից , Լեմբերգ , Թէոդոսիա , Խերսոն , Ղալար եւ այլն :

1690 յունուարին Մոսկուա հասաւ Ատեփան Մափարեան . թափչենցը 15 ընկերներով եւ բողոքեց որ ինչպէս Աստրախանում , նոյնպէս էլ ուրիշ քաղաքներում ապրանքը ձերբակալու թեան է կնիթարկուել եւ պահանջեց որ իր վնասները հատուցուին : Բացի այս՝ Ատեփան Մափարեանը ուրիշ հարցեր էլ բարձրացրեց : Դեռ 1683 թ. յունվար 13-ին Հայերին իրաւունք տրուեցաւ Մոսկուայում վաճառատաներ բանալու եւ

(1) Ինչպէս Աւետում Հայրապետեանը , այնպէս էլ նրա որդիք ու թոռներն անխափան առեւտուր էին անում Մոսկուայի հետ եւ վերջը նրանք մշտապէս Մոսկուայում հաստատուեցան եւ գրեցին առաջացան « Արապետով » կոչուած յայտնի Մոսկուացիները , որոնք մեծ մասամբ զինուորական ծառայութեան մտան եւ նրանցից շատերը զենեակաւորութեան էլ հասան :



ընդ միշտ հաստատուելու, սակայն Ստեփան Սափարեանցը 1690 մայիս 6-ին ամենուրեք աղատ անուարի հրաման հանել տուեց եւ այն էլ, որ որակը էլ Հայերը ուստական սպարանք գնեն՝ մաքս չը վճարեն: Այս արտոնութիւնը մեծապէս Եղիստեց գործին եւ այս անգամ արդէն Հայերը սկսեցին գնալ Ամստերդամ, Լոնդոն եւ այլ քաղաքներ: Եոյն տարածք ապրիլ 11-ին Ս. Սափարեանն 13 ընկերներով նովգորդի վրայով արտասահման գնաց:

1696 փետրուար 4 ին Շվեդիա գնացին մի խումբ վաճառականներ, ինչպէս Գրիգոր Դաւթեան, Մկրտիչ Առաւածատրեան, Նիկողայոս Թորոսեան, Շահվերդ Սարգսեան, Մարտիրոս Բարսեղեան, Յակոբ Դաւթեան, Լեւոն Խաչատրեան, Բահաթուր Դաւթեան, Առաքել Պետրոսեան, Պողոս Սահպանեան, Առաւածատուր Յովհաննիսեան, Մառայ Սահակեան, Խաչիկ Միքայէլեան եւ այլք:

Բայց արդէն փոխուել էր ժամանակը, Ռուսաստանը զբաղուած էր խաւարը հալածելով, Ռուսաստանն ունէր մի հանձար, որը պէտք է բարեխոխէր երկիրը, զարթեցնէր քնած ժողովրդին, դա Պետրոս Մեծն էր:

ԳԼՈՒԽ Ը.

Այլեքսէյ Միխայլովիչը իր մահից յետոյ թողեց մի ազմկայից ժառանգութիւն: Նա առաջին կնոջից ունեցել էր 11 զսակ, որոնցից կենդանի մնացին Ֆեոդոր եւ Իօանն եւ աղջիկ Սօֆիան: Հօր մահից յետոյ թագաւորեց Ֆեօդորը, որ իր սահից առաջ 1682-ին ժառանգներ հռչակեց թուրակազմ Իօաննին եւ Պետրին, որը ծնուած էր Այլեքսէյի Միխայլովիչի երկրորդ կնոջից 1672-ին, Սօֆիան, որ աւելի խելօք գտնուեցաւ, հեռացրեց Պետրին կամ Պետրոսին եւ օգտուելով Իօաննի թուրութիւնից իրեն հռչակեց իւրոյ պետութեան: Այս գործում մեծ օգնութիւն արեց ստրեղցի կոչուած զօրքը եւ 1682 մայիս 6-ին Սօֆիան հռչակուեցաւ որպէս եղբայրների օգնական տիրոջ: 1682 յունիսին կատարուեցաւ թագադրութեան հանդէսը եւ Իօանն ու Պետրոսը ճանաչուեցան օրինաւոր գահաժառանգներ, սակայն Սօֆիան նորից ապրամբեցրեց ստրեղցիներին եւ Պետրոսն ու Իօանն ստիցուեցան Տրոյիցկո-Սիբիրի սկիւզ վանքը փախչելու: Այսպիսի ազմուկներին մէջ մեծացաւ Պետ-

րոսը, որ մանկութիւնից սկսեց զբաղուել զինուորական հարցերով եւ 1689-ին արդէն սրպէս ինքնակալ՝ թագաւորութեան գահը բարձրացաւ: Աւելորդ է երկարաբանութիւն անել, միայն այսքան ասենք, որ Պետրոսն իսկական զինուորական լինելով սկսեց կարգի բերել պետական գործերը, անցաւ Գերմանիա, Հոլանդիա, Անգլիա, Հոլանդիայում նա Զաանդամ գիւղում անձամբ աշխատում էր նաւագործարանում: Վերադառնալով Ռուսաստան նա կարգի բերեց պետական գործերը, բարեկարգեց զօրքի ու զինուորականների վիճակը, հրախրեց արտասահմանից արհեստագործներ, շինել տուեց նաւեր եւ յետոյ էլ աշխարհակալութեան ձեռնամուխ եղաւ, որով ընդարձակեց Ռուսիոյ սահմաններն ամէն կողմից էլ: Նա երկրի վարչական կազմակերպութիւնը հիմնովին վերափոխեց եւ ամէն գործումն էլ հետեւում էր Եւրոպացիներին:

Այսպիսի մի աշխարհաչէն եւ խելօք թագաւորի աչքից չէին կարող անտեսանելի մնալ Պարսկաստան վաճառականները, եւ նա իր գահակալելու օրից սկսեց խրախուսել նրանց: Նրա օրով երթեկեկութիւնն աւելի մեծ շրջան ստացաւ: Պետրոսը, որ իր մեծագործութիւնները համար Մեծ կոչուեցաւ, 1703-ին Պետերբուրգ քաղաքի հիմք դրեց եւ հայ վաճառականներին հրախրեց Պետերբուրգ առեւտուր անելու: Նրա օրով հայ վաճառականութիւնը մեծակ մեծացավ չէր զբաղուած, այլ այս անգամ արդէն չորս կողմից հայ վաճառականներ էին զայլա Ռուսաստան, ինչպէս Ղրիմի քաղաքներից, այնպէս էլ Լեմբերգ, Կամեռնից եւ այլ լեհական քաղաքներից եւ Ռուսիա էին թափում բազմաթիւ սակ վաճառքներ:

Հայ վաճառականները զգում էին, որ Պետրոս Մեծից շատ բան կարելի է սպասել եւ ահա վճռեցին մի ուրիշ քայլ եւս անել: Ինչպէս արդէն յիշեցինք, 1686 ին Մոսկուա եկաւ Բարսեղեան Սափար նշանաւոր վաճառականը, որ երկար ժամանակ առեւտուր էր անում: Սա 1708 մարտ 11-ից իրաւունք ստացաւ Նարվայում եւ Պետերբուրգում ազատ առեւտուր անելու: Սափար վազուց որոշել էր Ռուսաստանում մեծաքսի գործարան բանալ, ուստի եւ Թերեքի ավերին նա գիտել էր, զննել էր հողը եւ արդէն գտել, որ Անդրեւսիյ գիւղերի մօտ Թերեք գետի փերին հողը բարեբեր է, ուստի եւ 1710 թ. մարտ 12-ին գիտեց Պետրոս Մեծին եւ թույլատուութիւն խնդրեց այդ գիւղերի մօտ մեծաքսի գործարաններ բանալու: Սա արդէն Պետրոս Մեծ աշխարհաչէն թագաւորի համար մի ուրախաբերութիւն եւ նրա ծրագրերներն իրագործող մի երեւոյթ էր եւ նա ոչ միայն թոյլ տուեց, այլ եւ որոշ հրահանգներ տուեց: Ս. Բարսեղեանը տեղափոխուեցաւ իր ընտրած երկիրը, եւ սկսեց թթի ծառեր անկել, որպէս զի շերամի համար կերակուր պատրաստէ: Ժամանակի ընթացքում կարգի բերելով մեծաքսա-արդիւնաբերական գործը՝

1718 մարտ 13-ին հրովարտակով իրաւունք ստացաւ գործարան բանալու : Չը պէտք է մտածնալ , որ Ռուսաստանում առ առաջին գործարանն էր : 1721 յուլիս 30-ին տուած հրովարտակով նրա գործարանները պաշտօնական գոյութիւնը ճանաչուեցաւ եւ գործուածքներն էլ մեծ քանակութեամբ արտաճանուեցան Ռուսական նահանգներ եւ այլ օրից սկսուեցաւ այդ գործուածքների արտաճանութիւնը , որը սարսալ ընթացքով այնպիսի լայն շրջան ունեցաւ , որ մինչեւ անգամ արտասահման էլ դուրս տարուեցաւ : Բ. Սափարեանը , որ առաջ Աստրախան մէջ էր բնակուած՝ բոլորովին տեղափոխուեցաւ եւ Թերեքի փոխ ընտելութիւն հաստատեց եւ այնտեղ էլ մեռաւ : 1730 ղեկավարներն , նրա ժառանգները անշնորհք գանուեցան եւ թէպէտ դեռ այժմ էլ գոյութիւն ունին , սակայն պապանական կալուածքներից մեծ մասը ձեռքը բաց են թողել :

Ինչպէս ասացինք , Պետրոս Մեծը սիրող էր վաճառականութեան եւ այդ հիման վրայ նա շարունակ նորանոր օրէնքներով ու հրովարտականքով խրախուսում էր Հայերին : Այստեղ մենք բաց ենք թողնում Պետրոս Մեծի յարարութիւնները Հայոց հետ , այսպէս ասած՝ քաղաքական յարաբերութիւնը , զիտեղանով որ այդ խնդիրը մի փոքրիկ պատմութիւն չէ , այլ բաղմանատր գործի նիւթը կարող է կազմել եւ որ եթէ մենք այդ մանրամասութեան մէջ մտնենք՝ կը չեղուենք մեր ճանապարհից : Պետրոսի գահ բարձրանալու օրից Մակուայում եւ Պետերբուրգում երևում են հայ դեսպաններ , նա իրակներ , վերջպէս Իսրայէլ Օրին , Քեխա Չելեպին , Բաղդասար Նազարեան , Մինաս վարդապետ , Անտօն քաճահան , Թարխան եւ այլք , որոնք Պետրոսին հրաւիրում են իրենց հայրենիքին ազատութիւն տալու : Պետրոսը կատարող էր եւ մասամբ էլ կատարեց ինչ որ կարողացաւ : Պետրոսի օրէնքները ձգողական մագնիսի զօրութիւն ունէին :

1711 ապրիլ 13-ին կառավարչ Սենատին տուած հրովարտակով ասուած էր . Պարսկական վաճառականութիւնը տարածել-բազմացնել , Հայերի հետ որքան կարելի է քաղցր վարուել եւ ինչ բանի մէջ որ կարելի է զիջողութիւններ անել , որպէս զի նրանք աւելի մեծ թուով Ռուսաստան գան :

1711 մայիս 2-ին Սենատին տուած հրամանում վերոյիշեալ հրովարտակի վերաբերեալ ասած էր . Ա) Համաձայն 175 թ. (1667 թ.) հաստատուած պայմանագրի՝ վերցնել որոշուած մաքսը եւ այդ մաքսը վերցնել իսկական արժէքից . Բ) Հայերին ծախած ապրանքից մաքս չվերցնել . Գ) Ինչպէս վաճառականների , այնպէս էլ ծառաների ու ապրանքի սեղափոխութեան համար կառքեր չաալ , այլ թո՛ղ իրենք վարձեն . Դ) Աստրախանից մինչեւ Մոսկուա եւ մինչեւ սահմանադրաբաններ տալ ուղեկից պահապաններ . Ե) Ազամանդից , մարգարայից եւ այլ ակներից մաքս չը վերցնել . Զ) Մոսկուայում եւ Արխանգելսկում սխալմամբ

Հայերից վերցրած կրկնակի մաքսը՝ 973 ը . 10 ալախը վերագարծնել :

1712 փետրուար 20-ին Սենատին տուած հրամանի մէջ ասած էր . « ապրանքից մաքս վերցնել 175 թ. եւ 711 թ. (1667 թ. եւ 1711 թ.) հրովարտականների համաձայն , իսկ ճանապարհածախսը — Աստրախանից Մոսկուայով Արխանգելսկ 20 ալախ , եւ Արխանգելսկից էլ Աստրախան փութից 20 ալախ » :

1712 փետրուար 5-ին Սենատին տուած հրովարտակով ասուած էր . « այն ապրանքը , որը արգէն Աստրախանում հետադառուած է ու զննուած , այլ եւս սահմանադրաբանութեամբ զննելու կարիք չունի , այլ պէտք է վերադննել մի միայն Մոսկուայում , ինչպէս այդ մասին նախկին պայմանագրի մէջ գրուած է » :

Երբ Պետրոս Մեծը Ամստերդամումն էր , այնտեղ նա ծանօթացել էր նշանաւոր հայ վաճառականների հետ , որոնց մէջ գլխաւոր դեր էին խաղում նշանաւոր Պետրոս Ապրօն եւ Յովհաննէս Դիբոգոսեանը : Վերջինս 1720-ին հոլանտական ապրանքով Ռուսաստան եկաւ եւ նոյն տարւոյ սեպտեմբերին ետ դարձաւ : Այսպէս չը վարուեց Ապրօն , նա ուզեց որ Պետրոս Մեծը հրովարտակով որոշէր պայմանները : Երբ Պետրոս Մեծը երկրորդ անգամ Հոլանդիա գնաց , այն է 1717-ին , Պետրոս Ապրօն մի տեղեկագիր-խնդրագիր ներկայացրեց կոյսեր եւ խնդրեց թոյլ տալ Ռուսաստանում առեւտուր անելու : 1717 թ. յունուար 28-ին ասանձին հրովարտակ արուեցաւ , որից մենք առաջ ենք բերում գլխաւոր մասը .

« Երբ մենք Հոլանդիայումն էինք , Պետրոս Ապրօն հայն իր սահմանախոնարհ յուշագրով-խնդրագրով յայտնեց մեզ , որ ինքն ու իր երկու եղբայր Աբրամ եւ Ստեփան Ապրօնները , որոնք Չմիւռնիայում են ապրում՝ Հնդկաստանում , Պարսկաստանում , Ճաճկաստանում եւ Եւրոպական պետութեանց մէջ մեծ առեւտուր ունեն եւ այդ առեւտուրը գլխաւորապէս կայանում է մետաքսի եւ այլ պարսկական ու արեւելեան ապրանքի մէջ , եւ մի եւ նոյն ժամանակ ամենախոնարհարար յայտնեց մեզ որ ինքն ու իր վերոյիշեալ եղբայրներն իրենց առեւտրական արգիւնարբութեան համար մտադիր են մեր պետութեան միջով երթնելու Պարսկաստան եւ այն տեղից այս երկիրներ ապրանք բերել , առեւտուր անել մեր քաղաքներում՝ Աստրախանում եւ Եւրոսլաւում , Արխանգելսկում , Մոսկուայում եւ մեր աթոռանիստ Պետերբուրգում : Այսպէս ուրիշն պէտք է այն ապրանքով առեւտուր անեն եւ հարկաւոր մաքս վը-

ճարին, միայն մենք հրամայեցինք, որ այն ապրանքից, ինչ որ նոյա  
 եւ կամ նոցա գործակատարները Պարսկաստան կը տանեն եւ կամ ինչ որ  
 Պարսկաստ աից մեր քաղաքներով եւ նաւահանդիստներով (որ ճանա-  
 պարճ որ իրենք կը նորեն) այս երկիրները բերել հուզեանս, ինչքան  
 որ սովորաբար պարսկահպատակ Ձուղայեցիք մաքս են վճարում, նրա  
 համաձայն է: ամեն ինչից սրանցից պէտք է մաքս վերցնել. այս բանի  
 համար նա ամենախոնարհաբար մեզնից մեր բարեհաճութիւնը խնդրեց.  
 այս պատճառով էլ մենք մեր պետութեան ու երկրի վաճառականութիւնը  
 ծաղկեցնելու համար ոչ միայն մեր համաձայնութիւնը յայտնել ցանկա-  
 ցանք, այլ եւ շնորհելով այս հրովարտակը նրան առանձնաշնորհու-  
 թեանց արժանացրինք եւ հրամայում ենք մեր կառավարիչ Սինատին,  
 նահանգապետներին, փոխ-նահանգապետներին, կոմենդանտներին (բեր-  
 դապետ), լանդրատներին եւ զինուորական թէ քաղաքական ամեն պաշ-  
 տօնի կառավարիչներին, քաղաքներումն էլ վերահայեցողներին, վա-  
 ճառապետներին եւ մաքսային պաշտօնականներին, որ երբ վերոյիշեալ  
 Պետրոս, Արքայ եւ Ստեփան Ապրօները մեր այս հրովարտակով առեւ-  
 արական գործերով իրենք եւ կամ նոցա գործակատարները ցամաքով թէ  
 ծովով, ո՛ր ճանապարհով իրենք կը կամենան, մեր երկրով կանցնեն ի-  
 րենց մարդկանց հետ միասին, ամէն տեղ առանց ետադնելու ազատ  
 ճանապարհ տալ, ոչ մի տեսակ արգելք չանել եւ չը վերադարձնել այլ  
 ընդհակառակը պահանջած դէպքում ամեն կերպ օգնել նրանց, իսկ ինչ-  
 պէս նրանց մօտ եղած, այնպէս էլ նրանց գործակատարների հետ զըր-  
 կած ապրանքից, հրամայում ենք մեր մաքսային վերատեսուչներին,  
 վաճառապետներին եւ այլ պաշտօնականներին ամեն ինչից էլ պարտաւճ-  
 պատակ Ձուղայեցի Հայերի հետ կտպած պայմանագրի համաձայն մաքս  
 վերցնել միայն ոչ աւելի քան որոշուած է եւ մեր հպատակներից ոչ ոք  
 չը համարձակուի նրանց վրայ որ եւ է սուրբ դնել եւ կամ նրանց վի-  
 բաւորել վախենալով մեր բարկութիւնից եւ ամենախիստ պատժից եւ  
 երբէք չը յանդգնի այդ անելու, որովհետեւ մենք՝ Մեծ Թագաւորս,  
 մերս Արքայական Ողորմածութեամբ ինչպէս նրանց, այնպէս էլ նրանց  
 գործակատարներին մեր կայան Ս. Պետերբուրգում եւ վերոյիշեալ քա-  
 ղաքներում թոյլ ենք տալիս ազատ կերպով բնակուելու եւ պատուէր  
 չը տուած ապրանքով առեւտուր անելու, երթեւեկել այլ քաղաքներ ու  
 օտար պետութիւններ եւ իրենց ապրանքը տանել ծովով եւ ցամաքով  
 միայն ամեն բանումն էլ համաձայն նոյն պարսկահպատակ Հայերի վը-  
 ճարած մաքսի՝ մաքս վճարել. բացի այս՝ մենք հրամայում ենք որ Պետ-  
 րոս Ապրօյին, նրա եղբայրներին ու գործակատարներին միշտ պաշտ-  
 պանէք եւ օգնէք, որպէս զի նոցա եղբայր Հայերն ու այլ ազգի առեւ-  
 արականներն այս տեսնելով՝ ցանկութիւն ունենան մեր երկրի միջով  
 առեւտրական յարաբերութիւններ հաստատել Պարսկաստանի հետ. ի

հաստատութիւն այս բանի մեր սեպհական ստորագրութեամբ եւ պետա-  
 կան կնքով վաւերացնում ենք եւ հրամայում մեր այս հրովարտակը  
 մատենը մուծելով՝ սալ նրանց եւ կամ նրանց գործակատարներին ըստ  
 աւագութեան եւ կթէ նրանք եւ կամ թէ գործակատարներն առանց մեր  
 այս հրովարտակի դան, այն ժամանակ էլ ազատ են, միայն թէ որպէս  
 վկայութիւն ներկայացնեն Պետրոս Ապրօյի ստորագրութեամբ եւ կնքով  
 այս հրովարտակի պատճէնը. այդ զէպքումն էլ մի եւ նոյնը պէտք է  
 անել, ինչ որ իսկական հրովարտակը ներկայացնելիս » .  
 Այս հրովարտակը տրուած է Ամստերդամում :  
 Ապրօյի մասին մեր ողբերները շատ քիչ են, միայն այսքան զի-  
 տենք, որ Ապրօն զեա 1731-ին (եթէ ոչ ինքը գտնէ նրա ժառանգները)  
 Պետերբուրգում առեւտուր էր անում : Ե՞րբ մնաւ Ապրօն այդ մեզ  
 յայտնի չէ, բայց հարկաւոր է օգտուել հոլանդական զիւանից, որպէս  
 զի ամեն ինչ մեզ համար պարզ լինի : Կարծեմ Ս. Էջմիածնի մասենա-  
 դարանում զեա մինչեւ այժմ կայ այդ մեծ մարդու պատկերը (1) :  
 Պետրոս Մեծը միայն այսքանով չէր կարող բաւականանալ : Դեռ  
 1711-ին Աստրախանի վաճառապետին խտալու պատու իրել էր Հայերի գէմ  
 ոչ մի նեղութիւն ու արգելք չը յարուցանելու. այս հարցի մասին նա  
 շարունակ կրկնում էր իր հրովարտակներում : 1719 յունիս 6-ին մի նոր  
 հրովարտակ էլ լոյս տեսաւ, որով Աստրախան Պաշտօնարանը յայտա-  
 րարեց մի նոր առանձնաշնորհութիւն, որ այնուհետեւ Հայոց Առեւ-  
 արական Ընկերութիւններին, որոնք գոյութիւն ունէին վաղուց ար-  
 գէն եւ զլիսաւոր վաճառատաներն էլ հաստատուած էին Ձուղայում ու  
 Աստրախանում, իրաւունք էր արւում հաւասարապէս օգտուել այն ի-  
 բաւունքներով, որով արտօնուած էին այլ երկրի առեւտրականները :  
 Մինչ Ռուսաստանը զբաղուած էր այսպիսի երկրորդական գործերով,  
 Պարսկաստանը անշնորհք վաւերչները պատճառով հետզհետէ քայքայուած  
 էր. երկրի խաները միմեանց զէմ զէնք բարձրացնելով ոտնակոխ էին  
 անում թշուառ ժողովրդին, առեւտուրը հեղձհատէ ոչնչանում էր եւ այս  
 բոլորը լրացրեց Աֆղանների արշաւանքը : Գանձասարի Նասայի կաթողի-  
 կոսը կանչուած էր ուսուց խաչակիր զօրքին ազատելու. բարբարոսների  
 ձեռքից, իսկ Ռուսաստանի Հայոց նուիրակ եւ առաջնորդ Մինաս վար-  
 դապետը 1719 թ. ապրիլ 5-ին յայտնեց Պետրոս Մեծին. « Այն զաղանի  
 հարցը արդէն ժամանակ է գործնականի վերածելու, որովհետեւ այժմ  
 բարբարոսները ամեն կողմից եւ ՚ի ներքուստ թշուառ կացութեան մէջն  
 են » (Պետր. Մեծ. յարաբ. ՄԱ) : Ո՞րն էր այդ զաղանիքը, կարծեմ պարզ

(1) Էջմիածին մենք մեր ճանօթներից մեկին այս տոթիւ նամակ գրեցինք, բայց  
 գեռ քիչ ժամանակ անյած լինելով — ընդ ամենը մի տարի — պատասխան չուէինք... »

է. Մինաս Վ. վաղուց արդէն տեղեկութիւններ էր հաւաքում Պարսկաստանի վերաբերեալ եւ խթանի պէս խթում էր սրա ու նրա կողքը եւ կայսեր էլ ներկայացրեց գրուած տեղեկութիւններ, որ Հայերը սպասում են անհամբեր և Այսպիսի հանդամանքներում, երբ Պարսկաստանը ներսից արդէն քանդուած էր, տարակոյս չկայ, որ հայ վաճառականներին քիչ մնասներ չէին հասնիլ եւ Ռուսաստանում հայ առեւտրականների գալուստը զգալի եղաւ : Ուրեմն մեում էր հարկաւոր միջոցները ձեռք առնել եւ այդպէս էլ եղաւ : Պարսկաստանի ուստաց զեռպան Վօլինսկին մի գեկուցադրով յայտնեց ուստաց արքունիքին, որ Լեզգիները իշխող Դաւուդ բէկը Ղազրկումի Սուրխայա իշխողի հետ յարձակուել են Շամախու վրայ, քաղաքը կոյտպակ են եւ ծեծելով ուստաց վաճառականներին, կողոպտել են նրանց խանութներն ու խելի 500 հազար բուրդու ապրանք : Այս պէպքը տեղի էր ունեցել 1721 թ. օգոստոսին երբ Պետրոս Մեծն արդէն Շվեդացոց հետ պատերազմը վերջացնելով Երզնաստում խաղաղութեան դաշն պիտի կապէր, ուստի եւ կայսրը հրամայեց պատրաստութիւններ տեսնել, որի համար եւ Վօլինսկուն էլ յայտնեց : Պետրոս Մեծը շուտով ասաջ շարժուեցաւ զօրքով եւ կասպից ծովով էլ նաւատորմիլ ուղարկեց : Արդէն բնական է, որ Պարսիկները պիտի յաղթուէին եւ պատերազմի վախճանն այն եղաւ, որ 1723 սեպտեմբեր 12-ին Պետերբուրգում դաշն կապուեցաւ, որով Ռուսաստանին մնացին Դերբենտ եւ Բաքուն, եւ Աստրաբայի, Գիլանի ու Մազանդարանի գաւառները :

Պատերազմը ինչքան էլ քաղաքական նպատակ ունէր, այնուամենայնիւ նա համարեա առեւտրի ծաղկեցնելու համար էր : Կայսրը ցաւում էր, որ պատերազմի պատճառով առեւտուրը դադար էր արել, ուստի հարկաւոր էր նոր կոչ ուղարկել Հայերին, որոնք ստանց այն էլ մի շարք խնդրագրեր ու նամակներ էին գրել եւ 1723 յունիս 3-ին Արտաքին գործոց պաշտօնարանում ստորագրեց այս հրովարտակը, որ այդ նպատակով պատրաստել էր սուելի .

« Պարսից երկրում բնակուող պատուական Հայոց ժողովրդին մեր կայսերական ուղորմութիւն եւ շնորհաւորութիւն : Ձեզ յայտնի է, որ վաղ ժամանակից հետէ մեր կայսրութեան եւ Պարսից պետութեան միջեւ միշտ բարի յարաբերութիւն գոյութիւն ունէր եւ երկու կողմի օգտի համար էլ ազատ առեւտուր էր կատարում, որը Պարսից երկրում եղած խանակութիւնների պատճառով ընդհատուեցաւ : Այն ժամանակ մեր վաճառականներին, որոնք Շամախումն էին, նրանք կողոպտեցին եւ սպանեցին, ուստի եւ մենք սախպուած եղանք այդ երկրում մեր զէնքը գործ դնելու : Աստուծոյ օգնութեամբ այնպէս պատահեց, որ կասպից ծովի ափերին եղած այն քաղաքները, որոնց միջոցով առեւտուր էր կատարում մեզ հետ՝ մեր հովանաւորութեան տակը մտան, եւ որով-

հետեւ մեծ մասամբ վաճառականութիւնը ձեր ձեռքին էր, ուստի եւ ինչպէս Պարսկաստանում բնակուող, այնպէս էլ մանաւանդ մեր Պետութեան այլ եւ այլ քաղաքներում արդէն բազմացած հայ բնակիչները, որոնք առեւտրով են զբաղում, ամենահպատակօրէն խնդրեցին մեզ, որ Պարսկաստանում եղած Հայերից հետ այն առեւտուրը վերականգնուի եւ նորոգուի : Եւ մենք, աւ այն ժողովուրդ ունեցած մեր կայսերական ուղորմութեամբ սրանով յայտարարում ենք որ մեր հովանաւորութեան ներքոյ եղած քաղաքների հետ ունեցած առեւտուրը (ցանկալի է որ) նորոգուի եւ առանց որ եւ է վտանգի դարձեալ յաճախեն ինչպէս կասպից ծովի ափերին եղած քաղաքները, այնպէս էլ մեր Պետութեան խորքերը, եւ եթէ կը ցանկանան, թող այն քաղաքներում եւ գաւառներում, որտեղ որ ասաջ բնակուում էին, դարձեալ բնակութիւն հաստատեն եւ ազատ՝ առանց արգելքի առեւտուր անեն, մենք էլ խոստանում ենք, որ նրանց առեւտուրը ոչ միայն կը պաշտպանենք եւ բոլոր հարկաւոր գործերի համար էլ կը հրամայենք հոգ տանել, այլ եւ ամենաողորմածօրէն նորանոր առանձնաշնորհութիւններ կը տանք, որպէս զի աւելի շատ շահ եւ օգուտ ունենան : Եւ որպէս զի հայ ժողովուրդը աւելի եւս համոզուի եւ հաւատայ, մենք՝ տեղույս Հայերի խնդրի համաձայն, բարեօք համարեցինք նրանցից մէկին՝ Յովնանկես Կարապետին ու զարկել ձեզ մօտ մեր այս բացարձակ հրովարտակով եւ նրան յայտնելով մեր ամենաողորմած կամքն ու բոլոր հայ ժողովուրդի խնդրների համար եղած որոշումները՝ կամենում ենք որ դուք էլ նրան բոլորովին հաւատայք, ՚ի հաստատութիւն որոյ մեր այս բացարձակ հրովարտակը տրուած է մեր արքունի կնքով » : (Արձան. Ա. 161-162, Պետր. Մեծի յարար. 352) : (1)

1723 յունիսի 6-ին Յովհաննէս Կարապետը ստացաւ 100 ոսկեղրամ եւ ճանապարհ ընկաւ դէպի Պարսկաստան, իր հետը տանելով (բացի

(1) Այս հրովարտակը ուղարկուել է հայերէն թարգմանութեան հետ, եւ թարգմանողներն եւ Ղուկաս եղիտեանը (Լուկա իշխն), փրիի Մանույլագուսեանն եւ Յովհաննէս Կարապետը, թարգմանութիւնը խաւն է եւ անբացատրելի, ահա որպէս նմայլ. « Պատուական Հայոց Առկին, որն որ Պարսից երկրում էք բնակեալ, մեր ինփորայտութեան ուղորմութեամբն շատ բարե ունեմք : Ձեզ հասնիւոյ որ վաղուց ժամանակաց մեր եւ Պարսից թագաւորութեան միջումն ամենայն ժամ էլ սիրով զիրանք գրէլ եւ համարձակ սովորագորութիւն ապրէլ : Երկու կողմանց առեւտութիւն էլէլ նորայ : Պարսից երկիրն խոզվեց եւ կորվեց եւ էն ժամանակումն մեր սովորայտարերն որ շամախի են, շատ մեծ նեղութիւն եւ մեծ զարարութիւն ան ալէլ, և սպանութիւն ան արէլ, եր ջաթղան մեզ պարտ է դարաց որ դաբէտ երկիրն մեր որի զօրութիւնն բանացանէք, Աստուծոյ ուղորմութեամբն եւ աղորութեամբն էօպէս արարինք, որ ինչ քաղաք որ գելանայ ծովափուն է, որ էն քաղաքովն վերայ սովորայտարերն ամենայն ժամ մեր երկիրնին գորման ըլգայ, մեր հրամանին աակումնայ և մեր ձեռնումնայ . » (Պետրոս 353) :

է. Մինաս Վ. վաղուց արդէն տեղեկութիւններ էր հաւատում Պարսկաստանի վերաբերեալ եւ խթանի պէս խթում էր սրա ու նրա կողքը եւ կայսեր էլ ներկայացրեց գրուոր տեղեկութիւններ, որ Հայերը սպասում են անհամբեր, Այսպիսի հանդամանքներում, երբ Պարսկաստանը ներսից արդէն քանդուում էր, տարակոյս չկայ, որ հայ վաճառականներին քիչ մնասներ չէին հասնիլ եւ Ռուսաստանում հայ առեւտրականների գալուստը զգալի եղաւ: Ուրեմն մնում էր հարկաւոր միջոցները ձեռք առնել եւ այդպէս էլ եղաւ: Պարսկաստանի սուսաց զեօպան Վօլինսկին մի զեկուցագրով յայտնեց սուսաց արքունիքին, որ Լեզգիները իշխող Դաւուդ բէկը Ղարկուսի Աուրխայա իշխողի հետ յարձակուել են Շամախու վրայ, քաղաքը կողոպտել են եւ ձեռնելով սուսաց վաճառականներին, կողոպտել են նրանց խանութներն ու խլել 500 հազար բուբուն ազրանք: Այս զեկոյքը տեղի էր ունեցել 1721 թ. սպտտոսին երբ Պետրոս Մեծն արդէն Շվեդացոց հետ պատերազմը վերջացնելով երկշատում խաղաղութեան դաշն պիտի կապէր, ուստի եւ կայսրը հրամայեց պատրաստութիւններ տեսնել, որի համար եւ Վոլինսկուն էլ յայտնեց: Պետրոս Մեծը շուտով առաջ շարժուեցաւ զօրքով եւ կասպից ծովով էլ նաւատորմիղ ուղարկեց: Արդէն բնական է, որ Պարսիկները պիտի յաղթուէին եւ պատերազմի վախճանն այն եղաւ, որ 1723 սեպտեմբեր 12-ին Պետերբուրգում դաշն կապուեցաւ, որով Ռուսաստանին մնացին Դերբենու եւ Բաքուն, եւ Աստրաբազի, Գիլանի ու Մազանդարանի գաւառները:

Պատերազմը ինչքան էլ քաղաքական նպատակ ուներ, այնուամենայնիւ նա համարեա առեւտրի ծաղկեցնելու համար էր: Կայսրը ցաւում էր, որ պատերազմի պատճառով առեւտուրը դադար էր արել, ուստի հարկաւոր էր նոր կոչ ուղարկել Հայերին, որոնք առանց այն էլ մի շարք խնդրագրեր ու նամակներ էին գրել եւ 1723 յունիս 3-ին Արտաքին գործոց պաշտօնարանում ստորագրեց այս հրովարտակը, որ այդ նպատակով պատրաստ էր սուել.

« Պարսից երկրում բնակուող պատուական Հայոց ժողովրդին մեր կայսերական սղորմութիւն եւ շնորհաւորութիւն: Զեզ յայտնի է, որ վաղ ժամանակից հետո մեր կայսրութեան եւ Պարսից պետութեան միջեւ միշտ բարի յարաբերութիւն գոյութիւն ունէր եւ երկու կողմի օգտի համար էլ ազատ առեւտուր էր կատարուում, որը Պարսից երկրում եղած խառնակութիւնների պատճառով ընդհատուեցաւ: Այն ժամանակ մեր վաճառականներին, որոնք Շամախումն էին, նրանք կողոպտեցին եւ սպանեցին, ուստի եւ մենք սախլուած եղանք այդ երկրում մեր զէնքը դարձնելու: Աստուծոյ օգնութեամբ այնպէս պատահեց, որ կասպից ծովի ափերին եղած այն քաղաքները, որոնց միջոցով առեւտուր էր կատարուում մեզ հետ՝ մեր հովանաւորութեան տակը մտան, եւ որով-

հետեւ մեծ մասամբ վաճառականութիւնը ձեր ձեռքին էր, ուստի եւ ինչպէս Պարսկաստանում բնակուող, այնպէս էլ մանաւանդ մեր Պետութեան այլ եւ այլ քաղաքներում արդէն բազմացած հայ բնակիչները, որոնք առեւտրով են զբաղուում, ամենահպաստակօրէն խնդրեցին մեզ, որ Պարսկաստանում եղած Հայերից հետ այն առեւտուրը վերականգնուի եւ նորոգուի: Եւ մենք, առ այն ժողովուրդ ունեցած մեր կայսերական սղորմութեամբ սրանով յայտարարում ենք որ մեր հովանաւորութեան ներքոց եղած քաղաքների հետ ունեցած առեւտուրը (ցանկալի է որ) նորոգուի եւ առանց որ եւ է վտանգի դարձեալ յաճախեն ինչպէս կասպից ծովի ափերին եղած քաղաքները, այնպէս էլ մեր Պետութեան խորքերը, եւ եթէ կը ցանկանան, թող այն քաղաքներում եւ գաւառներում, որտեղ որ առաջ բնակուում էին, դարձեալ բնակութիւն հաստատեն եւ ազատ՝ առանց արգելքի առեւտուր անեն, մենք էլ խոստանում ենք, որ նրանց առեւտուրը ոչ միայն կը պաշտպանենք եւ բոլոր հարկաւոր գործերի համար էլ կը հրամայենք հոգ տանել, այլ եւ ամենաողորմածօրէն նորանոր առանձնաշնորհութիւններ կը տանք, որպէս զի աւելի շատ շահ եւ օգուտ ունենան: Եւ որպէս զի հայ ժողովուրդը աւելի եւս համոզուի եւ հաւատայ, մենք՝ տեղույս Հայերի՝ խնդրի համաձայն, բարեօք համարեցինք նրանցից մէկին՝ Յովհաննէս Կարապետիսն ու զարկել ձեզ մօտ մեր այս բացարձակ հրովարտակով եւ նրան յայտնելով մեր ամենաողորմած կամքն ու բոլոր հայ ժողովուրդի խնդրների համար եղած որոշումները՝ կամենում ենք որ դուք էլ նրան բոլորովին հաւատաք, ի հաստատութիւն որոյ մեր այս բացարձակ հրովարտակը տրուած է մեր արքունի կնքով »: (Արձան. Ա. 161-162, Պետր. Մեծի յարար. 352): (1)

1723 յունիսի 6-ին Յովհաննէս Կարապետը ստացաւ 100 ոսկեղրամ եւ ճանապարհ ընկաւ գէպի Պարսկաստան, իր հետք տանելով (բացի

(1) Այս հրովարտակը ուղարկուել է հայերէն թարգմանութեան հետ, եւ թարգմանողներն եւ ղուկաս եղիտանը (լուկա իլին), փիրի Մանույլագոսեանն եւ Յովհաննէս Կարապետը, թարգմանութիւնը խաւն է եւ անբացատրելի, ահա որպէս նմայլ. « Պատվական Հայոց Ասկին, որն որ Պարսից երկրումն էք բնակեալ, մեր ինֆրայգոտութեան սղորմութեամբն շատ բարեւունեմք: Զեզ հասնիտայ որ վաղուց ժամանակաց մեր եւ Պարսից թագաւորութեան միջումն ամենայն ժամ էլ սիրով զիրանք գրէլ եւ համարձակ սովորաբարութիւն ապրէլէլ: Երկու կողմանց աւետութիւն էլէլ նորայ: Պարսից երկրն խաղվեց եւ կտրվեց եւ են ժամանակումն մեր սովորաբարէն որ շամախի են, շատ մեծ նեղութիւն եւ մեծ զարբարութիւն ան սովէլ: Եւ սպանութիւն ան արէլ: Էզ Զամգան մեզ պարտ է դարաց որ դարեւտ երկիրն մեր արի զորութիւնն բանացանէք, Աստուծոյ սղորմութեամբն եւ աջողութեամբն էտպէս արարինք, որ ինչ քաղաք որ գերանայ ծովափուն է, որ էն քաղաքովն վերոյ սովորաբարէն ամենայն ժամ մեր երկիրնին գովման ըլգայ, մեր հրամանին աակուսնայ եւ մեր ձեռնուսնայ: » (Պետրոս 353):

այս հրովարտակից) մի նամակ ցանուն « Պարսից երկրի կայսրը եւ լեւո-  
կեալ Հայոց Ասկիլը եւ յիշխանաց, որ է զլուխ եւ անմայլոր ներսէս  
կաթողիկոսին, եւ մինն Եսայի, որ է Պարսրթու երկրէն, եւ երկրոր-  
դըն Սարգիս Չարաբերդու (Չարաբերդ) եւ Շիրվան, Գրիգոր եւ Սարու-  
խան Աւլան ուզրաչոց, եւ այլ ուզրաչի, Շիրվան եւ Սարուխան եւ Գրի-  
գորն, որ է Սաչէնու երկրէն » : Այս նամակը մենք բաց ենք թողնում,  
որովհետեւ բովանդակութիւնն ամբողջովին քաղաքական նպատակներ  
ունի : Այսքան էլ ասենք, որ Յ. կարապետը իրիւր քաղաքական գաղա-  
նի դեպքան եւ լրտես մեծ դեր խաղաց եւ Ռուսաց արքունիքին յայտ-  
նեց երկրի գրութեան մասին մանրամասնութիւնները :

Կնքելով այստեղ Պետրոս Մեծի հայ վաճառականութեան ծաղկեց-  
ման համար եղած արտօնութիւնների ու հոգսերի պատմութիւնը, մենք  
չմոռանանք այն էլ յիշելու, որ նրա օրով Պարսկաստանից միայն մե-  
տաքսը չէր որ մտնում էր Ռուսաստան, այլ եւ թանկագին անիւք,  
Բուխարայի մորթին, կարպետներ, իսկ Աստրախանի Հայերը սկսեցին  
ձկնեղէնի առեւտրով զբաղուել, այլ եւ այլ տեսակ ձկնաստիճաններ էին  
արտահանում եւ այլն : Սենատի հրամաններից մէկի մէջ, որ արուած է  
1724 օգոստոս 28-ին, յիշուած է որ հայկական ձկնկիրթն ու այլ եւ այլ  
ստիճանները լաւ տնտեսի չեն, ուստի եւ հրամայուած է արքունական  
ձկնկիրթը վաճառել :

1725 յունվար 28-ին կնքեց իր մահկանացուն Պետրոս Մեծը :

Գ Լ Ո Ւ Ս Թ.

Մեռաւ Պետրոս Մեծը, սակայն նրա ձեռագործները կենդանի մնա-  
ցին եւ մեղք է ասել, որ նրա յաջորդները նրան դաւաճանեցին : Դէպի  
Հայերն եղած սէրը մնաց նոյն չափի մէջ եւ հետզհետէ աւելի աւելա-  
ցաւ, մինչեւ որ յետոյ բոլորովին թուլացաւ : Դեռ նոր էր ննջել վե-  
րածնութեան հոգին, երբ Տաճկահայերն էլ ցանկութիւն յայտնեցին  
Ռուսաստանում առեւտուր անելու : Սա շատ բնական երեւոյթ էր,  
Պարսկաստանի հայ վաճառականները ահագին քարտաններ էին զրկում  
Հալէպ, Դամասկոս, Բաղդատ, Տարսոն, Զմիւռնիա, Տրապիզոն,  
Էրզրում, Վան եւ Տաճկաստանի այլ հայաքաղաքներ : Այս դէպքում 'ի  
հարկէ ծածուկ չէր կարող մնալ Պարսկահայոց Ռուսաստանի հետ ունե-  
ցած յարաբերութիւնը :

ձիշտ է մենք մինչեւ այժմ շարունակ խօսեցինք Պարսկահայոց վա-  
ճառականութեան վրայ, սակայն այդ դեռ չինչանալուով, որ առեւ-  
տուրը մի միայն նրանց ձեռքին էր : Այո՛, նրանց ձեռքին էր Ռուսաս-  
տանի առեւտուրը, բայց եւրոպացիները 'ի հարկէ մեծ մասամբ Տաճկահայոց  
Ո՞վ էր Ապրոն, 'ի հարկէ տաճկահայ, բայց մի՞թէ միայն Ապրոն էր,  
ո՛չ պատասխանում է Յակոբ Շահան Զրպետը (1) : « Վերջին ժամանակ-  
ներում, այն է 1687 թ., Հայերը թոյլատուութիւն խնդրեցի Ֆրան-  
սիայում Հնդկական ընկերութիւն հաստատելու, Բօրբօյում եւ Մար-  
սէյլումն էլ զբառնեակներ բանալու, սակայն թէպէտեւ Լուզովիկոս  
ԺԴ-ըըը հոգեւորականութեան առաջարկութեան համաձայն մերժեց,  
այնու ամենայնիւ իր Զմիւռնիոյ հիւպատոսին մասնաւոր կերպով հրա-  
մայեց Հայերին առանձին հովանաւորութիւն ցոյց տալ » :

Այս գործը տեղի էր ունեցել մի եւ նոյն ժամանակներում, ինչ ժա-  
մանակ որ Ռուսաստանում առեւտուրը նոր էր սկզբնաւորուել : Տաճկա-  
հայերը մէկ մէկ գալիս էին Ռուսաստան առեւտուր անելու եւ այս էլ  
երեւում է գեներալ Լէյտենանտ Մատիւշկինի 1725 գեկտեմբեր 15-ին  
ներկայացրած յայտարարութիւնից, որով նա արքունիքից խնդրում է  
առաջուայ սովորութեան համաձայն թոյլատրել, որ Տաճկաստանի հը-  
պատակ Հայերի բերած արծաթը ընդունին : Գեներալ-Լէյտ. Մատիւշկինը  
դեռ նոր էր միջնորդութիւն արել երբ 1726 յունուար 12-ին Հայէպի եւ  
Դամասկոսի Հայերը մի խնդիր ներկայացրին, որի մէջ խնդրում էին,  
որ իրենց թոյլ տրուի, Աստրախանի վրայով Ալովեան երկիրների հետ  
առեւտուր անել, բերել տաճկական ապրանքներ, որի համար նրանք  
խնդրում էին, որ իրենցից էլ այն չափով մարս վերցնեն, որքան որ  
վերցնում են Ջուղայեցիները : Բնական է, որ Ռուսաստանը չէր մեր-  
ժել, եւ այդպէս էլ եղաւ եւ թոյլատրուեցաւ : Այս ժամանակից սկսած  
Հայերն սկսեցին առեւտուր անել Քէֆէ եւ այլ Տարիկեան քաղաքների

(1) Յ. Շ. Զրպետը երեսիտցի էր, ծն. 1772 թ. Փարիզ անցաւ եւ այնտեղ մի քանի  
տարուց յետոյ Արեւելեան լեզուաց վրժերի ուսուցչապետ նշանակուելով սկսեց հայերէն  
լիզուն դասախօսել : Ներսէս Աշտարակեցին Տփլսում դպրոց բանաւով նրան Տփլիս հրա-  
ւիրեց ուսուցչի պաշտօնով : Պօլօտիւնիա խմբագրող յանձնաժողովի մէջ Զրպետը մեծ դեր  
է խաղացել : Մեռաւ 1833 օգոստոս 16-ին : 1806-ին նա փարիզում հետեւեալ վերնագրով  
աշխատութիւն սուկեց. Recherches sur l'histoire ancienne de l'Asie (Ասիայ  
հին պատմութեան վրայ հետազոտութիւններ) : Այս գրքի ուսերէն թարգմանութիւնը,  
որ կատարել է Աղէքսանդր Խուդաբաշեանը, 1816-ին լոյս տեսաւ Պետերբուրգում : Գիր-  
քը դիտնական արժէքից զուրկ մի քաղուածական համառօտ պատմութիւն է եւ վերա-  
բերում է հայոց պատմութեան : Այս գրքի ուսերէն թարգմանութեան էջ 375-376 ուճ  
է գրուած վերեւ մէջ բերած մասը :

հետ, որ սեղից կամաց կամաց սկսեցին անցնել Լեհաստան՝ Կամենից, Լեմբերգ եւ այլ քաղաքներ:

1726 թ. սկսած Պարսկաստանի սուլթանական կեանքը հոսում է սովորական եղանակով, գործը շարունակում է, միայն տարւայ սկզբում՝ յունուար 12-ին ոստիարանակ Հայերը նորից խնդիր են ներկայացնում Պարսկաստանի հետ ունեցած առևտրի համար, որ մաքս չը վերցնուի: Այս գործը յանձնում է Կոմսից Կոլլէկտային՝ որոշում ու վճիռ ապուհամար: սակայն վճիռը յետաձգում է: Այս տարին յիշատակութեան արժանի դէպքերից մէկն էլ այն է, որ մարտ 24-ին Հայոց առևտրական ընկերութիւնը գանգատուեցաւ նորանոր աւազակութիւնների պատճառով: Այս անգամ Հայերը գանգատում էին Տաճիկների եւ Լեզգիների յարձակման վրայ թէ ի՛նչ եղաւ սրտ վախճանը՝ մեզ յայտնի չէ:

ԳԼՈՒԽ Ժ.

Այստեղից մենք արդէն պէտք է մեր միտքն եւ ուշքը ուղղենք մի նոր շրջանի վրա — դա գործարանական շրջանն է, որով սկիզբ դրուեցաւ իսկական եւ շահաւէտ առևտրի, կազմուեցան ընկերութիւններ, որոնք ոչ միայն ընկերական եղանակներով էին գործում, այլ եւ բաժնով (ակցիա):

Մենք արդէն խոսեցինք Ա. Բարսեղեանի հիմնած պաշտին գործարանի մասին: Զուգայեցիք որոշեցին հետեւիլ Բարսեղեանի օրինակին եւ Պետերբուրգում բնակող Զուգայեցի Աւետիս Բորոսեանը Պետերբուրգի վաճառական Լիարեխ օտարազգու հետ ընկերանալով՝ դիմեց ոստայ արքունիքին եւ խնդրեց իրաւունք Աստրախանի նահանգում մահուդի եւ այլ գործուածների գործարաններ բանալու: 1736 թ. 23-ին օգոստոսի կառավարիչ Սենատը թոյլատուութեան հրամանը տուեց: Սրանով հիմնական գործ էր սկսում եւ այս անգամ արդէն ոստայ արքունիքը հոգ տարաւ այդ բանի համար. նոյն տարւայ դեկտեմբեր 20-ին կառավ.

Սենատը մի հրահան զրկից Աստրախան, որով պատու իրում էր, բոլոր հայ առևտրականներին, որոնք բնակում են Աստրախանում, մոռնել սեղական առևտրականութեան ցուցակները եւ առևտրական մի քանի հարցերի համար էլ ենթարկել սեղոյն վաճառապետին: Սա էլ մի սեղակ արածնութիւն էր, որով պետութիւնը նրանց ուզում էր ր հոգատակների հետ հաստար ճանաչել:

Այս մի եւ նոյն ժամանակ Պետերբուրգում մեծ գեր էր խաղում Զուգայեցի հայ վաճառական Ղուկաս Երրուանեանը: Երրուանեանը մի քանի տարի սպորանք բերելով Պարսկաստանից, շնորհիւ պատահական աւազակների՝ մեծ վնասներ էր կրել: որովհետեւ Պետրոս Մեծի ժամանակ որոշուած ընթացակից պահապանները (կոնսոյ) այլ եւս գոյութիւն չունէին: Ղուկաս Երրուանեանը մեծ ծրագիրներ ունէր, ուստի եւ նախ եւ առաջ սպասնովութիւն էր պահանջում եւ դիմեց պետութեան, որ՝ առևտրականներին ուղեկցելու համար քսան մարդուց բաղկացած պահապան խումբ տան: 1732 յունիս 8-ին Սենատը՝ Աննա Իվանովնա կայսրուհու կամքի համաձայն կարգադրեց յարգել յիշեալ Երրուանեանի խընդիրը: Այս Ղ. Ե. 1740 ին յունուար 8 ին իրաւունք ստացաւ՝ Վասիլիսկի կղզիների վրայ, որտեղ ինքն էր բնակում, եկեղեցի հիմնելու: 1740-ին սեպտեմբեր 17-ին Ղ. Ե. իր ընկերները հետ (յիշուած են կզբ. Մակարեանները, որոնցից Բարսեղ Մակարեանը բնակու թիւն էր հաստատել Մոսկուայում, ժամանակին մեծ գեր էր խաղում եւ 1747 յուլիս 24-ին ոստահպատակութիւն ընդունեց: որի համար եւ առանձին արածնութիւններ ստացաւ. յիշուած է եւ Աստրախանի բնակիչ Ստառածատրեանը)՝ հետեւեալ բովանդակութեամբ խնդիր ներկայացրեց. «Անցեալ 1710 թ. մեր պապ հայազգի Սափար Բարսեղեանը իրաւունք ստացաւ, որ թերեք գետի ափերին եւ կազակների գիւղաքաղաքներում գործարաններ բանայ, եւ սորա համար էլ սրոշուած էր սեղ եւ արուած էին նրան կարեւոր թուով մարդիկ . . . եւ այլ առանձնաշնորհութիւններ, որի համար էլ կազանի Վոեվոդա Ապրաքսինին հրովարտակ էր տուած, իսկ 1718 թ. մեր պապին տրուած բարձրագոյն հրովարտակ մետաքսէ գործարաններ բանալու համար . . . եւ այլն . . .» խնդրում էին «Տալ սեղ Աստրախանում եւ Ղզլար բերդի մօտ, որպէս զի շերամասրահ բանան, բրինձ ու բամբակ ցանեն եւ մի քանի տարի առանց մաքս վճարելու արդիւնաբերին, բացի այս Աստրախանումն էլ թոյլ տալ բանալու մետաքսի եւ բամբակի գործարաններ, թէ արատահմանից եւ թէ Պարսկաստանից էլ բերել մետաքս եւ գործիքներ այդ գործարանների համար, առանց մաքս վճարելու . . .»

Այս խնդրի պատասխանը տրուեցաւ 1741 յունիս 15-ին շնորհած բարձրագոյն արածնագրով յանուն Ղուկաս Երրուանեանի եւ Ընկ., ուրով պատու իրում էր Աստրախանում եւ Ղզլարում գրադուել շերամա-

բուծութեամբ, ցանել, բրինձ եւ բամբակ, հիմնել գործարաններ եւ պատրաստել մետաքսէ, կիսամետաքսէ ու բամբակէ գործուածքներ եւ ՚ի վաճառ հանել :

Ղուկաս Շիրուանեանը ժամանակի ընթացքում մեծ առեւտուր սկսեց արասահմանի հետ : Նրա գործարանի գործուածքները նոյն իսկ Հոլանդիա, Շվեդիա եւ Ֆրանսիա էին արտահանուում, իսկ Գերմանիայում նա իր գործուածքները փոխում էր չաքարի, գոյների, հայելիների հետ, եւ այս բոլորն ուղարկում Պարսկաստան, որ տեղ փոխում էր մետաքսի ու ահնեղէնի հետ : Ղ. Շիրուանեանը չուտով կարիք զգաց աւելի ընդլայնելու իր գործը, որպէս զի կարող լինի պատուէրներին գոհացում տալու, եւ 1752 թ. սեպտեմբեր 27 ին թոյլտուութիւն ստացաւ թթենիների նոր անտառներ անկելու եւ շերամապահութիւնը առաջ տանելու : Շիրուանեանները վերջը Մոսկուա տեղափոխուեցան, ուր նոյնպէս գործարաններ հիմնեցին : Մեզ յայտնի չէ կա՞ն այժմ նրա ժառանգները թէ ոչ :

1749-ից Հայերը մի ուրիշ քաղաք էլ ընտրեցին որպէս կեդրոն առեւարի :

Մենք մինչեւ այժմ չը յիշեցինք կազանը, որովհետեւ չունինք այդ մասին յիշատակութիւններ, բացի այն հասարկութեան ակնարկներից, որոնք պատահում են մեր ունեցած ազբիրների մէջ : Այդ ակնարկներին նայած, Հայերը 1626 թ. դեռ առաջ էլ կազանի հետ առեւտրական յարաբերութիւն են սկսել եւ դա շարունակուել է, ՚ի հարկէ ընդհատումներով, նոյն իսկ մինչեւ մեր ժամանակները : Սակայն 1749 ից արդէն այդ ճանապարհը սովորական է եւ Յարութիւն Նազարեան Ջուղայեցին, որ կազանում իր ընկերների հետ առեւտուր էր անում, այն անգամ փորձում է ապրանք տանելու նաեւ Օրէնբուրգ, նոյն տարւոյ օգոստոս 3-ին նա իրաւունք սահմայով՝ անցաւ Օրէնբուրգ :

Ռուս առեւտրականներն առհասարակ դժգոհ էին, որ առեւտուրը համարեա օտարների ձեռքին էր, նրանք տեսնում էին թէ ինչպէս կամաց կամաց ռուսական քաղաքներում բուն էին դնում Հայերը, որոնք նըրանց առեւտով խլում էին ամեն ինչը ձեռքից, էլ կազան, էլ Օրէնբուրգ, էլ Նարվա եւ մի ս քաղաքները բոլորն էլ լցուած էին Հայերով եւ նրանք բացի իրենց բերած ապրանքից մի նոր սեսակ առեւտուր էլ էին ստեղծել, այդ այն էր, որ արասահմանից բերած ապրանքը օրէնքի համաձայն միայն ռուսահպատակներն ունէին իրաւունք գնելու, իսկ Հայերը պէտք է իրանք գնային արասահման եւ բերէին իրենց համար, եւ այդ դէպքում նրանց իրաւունք էր տրուում Պարսկաստան տանելու, սակայն գտնուեցան ճարպիկ Ջուղայեցիներ, որոնք սկսեցին միանուագ գնել օտարների բերած ապրանքը եւ մասամբ Ռուսաստանում ծախել, մնացածն էլ Պարսկաստան տանել :

Մի օր էլ բացուեցու ամեն ինչ եւ ահա ինչպէս. Մակարեան եղբայրների գործակատարները, որոնք գնել էին Գերմանիայից բերած ապրանքը՝ ընդհարուեցան — մի ինչ որ թիւրիմացութեան պատճառով — մոսկուայի վաճառական Պետրովի հետ : Այդ տեղ մեծ աղմուկ ծագեց, բանը ձեռքին հասաւ եւ ոուս մոսկովիներէ մի խումբ յարձակուելով նրանց վրայ Պետրովի առաջնորդութեամբ, ձեռեցին Հայերին, որոնք ստիպուած եղան բողոքելու : Երևի այդ բողոքի եւ ձեռքի հետեւանքն էր, որ 1756 փետրուար 1-ին Սենատը հրամայեց չը թոյլ տալ պարսկահպատակ Հայերին եւ Ասիայի ա՛յլ ազգութեան առեւտրականներին, որ օտար երկրացիների Ռուսաստան բերած ապրանքը գնեն, որովհետեւ մաքսային օրինագիրքը չէ թոյլ տալիս :

Ինչքան էլ ոուս առեւտրականները ճնշումներ գործ գնէին, այնուամենայնիւ պարսկահայերը շահագործութեան նորանոր աղբիւրներ էին բաց անում : Նրանք գիտէին ձիւռ յարգը, Պարսկաստանը այնպիսի երկիրներէն էր, որ տեղ արաբական նմոյցների մեծ առեւտուր կար : Հայերը Ասորսիանի անապատներում նկատել էին ձիւռ լաւ տեսակներ, մանաւանդ կաղակների ձիւրը, որոնք մասամբ մօրէն արաբական են, եւ ահա մտող ռուսացի ձիւրի առեւտրով զբաղուել : Հիւրասիրող Պարսկաստանն ու բախ էր, բայց Ռուսաստանից առանց թոյլտուութեան դուրս տանելն էլ անկարելի էր : Այս տեսակի առեւտրին սկիզբ դրին Ս. Պետերբուրգի երկրորդ կարգի քաղաքացի (մէչչանին) Ապահանցի Իսախանի որդիք Մանուէլ եւ Աստուածատուր Նազարէթեանները, որոնք 1757-ին խնդրեցին ռուսաց արքունիքից թոյլ տալ իրենց Ասորսիանի անապատներում ձիւր գնելու, եւ որոշեալ մաքսը վճարելով ուղարկել Պարսկաստան, որի փոխարէն նրանք խոստանում էին այնտեղից ոսկի ու արծաթ բերելու : Այս Իսախանեաններից մէկը 1758 նոյեմբեր 19-ին Պարսկաստանում նոր առեւտրական ընկերութիւն հիմնելու թոյլտուութիւնը խնդրեց, եւ այդ ընկերութեան կառավարիչ կամ վերատեսուչը պէտք է լինէր Ֆէօդոր Կօրեանովը, որ ինչպէս երեւում է՝ Ռուս պէտք է եղած լինի : 1761-ին այս խնդիրը նորից արձարձուեցաւ, եւ փետրուարին իրաւունք արուեցաւ, սակայն հետեւանքը մեղ անյայտ է : Մանուէլ Նազարէթեանն էլ ինչպէս թոյլտուութիւն 4000 փայով ակցիոնարական ընկերութիւն հիմնելու, միայն 150 բուրլի արժողութեամբ, Նա 1758 յունիս 15-ին թոյլտուութիւն ստացաւ :

Մի ուրիշ մեծ առեւտրական տուն, որ գործում էր Մոսկուայում, Ջաքարեա Եանրիմանեանց էր (Մպահանցի) : Աս ունէր Մոսկուայում սեպհական մետաքսագործարան, որ տեղ իտալական եւ պարսկական մետաքսէ գործուածքներ էր պատրաստում, եւ որովհետեւ նորանոր մեղեկաներ էր բերել տալիս, ուստի եւ 1756-ին խնդրեց պետութիւնից,



որ այդ մեքենաներից մաքս չը վերցնեն : Սենատը ապրիլ 2-ին յայտ-  
նեց մաքսաաներին , որ այնուհետե գործարանների համար բերած մե-  
քենաներից մաքս չը վերցնեն :

Այնուհետե անուտուրի շրջանն աւելի լայնանում է եւ 60-ական  
թուականներից պետութիւնն արդէն ինքն էլ նիւթագէտ նպաստում է  
անուտուրին : 1763-ին Սափարեանի թոսներից թէ որդիներից մէկը իրա-  
ւունք ստացաւ Աստրախանի նահանգում այգիներ անկելու եւ մի եւ նոյն  
ժամանակ պետութիւնը պարտք տուեց 10 հազար թուրքի , 10 տարի ժա-  
մանակով , առանց ասկոսի : Սափարեանին այդ նպասակի համար թոյլ  
էր արուած գիւղեր գնելու , միայն այդ գիւղերի մեծութիւնն էլ ու-  
րոշուած էր , որ գնուած գիւղը պէտք է միմիայն 300 աղամարդ ունե-  
նար եւ ոչ աւելի : Այս անդ մենք կարծում ենք , որ գիւղացիները պէտք  
է իբրեւ ճորտ լինէին :

1767-ին Ղալարցի հայ Աղաջանը իր ընկերներին հետ խնդրեց թուր-  
քութիւն վաճառելու համար սակասներով չիսխ (1) կոչուած գինի  
աւանելու Աստրախան եւ սեպտեմբեր 10-ին իրաւունք ստացաւ :

1768 յունիս 30-ին սուած բարձրագոյն նրովարտակով հայ ժողո-  
վըրդին նորանոր իրաւունքներ էին տրուած եւ մի տեսակ հրատէր Ռու-  
սաստանում ընդ միշտ բնակուելու համար : Այս նպասակին հասնելու  
համար առեւարի ազատութիւն էր արուած :

1771 թ. Ղալմուխները մեծ վնաս հասցրին Աստրախանցի Հայերին  
եւ Սենատին հրամայուեցաւ 1779 մարտ 11-ին , որ Աստրախանում փո-  
խաձուական գրամատուեն հիմնեն , որպէս զի առեւտուրը վերակենդա-  
նանայ , որը 1771-ից արդէն դադարել էր եւ չափից գուրս ընկել :

1779 նոյեմբերի 14-ին շնորհեցաւ բարձրագոյն հրովարտակ յանուն  
Ղրիմեցի Հայերի , որոնք հիմնեցին Նոր-Նախիջևանը : Նոր Նախիջև-  
անից յետոյ հիմնուեցաւ եւ Գրիգորիո-Պօլխը եւ այլն , որոնք նոյն  
պէս մեծ զարկ տուին վաճառականութեան :

1783 թ. մարտ 30 ին իշխ. Պօտեօմկիներն , որը գեներալ-Գուբեր-  
նատոր էր , հրամայուեցաւ հայկական դատարաններ հիմնելու : Մի եւ  
նոյն ձեւի դատարաններ հիմնուեցան նաեւ Աստրախանում : Բացի այս ,  
Աստրախանի հայ վաճառականների խնդրանք 1786 մարտ 18-ին իրա-  
ւունք արուեցաւ այսպէս կոչուած Խորհրդի դասարաններում ներկայա-  
ցուցիչներ ունենալու :

Վաճառականութեան հետ զուգընթացաբար Հայերն իրենց ուշա-  
դուրութիւնը կեդրոնացրին նաւային հաղորդակցութեան վրայ , ձիւշտ է ,  
վաղուց արդէն նրանք կառուցեց ծովի վրայ նաւեր ունէին , սակայն օ-

(1) Նոր , դեռ չը թթուած գինի , այն որ կախէթում « մաճար » են ասում :

րինական ձեւ տալու համար հարկաւոր էր թոյլտուութիւն , մանաւանդ  
որ նրանց նաւերն առանց թոյլտուութեան չէին կարող սուսական ծո-  
վափնեայ քաղաքներն այցելել : Երբ Պետրոս Մեծը կասպից ծովի ափերն  
իր պետութեան հետ միացրեց , արդէն ակներեւ կերպով մէջ բերուե-  
ցաւ եւ նաւային հաղորդակցութեան գործը : Թէպէտ յիշատակում են  
առեւտրական նաւերի մասին , որոնք Հայերին են պատկանելիս եղել ,  
բայց դրանք պէտք է աննշան նաւեր եղած լինին եւ ոչ թէ Պետրոս  
Մեծի շինել տուած « Օրեօլը » , որ այրուեցաւ Բազինի յարձակման ժա-  
մանակ :

Առաջին կանոնաւոր նաւագնացութիւնն « կառն » իմ կար իքով պէտք  
է հայ վաճառական Առդոմոնեանը լինի , որ խնդրեց ազատել իրեն ու իր  
ընտանիքին այլ եւ այլ տուրքերից , եւ 1758 նոյեմբեր 19-ին էլ խընդ-  
րեց թոյլ տալ որ կասպից ծովի վրայ երկու առեւտրանաւ բանեցնէ :  
1761-ին յուլիս 25-ին կա՛մ այդ խնդիրը կրկնուեցաւ եւ կամ թէ վերջ-  
նական լուծումն ստացաւ :

1760 թ. մի հարց ծագեց :

Աստրախանում գոյտ թիւն ունէր Գրաֆ Վօրօնցովի նաւային ընկե-  
րութիւն , որը կասպից ծովի ձախ (°) ափերի վրայ նաւեր էր բանա-  
ցնում : Գրաֆ Վօրօնցովը մի բողոք ներկայացրեց Սենատին Աստրա-  
խանի նահանգական դիւանի վրայ ( կանցելիարիս ) , որ ի մէջ յիշեալ  
դիւանին մեղադրում էր 1759 թ. յուլիսին արձակած մի կարգադրու-  
թեան համար , եւ այդ կարգադրութիւնն էլ հետեւեալն էր . Դիւանը  
թոյլ էր տուել Աստրախանի Մովային նաւայնացական Ընկերութեան եւ  
հայ վաճառականներիցն էլ Մաքսիմ Տատուշեին (°) , Յովհաննէս Բու-  
նիաթեանին , Ռէվազ Չալեանին ( Չալիեին ) եւ ընկերներին որ Աստ-  
րախանից նաւեր ուղարկեն Մազիշյախ եւ ձախ ափի վրայ եղած միւս  
ծովափնեայ քաղաքները : Երանք էլ 5 առեւտրանաւ էին ուղարկել զա-  
նազան տեսակ ապրանքով , նոյն տարւայ մարտ 30-ին Սենատը բացատ-  
րեց , որ ձախ ափը Գր. Վօրօնցովի ընկերութեանն է տուած եւ իր բա-  
ցատրութեան 19-րդ յօդուածում ասուած էր . « Յիշեալ դիւանին հրամա-  
նագրել , որ կասպից ծովի ձախ կողմի վրայ ոչ ոքին չը թոյլ տան ա-  
ռեւտուր անելու » :

Մեզ յայտնի հայ նաւատէրերից մէկն էլ Աստրախանի բնակիչ Գրի-  
գոր Կամպանովն է : Սա Մոսկուայում եւ Ֆրանսիոյ գիւղում մետաքսի  
գործարաններ բացեց եւ վերջը խնդրեց պետութիւնից թոյլտուութիւն  
կասպից ծովի վրայ առեւտրանաւեր բանացնելու : 1769 նոյեմբեր 17-ին  
Սենատն առհասարակ Աստրախանցի Հայերին յայտարարեց նաւային ըն-  
կերութիւններ հիմնելու եւ նաւերի թիւը շատացնելու :

Այժմ անցնենք մեր գործի վերջաբանին :

Մենք հայ վաճառականական ցուցակը կնքում ենք Պողոս կայսեր հրովարտակով :

Պողոս կայսեր օրով Աստրախանցիք մեծ առևտուր ունէին , մանաւանդ որ Եկատերինէ Բ. կայսրու հին բուրձի փոխել էր Հայերի վիճակը , մի շարք արտօնութիւններ էր առել : Նոյն էր արել եւ Պողոս կայսրը : Կայսրը պահանջեց իրեն մի տեղեկագիր ներկայացնել եւ մանրամասնօրէն ցոյց տալ թէ ի՞նչ հիմուքներն վրայ է դրուած Հայերի ձեռքին եղած առևտուրը : Կայսեր ներկայացուցաւ 12 կէսերից բաղկացած մի տեղեկագիր : Իսկ մինչեւ այդ տեղեկագիրը կայսրը մի հրովարտակ շնորհեց կառավարիչ Աննաթին , որը նոյնու թեամբ թարգմանում ենք այսանդ :

(Չկնի կայսերական ընդարձակ տխուրտի .)

«Չիջանելով Աստրախանում առևտուր անող հայ հասարակութեան խնդրին , որոնք դրուած են ի թիւս առևտական վաճառականների : Ամենազորմած արար հրամայում ենք վերագարձել նրանց այն իրանները , որ չնորհել են մեր նախորդներն այդ հասարակութեան , եւ այդ հիման վրայ նրանց եւ իրենց միւս հայրենակիցներին համար բարձրագոյն հրամայում ենք . առաջին՝ թոյլ տալ նրանց , համաձայն առևտրական օրինաց մաքսը վճարելով՝ միւս օտարերկրացիներին նման առևտուր անել : Երկրորդ՝ ընդունել նրանց որպէս ժամանակաւոր հոստակ եւ ոչ մշտական : Երրորդ՝ չըստիպել նրանց գրուելու ի թիւս ուր առևտրականների եւ մի եւ նոյն ժամանակ այդ կողմից ազատել տուրքերից ու պարտաւորութիւններից : Չորրորդ՝ նրանց , բացի քրէական գործերից , դատել Աստրախանում առևտուր անող Ասիացոց ընդհանուր գաղափարով : Հինգերորդ՝ որպէս զի նրանց ընտանեկան կեանքում զժուարութիւններ չտալանան , ազատել նրանց կողմից եւ սրա փոխարէն դրամական տուրք վերցնելով : այլոց վարձել այդ գործի համար » :

Տուած է Ս. Պետերբուրգում  
1797 թ . փետրուար 20-ին .



Վ Ե Ր Ձ

Բացում է բաժանորդագրու թիւն

## ԴԻՏԱԿ

ԺԱՂՅՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

Տասը բաժանորդ գտնողը՝ ինքը ձրի կը ստանայ Դիտակն իւր  
յուեւուածով:

Բաժանորդագրու ե

Ռուսաստան 2 բուրի | Արաստանի ման 8 ֆրանկ

Հասցէն՝ Tiflis (Caucase) rédaction « Ditak ».

Ծախչում է թիֆլիսի գրապահանքների մոտ

Կ. Յ. Բամաջեանի

## ԱՆԻԻ ՅԻՇԱՏԱԿ

Այբով Աննիի աւերակների 24 գեղատիպ պատկերներով, Աննիի  
յատակազիծ քարաէզով եւ Աննիի մասին պատմական-տեղագրական  
ծանօթութիւններով (հայերէն եւ ֆրանսերէն)

Գինը՝ 80 կոպ.

« Ազգային գրադարան



NL0222999

54.983